ՀԻՆ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ՆՈՐ «ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ». ՌՈՒՍ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՒ «ԱԼԲԱՆԱ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ» ՍՊԱՍՈՒՄՆԵՐԸ ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍ ԱՌԱՔԵԱԼԻՑ

Հրանոյշ Խաչատեան

2024 թ. Օգոստոսի 19-ին Ռուսաստանի Դաշնութեան նախագահ Վլադիմիր Պուտինը, այցելելով Բաքու, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ միասին այցելեց Ռուս ուղղափառ եկեղեցու Բաքուի եւ Ադրբեջանի մայր աթոռ հանդիսացող «սուրբ իւղաբեր կանանց» (Святых жён-мироносиц) տաճար, որտեղ թեմի եպիսկոպոս Ալեքսին (Սմիռնով) նրանց պատմեց XX դարի սկզբին հիմնադրուած եւ վերականգնումից յետոյ 2003 թ. տաճարի վերաբացման պատմութիւնը: Նա տեղեկացրեց, որ տաճարում գտնւում է Բաքուի հովանաւոր Բարթուղիմէոս առաքեալի մասունքով տապանակ[1]: «Ըստ աւանդութեան,- պատմել է Բաքուի եւ Ադրբեջանի թեմի եպիսկոպոս Ալեքսին երկու երկրների նախագահներին,- այդ քարոզիչը տանջալի նահատակութեան է ենթարկուել այստեղ Բաքու քաղաքում, Девичья башня [ադրբեջաներէն՝ «Qız Qalası», հայերէն՝ «Աղջկայ բերդ» – Հ. խ.] կոչուող յուշարձանի վայրում: Այնտեղ մինչեւ յեղափոխութիւնը [1920 թ. բոլշեւիկեան յեղաշրջումը – Հ. խ.] մի մատուռ (часовня) կար Սուրբ Բարթուղիմէոսի պատուին: Բաքւում գոյութիւն ունեցած հին աւանդոյթով մարդիկ Բարթուղիմէոսի յիշատակի օրը հաւաքուել են այստեղ, աղօթել: Այդ պատճառով Սուրբ Բարթուղիմէոսը համարւում է Բաքու քաղաքի եւ ողջ Ադրբեջանի, ինչպէս նաեւ այստեղ ապրող բոլոր մարդկանց հովանաւորը»[2]:

Սա միանգամայն նոր «տեղեկութիւն է քրիստոնէութեան պատմութեան մէջ: Երբեք որեւէ աղբիւր որեւէ լեզուով չի յիշատակել Բաքւում կամ Ադրբեջանի տարածքում Բարթուղիմէոսի, կամ առհասարակ որեւէ առաքեալի նահատակութեան մասին: Առաքեալների գործունէութեան շրջանում առհասարակ «Բաքու» անունով բնակավայրի մասին որեւէ յիշատակութիւն չկայ: XIX-XX դդ. որեւէ տեղեկութիւն չի եղել նաեւ Բաքւում Ս. Բարթուղիմէոսի յիշատակին հաւաքուելու որեւէ աւանդոյթի կամ մատուռի գոյութեան մասին:

Հասկանալի է, որ քրիստոնէութեան առաքելական շրջանի առաջին դարի պատմութիւնը գրաւոր տեքստերով սկսել է գրանցուել շատ աւելի ուշ, III դարից, գլխաւորապէս IV-V դարերում, եւ յետագայում համալրուել է նոր մանրամասներով: Դրանց բուն աղբիւրը նախ եւ առաջ քրիստոնէական տարածքում շրջանառուող բանաւոր պատմութիւններն էին, որոնք էլ դարձել են այս կամ առաքեալի մասին տեղեկութիւնների հիմնաւորումների գլխաւոր նիւթը: Հասկանալի է նաեւ, որ կոնկրէտ առաքեալների գործունէութեան մասին տեքստային հիմնական նիւթը սնուել է այդ կոնկրէտ առաքեալների մասին նրանց գործունէու-

1 Владимир Путин и Ильхам Алиев посетили кафедральный собор Святых жён-мироносиц в Баку // http://kremlin.ru/events/president/news/74890

2 Ильхам Алиев лично прокатил Владимира Путина на Mercedes по «Белому городу» в Баку // https://www.youtube.com/watch?v=59m2jY1bekw, 0.50-1.24

թեան տարածքների/երկրների/ժողովուրդների միջավայրերում շրջանառուած բանաւոր պատմութիւններից: Սակայն ոչ միայն կայունացած կամ չկայունացած աւանդոյթ, այլեւ բանաւոր պատմութեան որեւէ յիշողութիւն որեւէ առաքեալի նահատակութիւն Ադրբեջանի տարածքում կամ Բաքու քաղաքում չեն յիշել/յիշատակել եւ երբեք որեւէ մէկի կողմից չեն գրանցուել:

Կոնկրէտ Բարթուղիմէոս առաքեալի մասին քրիստոնէական աւանդականացած պատմութիւնը սկսել է ձեւաւորուել III դարից, քրիստոնէութեան պատմութեան՝ յունա-հռոմէական հեղինակների շարադրանքներում, V դարից՝ նաեւ հայկական, ասորական եւ այլ հեղինակների երկերում: Վաղ շրջանի քրիստոնէութեան պատմութեանն անդրադարձած յունա-հռոմէական, ասորական հեղինակները Բարթուղիմէոսի քարոզչութեան շրջանակներից այս կամ այն չափով յիշատակում են Հնդկաստանը[3], Աֆրիկան, Փոքր Ասիան եւ Մեծ Հայքը: Հայկական վաղ շրջանի աղբիւրներում Բարթուղիմէոսի մասին տեղեկութիւնները գլխաւորապէս Մեծ Հայքի բնակչութեան մէջ տարածուած եւ հայ ժողովրդի յիշողութիւններն են: Այդ նիւթերում եւս ո՛չ Ադրբեջանի (որի անունը մինչեւ XIX դ. վերջերը յայտնի չէր), ո՛չ Բաքու քաղաքի (որի անունը նոյնպէս առաջին հազարամեակում անյայտ էր) տարածքում Բարթուղիմէոսի գործունէութեան եւ նահատակութեան մասին որեւէ յիշատակութիւն չկայ:

Հայկական աւանդոյթում Բարթուղիմէոս անունով յայտնի առաքեալը հին յունարէն՝ Βαρθολομαῖος, լատիներէն՝ Bartholomaeus, ռուս ուղղափառ եկեղեցում՝ Варфоломей) V դարից սկսած միշտ յիշատակուել եւ ընդունուել է որպէս առաջին դարում Մեծ Հայքում գործած ու նահատակուած քարոզիչ: Քրիստոնէական առհասարակ, եւ հայկական՝ մասնաւորապէս, աւանդոյթում Յիսուս Քրիստոսի 12 առաքեալներից Թադէոսը եւ Բարթուղիմէոսն էին այն առաքեալները, ովքեր քրիստոնէութիւնը Հայաստան՝ Մեծ Հայք բերեցին, եւ Մեծ Հայքում էլ նահատակուեցին: Հէնց այդ պատճառով է Հայաստանի քրիստոնէական եկեղեցին կոչւում Առաքելական Սուրբ Եկեղեցի: Ըստ գրաւոր տեղեկութիւնների՝ այլ առաքեալներ եւս Հայաստանում եղել են, կամ՝ Հայաստանով անցել են, բայց Հայաստանում առաքելական գործունէութիւնը վերագրւում է գլխաւորապէս Թադէոսին ու Բարթուղիմէոսին: Ընդ որում, Հայաստանը եղել է նրանց գործունէութեան վերջին հանգրուանը, քանի որ երկուսն էլ հէնց այստեղ են նահատակուել:

Փորձենք տեսնել, թէ ինչպէ՞ս է Բարթուղիմէոսի՝ Բաքու քաղաքում նահատակուած լինելու մասին «տեղեկութիւնը», կամ, որ աւելի ճիշտ կը լինի ասել՝ յայտարարութիւնը հիմնաւորում Ռուս Ուղղափառ Եկեղեցին:

2004 թ. հրատարակւում է Ռուս Ուղղափառ Եկեղեցու Մոսկուայի Պատրիարքութեան Բաքուի թեմի հոգեւորական Ա. Նիկոնորովի «Քրիստոնէութեան պատմութիւնը Կովկասեան Ալբանիայում» վերնագրով աստուածաբանութեան թեկնածուի կոչման ատենախօսական թեզը[4], որում առկայ է «Առաքելական շրջան» բաժին, այդ

3 Հնդիկներին յաճախ շփոթում էին եթովպացիների հետ՝ Հնդկաստանն ու Եթովպիան համարելով մէկ երկիր: Տե՛ս The Cambridge Dictionary of Christianity, Edited by *Daniel Patte* (Series: Contrapuntal Readings of the Bible in World Christianity), Wipf & Stock Publishers, 2021, Vol. 2, p. 909.

4 **Иеромонах Алексий (Никоноров),** *История христианства в Кавказской Албании*: Диссертация на соискание ученой степени кандидата богословия: Научный руководитель: профессор Б.А. Нелюбов, Сергиев Посад, Троице-Сергиева Лавра, 2004 г. // https://baku-eparhia.ru/history/albania/ (այցելութիւնը՝ 12.06. 2025):

թում՝ «Բարթուղիմէոս առաքեալի քարոզչութիւնը»: Այս բաժինը սկսւում է «Տասներկուսից մէկը՝ Բարթուղիմէոս առաքեալը, եկեղեցական աւանդութեան համաձայն, Քրիստոսի հաւատը քարոզել է Կովկասեան Ալբանիայում» յայտարարութեամբ: Հեղինակը գերադասում է չասել, թէ ի՞նչ «եկեղեցական աւանդութիւն» է խօսում կամ գրում Կովկասեան Ալբանիայում Բարթուղիմէոսի գործունէութեան մասին: ... «Բարթուղիմէոս առաքեալը, վարքի համաձայն («վարք» բառի վրայ նա յղում է անում XVIII դ. ռուսական Յայսմաւուրքը կազմած Դմիտրի Ռոստովսկուն՝ Свт. Димитрий Ростовский. Жития святых. Козельск, 1992, Кн. X (июнь), С. 203-211 [Դմիտրի Ռոստովսկի, Սրբերի վարքերը, Կոզելսկ, 1992, Գիրք X (Յունիս), էջ 203-211]: Նիկոնորովը աւելորդ չի համարում «տարակուսել», որ «յայտնի չէ, թէ որտեղից է Դմիտրի Ռոստովսկուն յայտնի Ալբանիայում առաքեալի գործունէութեան մասին: Հնարաւոր է, որ իր աշխատանքը կազմելիս հեղինակը տիրապետել է Բարթուղիմէոսի մասին իրեն հասած ինչ-որ աւելի հին պատմութիւններին: Այսօր եկեղեցագիտութիւնը այդպիսի աղբիւրներ չունի» (ընդգրում. «Откуда святитель Димитрий черпал сведения об обстоятельствах проповеди Апостола в Албании, неизвестно. Возможно, что при составлении своего труда автор обладал дошедшими до него более древними сказаниями об апостоле Варфоломее. На сегодняшний день такими источниками церковная наука не располагает»): Ստորեւ կը տեսնենք, որ Դմ. Ռոստովսկու կազմած Յայսմաւուրքը Ալբանիայում Բարթուղիմէոսի գործունէութեան մասին որեւէ տեղեկութիւն չունի.

«Հնդկաստանում Աւետարան քարոզելուց յետոյ գնաց Կովկասեան Ալբանիա»,- շարունակում է ատենախօսութեան հեղինակ Նիկոնորովը՝ գերադասելով լռել, թէ որտեղի՞ց է այս տեղեկութիւնն իրեն յայտնի: «Յայտնի է, որ հնում Հնդկաստանի եւ Ալբանիայի միջեւ մերձաւորագոյն կրօնական եւ առեւտրական կապեր կային»,- երրորդ յայտարարութիւնն է անում նա, կրկին չասելով, թէ ո՞ւմ եւ որտեղի՞ց են յայտնի քրիստոնէական առաջին դարում «Հնդկաստանի եւ Ալբանիայի միջեւ մերձաւորագոյն կապերը»: Չորրորդ յայտարարութեամբ Ա. Նիկոնորովը «տեղեկացնում է», որ Բարթուղիմէոսը Հնդկաստանում հաւանաբար տեղեկանում է Կովկասեան Ալբանիայում զրադաշտականութեան գոյութեան մասին այնտեղ գնացած ուխտաւորներից (՞՞ – Հ. Խ.) եւ իր քարոզչութեան համար ընտրում է Կովկասեան Ալբանիան:

Բացարձակապէս ոչնչով չհիմնաւորուած այս յայտարարութիւններից յետոյ երիտասարդ աստուածաբանը միանգամից թռիչք է կատարում մ.թ. XIII դ. հերթական կեղծիքը հրամցնելով, թէ ինչպէս XIII դարի «սիւնեցի» հեղինակ Ստեփանոս Օրբէլեանը գրում է, որ «Բարթուղիմէոսի առաքելական գործունէութիւնը շատ սերտօրէն կապուած էր Ալբանիայի Սիւնիքի շրջանի հետ» (Օրբէլեանը «Ալբանիայում» Բարթուղիմէոսի մասին ոչինչ չի գրել – Հ. Խ.) գրչի մի հարուածով «ալբանացի եւ ալբանական» դարձնելով հայ պատմագիր Օրբէլեանին ու Մեծ Հայքի Սիւնիք նահանգը, եւ իր այս ցանկութեան համար յղելով «հայ պատմագիր Մովսէս Խորենացուն, ալբանացի պատմագիրներ Ստեփան Օրբէլեանին եւ Մովսէս Կաղանկատուացուն», չմոռանալով որպէս գլխաւոր հիմք «օգնութեան կանչել» աղբիւրների կեղծման հարուստ փորձ ունեցող Զ. Բունիաթովին՝ ի դէմս նրա «Азербайджан в VII-IX вв., Баку, 1965, с. 78, 92-93, 100» (Ադրբեջանը VII-IX դդ., Բաքու, 1965, էջ 78, 92-93, 100) գրքի. Կարող է տարօրինակ թուալ, որ XXI դարում աստուածաբանութեան թեկնածուն յղում է հայ հեղինակներին՝ շրջանցելով XIII դարի հայ աստուածաբան, մեկնիչ, մատենագիր,

ադրբեջանական արդի «ալբանական պատմագրութեան» առաջամարտիկների կողմից ալբանական կարգուած Վանական Վարդապետին (1181-1251): Թւում է՝ ռուս երիտասարդ աստուածաբանը նրան առաջինը պիտի «նկատեր», քանի որ գործել է ժամանակակից Ադրբեջանում XX դարում ներառուած Արցախի տարածքում եւ գրել է հայերի քրիստոնէացման վաղ շրջանի I դարի, այդ թւում Բարթուղիմէոս առաքեալի մասին. «Աբգար թագաւորն յառաջ քան զխաչելութիւնն հաւատաց ի Քրիստոս եւ երանեցաւ ի նմա: Եւ երեք առաքեալ ունին Հայք ԲԺ-ից [12-ից]՝ զԹադէոս, զԲարթուղիմէոս եւ զՅուդայ Յակոբեան՝ *որ կայ յՈրմի քաղաք, որ է սեփական Հայոց»*[5]: *Հարց չկա՞յ, թէ ինչու որեւէ ակնարկ չկայ Ալբանիայում Բարթուղիմէոսի նահատակութեան մասին: Մեկ այլ թղթում Վանական Վարդապետը Հայաստանում առաքեալների գործունէութեան մասին մի փոքր աւելի ընդարձակ է խօսում.* «Ի մտին ի Հայք առաքեալքն Բարթուղիմէոս եւ Թադէոս եւ Յուդայ Յակոբեան. բայց Բարթուղիմէոս վասն այն եդի սկիզբն, զի ոմանք զԹադէոս եօթանասնից ասեն, եւ զԲարթուղիմէոս մին յԲԺ-ցն [12-ից]. Թադէոս, զոր Աւետարանն պատմէ թէ յառաջ կոչէր Ղեբէոս, եւ ի Տէառնէ անուանէալ Թադէոս: Յուդայ Յակոբեան՝ որ եւ սա՛ է յԲԺ-ից, վկայի եւ կայ յՈրմի քաղաք Հայոց»[6]: *Կրկին՝ ոչ մի խօսք Ալբանիայի եւ աղուանների մասին:*

Երիտասարդ ռուս աստուածաբանը չի խորշում կեղծել նաեւ «Սրբերի վարքի» XVIII դ. ռուս հեղինակ Դմիտրի Ռոստովսկու՝ Հայաստանում Բարթուղիմէոսի գործունէութիւնը ներկայացնող իրականում բարեխիղճ աշխատանքը՝ «Հայաստան» անուան փոխարէն գրելով «Ալբանիա»՝ *«Դմիտրին ներկայացնում է այդ ժամանակ Ալբանիայում տեղի ունեցող դէպքերը՝* Ալբանական երկրին իշխող Պոլիմիոսի դստեր բժշկութիւնը, *այլ հրաշքներ» իր կողմից աւելացնելով, որ այդ ժամանակ ոչ Ալբանիայում, ոչ Հայաստանում Պոլիմիոս անունով թագաւոր չի եղել.*

Ռուս Ուղղափառ Եկեղեցու Մոսկուայի Պատրիարքութեան Բաքուի թեմի հոգեւորական Ա. Նիկոնորովին, պարզւում է, յայտնի են նաեւ Բարթուղիմէոսի գործունէութեան մասին վաղ շրջանի լատինագիր հեղինակների տեղեկութիւնները, եւ նա նոյնիսկ գրում է այդ մասին. ըստ Հիպպոլիտոս Հռոմէացու վկայութեան (մօտ 222 թ.)՝ «Bartholomaeus, cum Indis praedicasset, eisque conscriptum a Mathaeo Evangelium exposuisset, crucifixus est et ipse, capite deorsum verso, Albani Magnae Armeniae urbe» [Բարթուղիմէոսը հնդիկներին քարոզելուց եւ Մատթէոսի աւետարանը ներկայացնելուց յետոյ գլխիվար խաչուել է Մեծ Հայքի Ալբան քաղաքում]. ըստ Դորոթէի վկայութեան (307-322 թթ.)՝ «Bartholomaeus... Indis praedicato Evangelio eisque dato Mathaei Evangelio, martyr obiit Carbanopoli Magnae Armeniae urbe» [Բարթուղիմէոսը, հնդիկներին քարոզելուց եւ Մատթէոսի աւետարանը նրանց տալուց յետոյ տանջալի մահ է գտել Մեծ Հայքի Կարբոնոպոլիս քաղաքում]. ըստ Սոֆրոնիոս Կիպրացու վկայութեան (390 թ.)՝ «Dormivit Albanopoli, oppido Maioris Armeniae» [Ննջել է Մեծ Հայքի Ալբանոպոլիս քաղաքում]. ըստ Նիկետաս Պափլագոնաեցու վկայութեան (մօտ 873 թ.)՝ «Contigit in guadam urbe Maioris Armeniae (quam Urbanopolin vocant) versari et caet...» [Նրան բաժին ընկաւ գտնուել Ուրբանոպոլիս անունով քաղաքում Մեծ Հայքում][7] *եւն: Ճիշտ է՝ Ա. Նիկոնորովն ուղղակի պատճենել է «Ռուսական Եկեղեցու*

5 *Վանական վարդապետին ասացեալ բան հաւատալի ազգիս մերում,-* Գիրք թղթոց. Մատենագրութիւն նախնեաց, Թիֆլիս, Տպ. Տ. Ռօտինեանց եւ Մ. Շարաձէ, 1901, էջ 534:

6 *Այլ բան է ասացեալ Վանական վարդապետին,-* Գիրք թղթոց, էջ 536:

7 **La Bigne M. de.** *Maxima bibliotheca veterum patrum et antiquorum scriptorum ecclesiasticorum.*

պատմութեան» հեղինակ, Մոսկուայի միտրոպոլիտ Մակար Բուլգակովի աշխատանքի համապատասխան հատուածը, որին անդրադարձ կը լինի ստորեւ: Սակայն նրա ատենախօսութեան ղեկավար պրոֆէսոր Բ.Ա.Նելիւբովը առնուազն պիտի զգուշացրած լինէր իր սանին, որ կեղծիքը եւ ուրիշի աշխատանքը պատճէնելը առանց հեղինակին յղելու գիտութեան մէջ համարւում է գրագողութիւն եւ անթոյլատրելի է:

Երիտասարդ Ա. Նիկոնորովն «անօգուտ չի համարել» նշել, որ որոշ հայկական աւանդապատումներով Բարթուղիմէոսը Հնդկաստանից յետոյ Աւետարանը քարոզել է Պարսկաստանում եւ Հայաստանում, բայց «իր տառապագին մահից առաջ» գնացել է Ալբանիա: Բնականաբար, Բարթուղիմէոսի «Ալբանիա գնալու» մասին գոյութիւն չունեցող «հայկական աւանդապատումների» աղբիւր չի յիշատակում: Ի վերջոյ նա «տեղեկացնում է», որ «Ալբան քաղաքը ժամանակակից Բաքուն է», չբացատրելով, թէ ե՞րբ, ինչպէ՞ս եւ ինչո՞ւ է Ալբանը «Բաքու» դարձել, աւելացնելով, որ Ալբանիայում Բարթուղիմէոս առաքեալի գործունէութեան մասին հնագոյն հեղինակների տեղեկութիւնների մասին իր «ռուսական եկեղեցու պատմութիւնը» գրքում գրել է նաեւ Մոսկուայի միտրոպոլիտ Մակար Բուլգակովը: Երիտասարդ ասուածաբանը իր այս յայտարարութեան հիմնաւորման համար առաջարկում է նայել Митр. Макарий (Булгаков). История Русской Церкви, М., 1994, Кн. I, С. 284 [Մակարի Բուլգակով, Ռուսական եկեղեցու պատմութիւն, Մոսկուա, 1994, գիրք I, էջ 184]:

Մակար Բուլգակովի աշխատանքի 1994 թ. հրատարակութեան էջ 184-ում ոչինչ չգտնելով՝ նայենք համապատասխան բաժինը՝ առաջին գրքի չորրորդ գլուխը՝ «Առաքելական քարոզչութիւնը Անդրկովկասում», որտեղ էջ 247-248 էջերում ուղղակիօրէն գրուած է՝ «Բարթուղիմէոս առաքեալը Հնդիկների մօտ ճամփորդելուց եւ նրանց եբրայերէն լեզուով Մատթէոսի աւետարանը թողնելուց յետոյ, բարի լուրը [բերեց] Մեծ Հայք եւ այստեղ Ալբան [Ալբանոպոլիս] քաղաքում, որի անունով ողջ մարդը կոչւում էր Ալբանիա, տանջալի մահ գտաւ. այսպէս են նրա մասին ասում III, IV եւ յետագայ դարերի բոլոր պատմութիւնները: Այս առաքեալի մասին աւելի հիմնաւոր աւանդութիւններից իմանում ենք, որ բազմաթիւ հրաշքներով ուղեկցուող նրա քարոզչութիւնը Մեծ Հայքում մեծ յաջողութիւն է ունեցել» (բնագրում՝ «Апостол Варфоломей после путешествия своего у индийцев, которым оставил Евангелие от Матфея на еврейском языке, благовествовал в Великой Армении и здесь, в городе Албане (Албанополисе), от которого вся область называлась Албанией, потерпел мученическую смерть — так гласят все краткие сказания о нем III, IV и последующих веков {247}. Из более же обстоятельных преданий о сем апостоле узнаем, что его проповедь, сопровождавшаяся многочисленными чудесами, имела в Великой Армении большой успех»): Խօսքը Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Աղբակ (հմմ. Ալբան) գաւառի եւ նրա կենտրոն Աղբակ քաղաքի մասին է, որը ոչ մի կապ չունէր հարաւային Կովկասի Ալբանիա կոչուող երկրի հետ: Մակարի Բուլգակովի համար Կովկասեան Ալբանիան ժամանակակից Դաղստանն է, ինչպէս գրում է նա իր աշխատանքի 1-ին մասի չորրորդ գլխի նախաբանում, 1994 թ. հրատարակութեան մէջ՝ էջ 241-ում (Албанию /нынешний Дагестан/):

Lugduni, 1677, part. 3, p. 265, part. 27, p. 408; *Corpus byzantinae historiae* |scriptorum|, 2nd ed., Venetiis, 1729-1733, 5, 349; **Hieronymus Stridonensis**, Opera omnia, Francofurti ad Maenum, 1684, part. 1, p. 171.

Հասկանալի է, որ Ադրբեջանի հեղինակների համար երիտասարդ ռուս աստուածաբանի այս ատենախօսութիւնը շատ սիրելի եւ անընդհատ յղուող գիրք է:

Զիսօսելով Ռուս Ուղղափառ Եկեղեցու Բաքուի թեմի այս հոգեւորականի բազմաթիւ այլ «մարգարիտների»՝ կեղծիքների մասին, անդրադառնանք նախ ռուսական «Յայմաւուրքին»՝ 1700-ականներին Դիմիտրի Ռոստովսկու կազմած «Четьи-Минеи»-ին («չեթիի» «կարդալու համար սահմանուած», եւ յունարէն μηνιαῖος /մինիէոս/ – ամսական): Սրանք գրքեր են, որոնցում առաջին անգամ կանոնակարգուած ներկայացուած են Ռուս Ուղղափառ Եկեղեցու կողմից ճանաչուած սրբերի վարքերը՝ կենսագրութիւնները, գործունէութիւնը, եւ դասակարգուած են Ռուս Ուղղափառ Եկեղեցու սրբերի տօնահանդէսների ու յիշատակի օրերը ըստ տարուայ 12 ամիսների՝ համապատասխանաբար 12 հատորով[8]: Առաջնորդուենք 2010 թ. հրատարակութեամբ: Հատորներից իւրաքանչիւրի տիտղոսաթերթին գրուած է՝ «տուեալ հրատարակութիւնը իրենից ներկայացնում է Մոսկուայի սինոդի 1904-1911 թթ. կողմից տպագրուած նախայեղափոխական տեքստի նոր շարուածքը ժամանակակից ուղղագրութեամբ» («Данное издание представляет собой новый набор дореволюционного текста, напечатанного в Московской синодальной типографии в 1904-1911 гг. в современном правописании»): Առաջին հատորը սկսւում է սրբերի՝ Սեպտեմբեր ամսուայ յիշատակի օրերով: Ռուս Ուղղափառ Եկեղեցին Բարթուղիմէոսի յիշատակի օրը պաշտօնապէս նշում է հին տոմարով Յունիսի 11-ին, նոր տոմարով՝ Յունիսի 14-ին, հետեւաբար Բարթուղիմէոսի վարքի մասին տեղեկութիւնները ներկայացուած են 10-րդ հատորում: Հաշուի առնելով այս աղբիւրի կարեւորութիւնը, Բարթուղիմէոսի մասին հատուածը ստորեւ ներկայացւում է համարեա ամբողջութեամբ. «Սուրբ Բարթուղիմէոս առաքեալի կեանքը եւ տառապանքները» շարադրանքում Четьи-Минеи կազմողը գրում է, որ նա Քրիստոսի 12 առաքեալներից մէկն էր, Քրիստոսի նահատակութիւնից յետոյ նրան վիճակ էր ընկել աւետարանը քարոզել Սիրիայում եւ Փոքր Ասիայում: Բարթուղիմէոսը քարոզչութիւնն սկսել է 12 առաքեալներից մէկ ուրիշի՝ Փիլիպոսի հետ: Փոքր Ասիայում նրանք գործել են գլխաւորապէս Փռիւգիայում, մասնաւորապէս Հիերապոլիս[9] քաղաքում: Քարոզիչների զանազան հրաշագործութիւնները թուարկուած են, բայց, ի վերջոյ, քաղաքի բնակիչները խաչ են հանել երկու առաքեալներին: Փիլիպոսը նահատակուել է, բայց Բարթուղիմէոսը կենդանի է մնացել: Այստեղից Բարթուղիմէոսը գնացել է «Հնդկական երկրներ», որտեղ տեղացիներին աւետարան է նուիրել, այնուհետեւ անցել է Մեծ Հայք «Հնդկաստանից սուրբ Բարթուղիմէոսը ճանապարհուեց Մեծ Հայք: Նրա յայտնուելու ժամանակ

8 Այս աշխատանքը ժամանակակից ռուսերէն չի թարգմանուել: Այն վերամշակուել է պատմաբան Վ. Օ. Կլիւչեւսկու խմբագրութեամբ եւ հրատարակուել «*Жития святых на русском языке, изложенные по руководству Четьих-Миней св. Димитрия Ростовского с дополнениями, объяснительными примечаниями и изображениями святых*» անուամբ:

9 Հիերապոլիսը (յուն.՝ «Սուրբ քաղաք») փռիւգիական կարեւոր քաղաք էր մ.թ.ա. II–I հազարամեակներում: Ըստ աւանդութեան՝ կառուցուել է յունական Ապոլոն աստծու կամ փռիւգիական մայր աստուածուհի Կիբելայի պատուին մ.թ.ա. II հազարամեակում: Սելեւկեանների Անտիոքոս Մեծ կայսրը Բաբելոնից եւ Միջագետքից հազարաւոր հրեայ ընտանիքներ է տեղափոխել Փոքր Ասիա, եւ, ըստ տեղեկութիւնների, մ.թ.ա. 62 թ. Հիերապոլիսում հրեաների թիւը շուրջ 50 հազար էր: Մ.թ. V դ. հեղինակ Ստեփանոս Բիւզանդացու վկայութեամբ՝ Հիերապոլիս քաղաքում բազմաթիւ տաճարներ կային [3, 175]: Մ.թ. I դարում՝ առաքեալների գործունէութեան շրջանում, ծաղկուն քաղաք էր: Հիերապոլիսի աւերակները գտնւում են թուրքական Փամուկկալէ (Բամբակէ ամրոց) քաղաքի հարեւանութեամբ եւ համարւում են կարեւոր զբօսաշրջային վայր:

կուռքերը, կամ, լաւ կը լինի ասել՝ կուռքերի մէջ բնակաւորուած դեւերը, բարձր ճչալով, որ Բարթուղիմէոսը իրենց տանջում է եւ շուտով կը վռնդի, լռեցին: Իսկապէս, առաքեալի մօտենալիս անմաքուր ուժերը դուրս էին մղւում ոչ միայն կուռքերից, այլեւ մարդկանցից: Ցանուն դրա շատերը դարձան Քրիստոսին: Այդ երկրի թագաւոր Պոլիմիոնը դիւահար դուստր ունէր, որի բերանով դեւը բացականչում էր. «Բարթուղիմէոս, դու մեզ այստեղից էլ ես քշում»: Այդ մասին լսելով թագաւորը հրամայեց անյապաղ գտնել Բարթուղիմէոսին, եւ երբ Քրիստոսի առաքեալը եկաւ դիւահարի մօտ, դեւն անմիջապէս փախաւ եւ արքայադուստրը բուժուեց: Թագաւորը շնորհակալութեամբ սրբին ուղարկեց ոսկով, արծաթով, մարգարիտներով եւ այլ թանկարժէք պարգեւներով բեռնուած ուղտեր: Առաքեալը, սակայն, բոլորը յետ ուղարկեց՝ ասելով. «ես այս իրերը չեմ ձեռք բերում, ես մարդկանց հոգիներ եմ փնտրում, եւ երբ դրանք ձեռք բերեմ եւ ուղարկեմ երկնային/դրախտային բնակավայրեր, ապա Տիրոջը կը ներկայանամ որպէս մեծ վաճառական»: Այս խօսքերից յուզուած թագաւորը հաւատաց Քրիստոսին իր ողջ տնով/ընտանիքով, թագաւորը, թագուհին, նրա բուժուած դուստրը, շատ ազնուականներ եւ ժողովրդից շատ մարդիկ մկրտուեցին սուրբ առաքեալի կողմից: Թագաւորի օրինակով տասից աւելի քաղաքներ ընդունեցին սուրբ մկրտութիւն: Իրենց աստուածների կործանմամբ, կռապաշտութեան անհետացմամբ, տաճարների ամայացմամբ խորապէս վշտացած քրմերը վրդովուած էին առաքեալի դէմ: Մերձենալով թագաւորի եղբօր՝ Աստիագի հետ, նրանք սովորեցրին նրան վերացնել Բարթուղիմէոսին եւ վրէժխնդիր լինել նրանից իրենց աստուածներին վիրաւորելու համար: Սա էլ, յարմար ժամանակ գտնելով, բռնեց սուրբ առաքեալին եւ Ալբան քաղաքում գլխիվայր խաչեց: Սուրբ առաքեալը ուրախանում էր յանուն Քրիստոսի կրած տառապանքների համար, եւ խաչից կախուած՝ շարունակում էր անհաւատներին հաղորդել Աստծոյ խօսքը: Հաւատացեալների հաւատն ամրապնդում էր, անհաւատներին համոզում էր ճանաչել ճշմարտութիւնը եւ դիւական խաւարից անցնել Քրիստոսի լոյսին: Նրան խոշտանգողը չէր կարող դա լսել, եւ հրամայեց առաքեալին մաշկահան անել: Այդ տառապանքին համբերութեամբ դիմացող սուրբը չլռեց, չդադարեց սովորեցնել Աստծու մասին եւ գովաբանել նրան: Ի վերջոյ խոշտանգողը հրամայեց մաշկահան անելուց զատ գլխատել սուրբ Բարթուղիմէոսին: Այդ ժամանակ լռեցին նրա աստուածախօս շուրթերը, իսկ երբ գլուխն անջատուեց մարմնից, մարմինը մնաց խաչից կախուած՝ ոտքերը դէպի վեր, ասես առաքեալի երթը դէպի երկինք ցուցադրելով: Այդպէս վախճանուեց Քրիստոսի Բարթուղիմէոս առաքեալը, բազմաթիւ հիւանդութիւններից եւ չարչարանքներից յետոյ, յուրախութիւն Տիրոջ, անցնելով անցաւ հանգստի: Առաքեալի վախճանուելուն ականատես հաւատացեալները խաչից հանեցին մարմինը եւ գլխի ու մաշկի հետ միասին դնելով թիթեղեայ տուփի մէջ, թաղեցին նոյն քաղաքում՝ Մեծ Հայքում գտնուող Ալբանում: Առաքեալի մասունքներից հիւանդները հրաշագործ բուժումներ ստացան, ինչի համար անհաւատներից շատերը դարձան դէպի Քրիստոսի Եկեղեցին»[10]: Այնուհետեւ

10 *Житие святых на русском языке, изложенныя по руководству Четьих-Миней святого Димитрия Ростовского*, книга десятая, Июнь, М., «Ковчег», 2010, с. 197-198. (https://azbyka.ru/otechnik/books/file/24211-%D0%96%D0%B8%D1%82%D0%B8%D1%8F-%D1%81%D0%B2%D1%8F%D1%82%D1%8B%D1%85-%D0%9A%D0%BD%D0%B8%D0%B3%D0%B0-X.pdf); Տե՛ս նաեւ *Житие и страдания святого апостола Варфоломея* – https://azbyka.ru/otechnik/Dmitrij_Rostovskij/zhitija-svjatykh/504#source

խօսւում է Բարթուղիմէոս առաքեալի մասունքների տեղաշարժերի մասին:

Ինչպէս տեսնում ենք, ռուսական այս կարեւոր Յայսմաւուրքի տեքստում ոչ մի խօսք չկայ ո՛չ Ալբանիայի, ո՛չ Բաքուի մասին: Նրա յիշատակած «Ալբան» քաղաքը, իր իսկ հաւաստմամբ, Մեծ Հայքում է: Շուրջ 300 տարի ռուսական քրիստոնէական աւանդոյթը համարել է, որ Հնդկաստանում, Սիրիայում, Փռիւգիայում քարոզելուց յետոյ Բարթուղիմէոսը գնացել է Մեծ Հայք, որտեղ նահատակուել է նրա Ալբան քաղաքում: Բայց ահա 2010 թ. վերահրատարակուած Դմիտրի Ռոստովսկու «Սրբերի վարքի» հրատարակիչը (Մոսկուա, «Կովչեգ», 2010) Ս. Բարթուղիմէոսի վարքի տեքստում «Ալբան» քաղաքի անուան վերաբերեալ բոլորովին նոր, անհասկանալի ծանօթագրութիւն է աւելացրել (թիւ 3832 ծանօթագրութիւնը). «Ալբանը (կամ Ալբանոպոլիս, նաեւ Աբարնոպոլիս) քաղաք է Կասպից ծովի արեւմտեան ափին, ներկայիս Բաքուն» *(բնագրում՝ «Альбан (или Албанополь, также Абарнополь) – город на западном берегу Каспийского моря – нынешний Баку»)*[11]:

Հրատարակիչները եւս մէկ ծանօթագրութիւն են աւելացրել աշխատանքի՝ «Բարթուղիմէոսին... «թաղեցին նոյն քաղաքում՝ Մեծ Հայքում գտնուող Ալբանում» *բառերի վրայ (թիւ 3833 ծնթ.), ըստ որի* «Սրբերի վարքը կազմող Դմիտրի Ռոստովսկին Ալբան քաղաքը սխալմամբ տեղադրում է Մեծ Հայքի տարածքում: Ալբանը (ժամանակակից Բաքուն), որտեղ գտնւում է Բարթուղիմէոս առաքեալի վկայաբանական վախճանի վայրը, Կասպից ծովի արեւմտեան ափին գտնուող քաղաք է, պատմականօրէն երբեք Մեծ Հայքը կազմող տարածքում չի եղել, այլ քաղաք էր Կովկասեան Ալբանիայում, ինչի մասին խօսում է նաեւ անունը» *(ռուսերէն բնագրում. «В данном случае составитель жития свт. Димитрий Ростовский ошибочно помещает город Альбан на территорию Великой Армении. Альбан (современный Баку), где находится место мученической кончины апостола Варфоломея, исторически никогда не находился на территории, входящей в состав Великой Армении, а был городом Кавказской Албании, о чем говорит и само название»)*[12]: *Այս ծանօթագրութիւնները որեւէ կոնկրէտ հիմնաւորում չունեն, աղբիւր չեն նշում, չի խօսւում նաեւ այն մասին, թէ ինչ կապ ունի «Կովկասեան Ալբանիա» անունը «Բաքու» անուան հետ: Հասկանալի չէ, թէ ի՞նչ է նշանակում «Կովկասեան Ալբանիան» մ. թ. I դարում: Սա այն դէպքում, երբ Ալբան, Աղբակ, Ալբակ, Աղբան, Ալբայ, Ալբիս, Ալբիստան, Ալբաւայ, Ալբուս տեղանուններով բնակավայրեր կային Մեծ Հայքում Արեւմտեան Հայաստանում, առաւելապէս Վասպուրականում, բայց նաեւ Աղձնիքում, Կիլիկիայում*[13]: *Վասպուրականում էր նաեւ Աղբակ գաւառը, որտեղ Բարթուղիմէոսի գործունէութեան մասին շատ են գրել հայկական աղբիւրները:*

Ծանօթագրութիւնից անհասկանալի է մնում, թէ ինչպէ՞ս եւ ինչո՞ւ է «Մեծ Հայքի թագաւորի եղբայր Աստիագը» հազար կիլոմետր ճանապարհ անցել Բաքու քաղաքում Բարթուղիմէոսին չարչարելու եւ նահատակելու համար: Տրամաբանօրէն՝ նրա նպատակը պիտի լինէր քրիստոնէութիւն քարոզող Բարթուղիմէոսին Մեծ Հայքից հեռացնելը: Եթէ նա արդէն հեռացել էր, անիմաստ էր հազար կիլոմետր ճանապարհ անցնել այլեւս վտանգ չներկայացնող մարդուն չարչարելու համար: Ըստ հայկական աւանդոյ-

11 Примечание 3832 «Азбуки веры» https://azbyka.ru/otechnik/Dmitrij_Rostovskij/zhitija-svjatykh/504#source

12 Примечание 3833 «Азбуки веры» (https://azbyka.ru/otechnik/Dmitrij_Rostovskij/zhitija-svjatykh/504#source)

13 *Հայաստանի եւ յարակից երկրների տեղանունների բառարան*, հտ. 1, էջ 70-73:

թիւ ինչպէս ստորեւ կը տեսնենք, Բարթուղիմէոսը նահատակուել է Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Աղբակ գաւառի Աղբակ քաղաքում: Հայերէնում «ղ» տառի անցումը լատիներէն «լ» տառին Աղբակը աճպարարութեամբ դարձրել է «Ալբան» գիրքը հրատարակած azbyka.ru հրատարակչութեան ծանօթագրողների պարզ ցանկութեամբ, կամ, հնարաւոր է, ինչ որ հրահանգով:[14] Յետագայում Բարթուղիմէոսի նահատակութիւնը Բաքւում ներկայացնող ռուսական տեղեկատուները պարզապէս յղում են անում Դմիտրի Ռոստովսկու XVIII դ. գրուած գրքին վերջինիս վրայ դնելով գրքի 2010 թթ. հրատարակիչների կեղծարարութեան պատասխանատուութիւնը:

Քանի որ աստուածաբանութեան երիտասարդ թեկնածու Նիկոնորովը յղում է այս աշխատանքի Կոզելսկի հրատարակութեանը, անդրադառնանք նաեւ դրան: Ենթադրելի է, որ խօսքը գնում է «Жития святых святителя Димитрия Ростовского. В 15-ти книгах. Козельск. Свято-Введенская Оптина Пустынь. 1991-1994» հրատարակութեան մասին: Կոզելսկի 1992 թ. հրատարակութիւնը համացանցում չկայ, սակայն կայ այդ հրատարակութեան պատճէնի 2004 թ. Կիեւի «Պեչորսկի Լաւրա»-ի հրատարակութիւնը: Այս հրատարակութիւնը նոյնութեամբ կրկնում է Բարթուղիմէոսի մասին Դմիտրի Ռոստովսկու ողջ պատմութիւնը, այդ թւում այն մասին, որ քրմերի ներշնչանքով հայ թագաւորի եղբայր Աստիգը «յարմար պահ գտնելով բռնեց սուրը Առաքեալին Ալբան քաղաքում» ...եւ ի վերջոյ գլխատեց նրան: «Ալբան» տեղանուան վրայ հրատարակիչը դրել է թիւ 11 ծանօթագրութիւնը. «Ալբան (կամ Ալբանոպոլ, նաեւ Աբարնոպոլ) – քաղաք է Կասպից ծովի արեւմտեան ափին, ներկայիս Բաքուն» [բնագրում. «Альбан – город на западном берегу Каспийского моря – нынешний Баку»]. Տեքստը շարունակւում է. այս ամենին ականատես հաւատացեալները Առաքեալի մարմինն իջեցրին խաչից եւ թաղեցին «Մեծ Հայքում գտնուող նոյն Ալբան քաղաքում» [բնագրում. «предали погребению в том же городе, Альбане, что в Великой Армении»][15]: Այս տարբերակը, որում ծանօթագրւում է Ալբան քաղաքը որպէս Բաքու քաղաք, իսկ թաղման վայրի մասին նշող «Մեծ Հայքում գտնուող նոյն Ալբան քաղաքում» նախադասութիւնը չի ծանօթագրւում, տպաւորութիւն է ստեղծում, որ. ա) առաքեալի մահուան վայրը Կասպից ծովի ափի Բաքու քաղաքում էր, իսկ թաղման վայրը Մեծ Հայքում, բ) Ալբան-Բաքու քաղաքը Կասպից ծովի արեւմտեան ափի հետ միասին գտնւում էր Մեծ Հայքում: Այնուհետեւ սա կրկնուել եւ կրկնւում է բազմաթիւ հրատարակութիւններում[16]: 1910 թ. հրատարակութիւնը «ուղղում է» այս սխալը՝ Մեծ Հայքում գտնուող Ալբանում» բառերի

14 Հայերէն «Աղբակ» անունը լատիներէն «Ալբան» դարձնելն աճպարարութեան արդիւնք է (թէկուզ և «ղ»-ն մինչև 9-րդ դարում հնչիւնափոխուելը «կատկային ł» է եղել, (տե՛ս **Ա. Աբրահամեան**, *Գրաբարի ձեռնարկ*, Երեւան, 1976, էջ 9), և «լ» հնչիւնը պարունակող յունահռոմէական անունները հայերէն են տառադարձուել «ղ»-ով):

15 *Жития святых на русском языке, изложенные по руководству Четьих-Миней св. Димитрия Ростовского* (репринт), Киев: Свято-Успенская Киево-Печерская Лавра, 2004, с. 209.

16 *Память 11 июня. Житие и страдания святого апостола Варфоломея //* https://lib.pravmir.ru/library/readbook/519#part_1852; *Святитель Димитрий Ростовский. Жития святых. Июнь. Житие и страдания святого апостола Варфоломея. Память 11 июня,-* http://www.biblioteka3.ru/biblioteka/dimitr_rostov/ijun/txt33.html; *Житие и страдания святого апостола Варфоломея,-* https://predanie.ru/book/216285-zhitiya-svyatyh-iyun/#/toc43; *Житие и страдания святого апостола Варфоломея. 11 июня по ст.ст. / 24 июня по н.ст. В изложении святителя Димитрия Ростовского,-* https://idrp.ru/content/article/zhitiya-svyatih-lib577/ եւն:

վրայ գրուած թիւ 3833 ծանօթագրութեամբ եւ կեղծիքն ամբողջացնելով:

Առաքեալների գործունէութեան մասին ռուսական երկրորդ կարեւոր տեղեկատուն Մակար Բուլգակովի հեղինակած Ռուսական Եկեղեցու պատմութիւնն է: Այս գրքի 1883 թ. հրատարակութիւնում Ս. Բարթուղիմէոսի մասին ասուած է՝ «Բարթուղիմէոս առաքեալը հնդիկների մօտ ճամփորդելուց յետոյ, որոնց թողել է Մատթէոսի աւետարանը հրէերէն լեզուով, աւետարանել է Մեծ Հայքում եւ այստեղ Ալբան (Ալբանապոլիս) քաղաքում, որից ողջ շրջանը կոչւում էր Ալբանիա, տանջամահ է եղել: Այդպէս է ասւում III, IV եւ յետագայ դարերի բոլոր համառօտ պատմութիւններում: *Այս առաքեալի գործունէութեան առաւել մանրամասն պատմութիւններից իմանում ենք, որ բազմաթիւ հրաշքներով ուղեկցուող նրա քարոզները մեծ յաջողութիւն են ունեցել Մեծ Հայքում: Բարի լուրի սուրբ աւետողը Քրիստոսի կողմն է բերել Հայաստանի թագաւոր Պոլիմիոսին նրա ողջ ընտանիքի հետ, շատ իշխանների, եւ ժողովրդից անթիւ մարդկանց, մինչեւ կուռքերի քրմերից ներշնչուած թագաւորի կռապաշտ եղբայր Աստիագի հրամանով խաչուելը»*[17]: *Հեղինակը յղում է իր տեղեկութիւնների աղբիւրները եւ դրանք գլխաւորապէս Բարթուղիմեսի հայաստանեան գործունէութեան աւանդական պատմութիւններն են՝ «Իպոլիտ Պորտացու վկայութիւնը (մօտ 222 թ.). «Bartholomaeus, cum Indis praedicasset, eisque conscriptum a Mathaeo Evangelium exposuisset, crucifixus est et ipse, capite deorsum verso, Albani Magnae Armeniae urbe» [Բարթուղիմէոսը հնդիկներին քարոզելուց եւ Մատթէոսի շարադրած աւետարանի պարզաբանումից յետոյ գլխիվայր խաչուեց Մեծ Հայքի Ալբան քաղաքում] (Max. Bibl. vet. Patr., III, pag. 265, Lugd.); Դորոթէոսի (307–322 թթ.). «Bartholomaeus..., Indis praedicato Evangelio eisque dato Mathaei Evangelio, martyr obiit Carbanopoli Magnae Armeniae urbe» [Հնդիկներին քարոզելուց եւ նրանց Մատթէոսի Աւետարանը թողնելուց յետոյ Բարթուղիմէոսը տառապալի մահ ստացաւ Մեծ Հայքի Կարբանոպոլիս քաղաքում] (Corpus H. Byz. V, 349); Սոֆրոնիոսի (մահ.՝ 390). «...dormivit Albanopoli, oppido Maioris Armeniae» [Թաղուեց Մեծ Հայքի Ալբանոպոլիս քաղաքում] (Hieronym. 1, pag. 171, Francof. (209)); Նիկէտաս Պափլագոնացու (մահ. մօտ 873). «...contigit in quadam urbe maioris Armeniae (Urbanopolin vocant) versari et caet...» [...Նրան բաժին ընկաւ գտնուելու Մեծ Հայքի մի քաղաքում (կոչւում էր Ուրբանոպոլիս)] (Max. Bibl. vet. Patr. XXVII, pag. 408); Էկումենիայի (X դար). «...obdormivit in civitate Albano Indicae Magnae Armeniae» [...Ննջեց Ալբան քաղաքում, հնդկական Մեծ Հայքում] (Oper. Oecum. 1, in praefat.).*

Մակար Բուլգակովը ենթադրութիւն է անում, որ «Պոլիմիոսը հաւանաբար ոչ թէ ամբողջ Հայաստանի թագաւորն էր, այլ նրա որեւէ մարզի իշխանը, քանի որ այն ժամանակ Հայաստանում այդ անունով թագաւոր չի եղել: Հայկական տեղեկութիւններով էլ Բարթուղիմէոսը չարչարուել է Հայաստանի Սանատրուկ թագաւորի ժամանակ»:

Դժուար է ասել, թէ Մ. Բուլգակովը ինչ նկատի ունի «այն ժամանակ» ասելով՝ առաքեալների գործունէութեան շրջանն առհասարա՞կ, թէ՞ Բարթուղիմէոսի կոնկրէտ գործունէութիւնը Մեծ Հայքում: Սովորաբար Մեծ Հայքում Բարթուղիմէոսի գործելու ժամանակը վերագրւում է առաջին դարի 60-ական թուականներին, եւ ոմանք նոյնիսկ նահատակութեան կոնկրէտ

17 **Митрополит Макарий (Булгаков)**, *Церковь Христова в Закавказье,-* История Русской Церкви, Ч. 1: История христианства в России до равноапостольного князя Владимира как введение в историю Русской Церкви, СПб., 1883, Ч. 1, Гл. 4.

թուական են նշում 71 թիւը: Իրականում առաջին դարի աղբիւրներից առաքեալների գործունէութեան մասին ոչ մի կոնկրէտ թուական մեզ յայտնի չէ: I-II դդ դարերում քրիստոնէական շարժման զարգացումներն այնքան փոքր տեղ էին զբաղեցնում Հռոմէական կայսրութեան հասարակական-քաղաքական կեանքում, որ այդ շրջանի պատմիչները դրանց պարզապէս չէին անդրադառնում: Յետագայում կոլեկտիւ յիշողութիւններից եւ բանաւոր պատմութիւններից հաւաքուած տեքստերը գլխաւորապէս տարածքների եւ այդ ժամանակաշրջանում գործած անձանց անուններ են հաղորդում, որոնց միջոցով մասնագէտները փորձում են վերականգնել ընդհանուր պատկերը: Մեծ Հայքում Սանատրուկ անունով թագաւորի մասին եւս շատ անորոշ տեղեկութիւններ կան: Նրա կառավարման տարիները համարւում են 75-110 թուականները, այսինքն՝ Բարթուղիմէոսի նահատակութեան ենթադրեալ թուականից յետոյ:

Ինչ վերաբերում է «Պոլիմիյ» թագաւորի անուանը, որը, ի դէպ, Բարթուղիմէոս առաքեալի՝ Մեծ Հայքում աւետարանելու հետ կապուած յաճախ է հանդիպում յունական եւ լատինական տեքստերում, ապա մ. թ. ա. I – մ. թ. I դարերում Մեծ Հայքում կամ դրա մի մասում, ինչպէս նաեւ Փոքր Հայքում տարբեր ժամանակներում թագաւորել են Պոնտոսի Պոլեմոն արքայատոհմի ներկայացուցիչներ: Արտաշիսեան դինաստիայի անկումից յետոյ, Հայաստանում շատ տարբեր թագաւորներ են «նշանակուել» պարթեւական Պարսկաստանի եւ Հռոմէական կայսրութեան կողմից: Պոլեմոնեան արքայատոհմի սկիզբնաւորումը մ. թ. ա. 36 թուականն է, առաջին թագաւոր Պոլեմոնը (յուն.՝ Πολέμων) Փռիւգիայի Լաոդիկէա յունական քաղաքից էր՝ հարուստ հռետոր Զենոնի որդին: Մարկուս Անտոնիուս նրան կնութեան է տուել իր դստերը եւ թագաւոր կարգել Պոնտոսում: Այնտեղ Պոլեմոն I-ը կառավարել է մ. թ. ա. 36 – 8 թուականներին: Մ. թ. ա. 35 թ. Մարկուս Անտոնիուսը արդէն Պոլեմոնին ենթակայ Պոնտոսին է կցել նաեւ Փոքր Հայքը, որը Պոլեմոնի կողմից կառավարուել է մինչեւ մ. թ. ա. 20 թ.[18]: Նրա աւագ որդին, ժառանգած լինելով թէ՛ հօր, թէ՛ պապի անունը, յայտնի էր Մարկուս Անտոնիուս Պոլեմոն Պիւթոդորոս անունով եւ Կիլիկիայի Օլբա քաղաքի գլխաւոր քրմապետն էր[19]: Օլբա քաղաքը հին քաղաք էր եւ շատ հարուստ տաճարներով:

Մ. թ. 17 թ., երբ Տիբերիոս կայսրը արեւելք է ուղարկում իր որդեգիր (եղբօրորդի) Գերմանիկոսին, սա գալիս է Արտաշատ եւ հայ աւագանու համաձայնութեամբ Հայաստանի թագաւոր կարգում Պոնտոսի Պոլեմոն թագաւորի կրտսեր որդուն՝ Զենոնին: Հայերը փոխում են Զենոնի՝ Հռոմում որպէս դինաստիական հաստատուած Պոլեմոն անունը հայերի համար դինաստիական Արտաշէս անուամբ[20]: Զենոն-Արտաշէս-Պոլեմոնը Մեծ Հայքում թագաւորել է 18-34 թթ.: Նրա մահից յետոյ Հայաստանի թագաւորը կարգւում է ոչ թէ Հռոմի, այլ ակտիւացած պարթեւների կողմից: Երկրի թագաւոր է դառնում պարթեւների Արտաւան թագաւորի որդի Արշակը: Մօտաւորապէս այդ նոյն ժամանակ՝ 36 թ., Կիլիկիայի Օլբա քաղաքում քրմական իշխանութիւնը կազմալուծւում է: Շուտով՝ 41 թ., Պոնտոսում եւ Կիլիկիայում թագաւոր է դառնում Պոլեմոն II-ը՝ Պոլեմոն I-ի թոռը, նրա դուստր Անտոնի Տրեֆենի եւ Թրակիայի թագաւոր Կոտիս III-ի որդին:

60-ական թթ. հայ-պարթեւական կռիւների աւարտից յետոյ Հռոմն է թագա-

18 **Сапрыкин С. Ю.**, *Понтийское царство. Государство греков и варваров в Причерноморье*, Москва, «Наука», 1996, с. 307-308, 312.

19 **Сапрыкин С. Ю.**, *Понтийское царство*, с. 332.

20 **Tacit**, *Annal.*, II, 56.

ւոր կարգում Հայաստանում: Ներոն կայսրն ուղարկում է Կապադովկիայի աւագանիներից Հռոմում դաստիարակուած Տիգրան VI-ին: Բայց միաժամանակ Պոնտոսին «բաժին է հանում» Հայաստանի արեւմտեան սահմանային նահանգներից[21]: *Այսպիսով, ի դէմս Պոլեմոն II-ի Պոլեմոնների արքայատոհմի ներկայացուցիչը Հայաստանի մի մասում դառնում է թագաւոր: Սա հէնց Հայաստանում Բարթուղիմէոս առաքեալի քարոզչութեան ենթադրեալ ժամանակն է, եւ նոյնիսկ տարածքով համապատասխանութիւն կայ նրա առաքելական գործունէութեան տարածքի հետ:*

Ուշագրաւ է, որ Պոլեմոն II-ը սերտ կապեր էր հաստատել Հրէաստանի հետ: Նա յուդայականութիւն է ընդունել, թլպատուել է եւ 48-54 թթ. ամուսնացած է եղել Հրէաստանի Հերովդէս Ագրիպաս թագաւորի դուստր Բերենիկէի հետ, բայց այդ ամուսնութիւնը լուծարուել է, եւ Բերենիկէն վերադարձել է հայրենիք: Ըստ բանաւոր պատմութիւնների՝ Պոլեմոնը թողել է յուդայականութիւնը, մկրտուել է քրիստոնեայ, ապա կրկին վերադարձել հեթանոսութեան[22]: 63-64 թթ. Ներոնը լուծարել է Պոնտոսի թագաւորութիւնը եւ միացրել կայսրութեան Գալաթիա պրովինցիային, իսկ Հայաստանը դարձրել է Կայսրութեան ուղղակի վերահսկելի սահմանակից երկիր: Պոլեմոն II-ը մնացել է Կիլիկիայի կառավարիչ մինչեւ իր մահը:

Այսպիսով, Մ. Բուլգակովի հարցադրումը՝ «Պոլիմին հաւանաբար ոչ թէ ամբողջ Հայաստանի թագաւորն էր, այլ նրա որեւէ մարզի իշխանը, քանի որ այն ժամանակ Հայաստանում այդ անունով թագաւոր չի եղել» եւ որ «հայկական տեղեկութիւններով էլ Բարթուղիմէոսը չարչարուել է Հայաստանի Սանատրուկ թագաւորի ժամանակ», պատասխան ունի: Թէ՛ Մեծ Հայքում, թէ՛ Փոքր Հայքում առաքեալների գործունէութեան շրջանում տարբեր ժամանակահատուածներով եղել են Պոլեմոն արքայատոհմի Պոլիմոն անունով թագաւորներ, եւ ժողովրդական յիշողութիւնը պահել է նրանց մասին հատուածային տեղեկութիւններ: Սակայն հնարաւոր է նաեւ, որ Փոքր Ասիայում միմեանց հարեւան երկրներում լուրեր էին տարածւում տաճարների քրմապետերի կողմից քրիստոնեաներին հալածելու, այդ թւում՝ Կիլիկիայի Օլբա քաղաքի գլխաւոր քրմապետ Պոլեմոն Մարկ Անտոնիոսի մասին: Ի դէպ, գրաւոր աղբիւրները ժլատ են, եւ այս Պոլեմոնի մասին մենք գիտենք միայն, որ նա այդպէս էլ չկարողացաւ օգտուել Պոնտոսի թագաւորը լինելու իր օրինական ժառանգական իրաւունքից: Նրա հօր մահից յետոյ Պոնտոսը կառավարում էր նրա մայրը՝ Մարկ Անտոնիոսի դուստրը, եւ նրա համար պէտք է որ բարոյական խնդիրներ յարուցեր իր ընտանեկան ու քաղաքական ենթակայական դիրքը: Նա, հնարաւոր է, խիստ հետեւողական, թերեւս նաեւ դաժան էր իր քրմապետական հնարաւորութիւններն օգտագործելու մէջ: Բաւական է յիշել, որ Կիլիկիայում նրա քրմապետութեան շրջանում Մեծ Հայքի թագաւորը նրա կրտսեր եղբայրն էր, եւ որ նրա փոխարէն մօր մահից յետոյ Պոնտոսում թագաւորել է իր քրոջ որդին՝ Պոլեմոն II-ը, որը Հայաստանի արեւմտեան շրջանները Պոնտոսին կցելուց յետոյ ի վերջոյ դարձաւ նաեւ Մեծ Հայքի մի մասի թագաւորը: Կարելի է ենթադրել, որ նա իր թագաւոր եղբայրներին մղում էր քրիստոնեաների դէմ հալածանքների: Ինչն աւելի հաւանական է՝ Պոլեմոն տոհմի երեք եղբայրներն էլ հալածում էին քրիստոնէու-

21 **Tacit**, *Annal.*, XIV. 26.

22 Полемон II,- Еврейская энциклопедия Брокгауза и Ефрона (ЕЭБЕ), т. 12, С. Петербург, 1912; **Сапрыкин С. Ю.**, *Понтийское царство*, с. 337.

թիւն քարոզողներին, եւ առնուազն Կիլիկայում յիշում էին քրմապետ Պոլեմոն Մարկոս Անտոնիոսին, Մեծ Հայքի արեւմուտքում թագաւոր Պոլեմոն II-ին:

Մ. Բուլգակովն այնուհետեւ գրում է առաջին դարում Մեծ Հայքում աւետարանական քարոզչութեամբ զբաղուած երկու Թադէոս առաքեալների մասին, ու վերջում աւելացնում, որ քրիստոնէութիւնը Հայաստանում եւ առհասարակ Այսրկովկասում շատ խեղճ վիճակում էր եւ լրջօրէն տարածուեց միայն 4-րդ դարի սկզբին Տրդատ թագաւորի ժամանակ, Գրիգոր Լուսաւորչի կողմից նրանց ջանքերով տարածուելով նաեւ Ալբանիայում[23]:

Այսպիսով, Դմիտրի Ռոստովսկու կազմած ռուսական Յայսմաւուրքը եւ Մակար Բուլգակովի շարադրած «Ռուսական Եկեղեցու պատմութիւնը» ներկայացնում են Բարթուղիմէոս առաքեալի մասին Ռուս Ուղղափառ Եկեղեցու աւանդոյթը, որը «Կովկասեան Ալբանիայի», Ալբան-Բաքու քաղաքի հետ որեւէ առնչութիւն չունի. Դ. Ռոստովսկու կազմած Յայսմաւուրքի 2010 թ. հրատարակութեան մէջ լրացուցիչ, անհիմն, աղբիւր չունեցող մտացածին ծանոթագրութիւնը չի փոխում Բարթուղիմէոս առաքեալի մասին ռուսական 300-ամեայ աւանդականացած պատկերացումը եւ Բարթուղիմէոսին ալբանա-ադրբեջանական առաքելական քարոզիչ ներկայացնելու ներկայիս Ռուս Ուղղափառ Եկեղեցու մեծ ցանկութեանը վատ է ծառայում: Կեղծ ծանոթագրութիւններով հնարաւոր չէ բազմիցս հրատարակուած տեքստերն իմաստափոխել: Թէպէտ մեկնարկը տրուած է:

2010 թ. Յունիսի 23-ին Ռուսական Ուղղափառ Հանրագիտարանի «Եկեղեցական-կրօնական կենտրոն» կայքը յօդուած է տեղադրում «Բարթուղիմէոս առաքեալը Ադրբեջանում» վերնագրով: Յօդուածը տեղեկացնում է, որ «Քրիստոնէութեան տարածումը Ադրբեջանում կապուած է Յիսուս Քրիստոսի 12 աշակերտներից մէկի՝ Բարթուղիմէոս առաքեալի անուան հետ: Բարթուղիմէոս առաքեալի կեանքի նկարագրութիւնը ցոյց է տալիս, որ Հնդկական երկրում գործելուց յետոյ նա գնացել է Կովկասեան Ալբանիա (ոչ մի յղում, թէ սա որտեղի՞ց է յայտնի, ի՞նչ էր այդ «Կովկասեան Ալբանիան» – Հ. Խ.), Քրիստոսի հաւատը քարոզելու, որտեղ էլ տուժել է մ. թ. 71 թ. Ալբանոպոլիս, ներկայիս Բաքու քաղաքում Կասպից ծովի արեւմտեան ափին (կրկին՝ ոչ մի յղում, թէ Կասպից ծովի արեւմտեան ափին ինչ Ալբանոպոլիս քաղաք կամ տեղանուն կար առաջին դարում, – Հ. Խ.): Կովկասեան Ալբանիայում Քրիստոնէութեան պատմութիւնը իր ծնունդով պարտական է Բարթուղիմէոս եւ Թադէոս առաքեալներին, ինչպէս նաեւ Թադէոսի աշակերտ Եղիշէին (նաեւ՝ Եղիշայ)[24]: Եկեղեցական աւանդութիւններից յայտնի է, որ Քրիստոսի 12 աշակերտներից մէկը՝ Բարթուղիմէոս առաքեալը, Փոքր Ասիայում եւ Հնդկաստանում քարոզելուց յետոյ գնացել

23 *Церковь Христова в Великой Армении и Албании,*- История Русской Церкви, Ч. 1, Гл. 4.

24 Ըստ երեւոյթին, հեղինակի պատկերացմամբ՝ Թադէոսին աւելացնելով Բարթուղիմէոսին՝ «Ադրբեջանը» դառնում է Հայ Առաքելական Եկեղեցու երկու կարեւոր առաքեալների «մենատէրը»: Այստեղ կարեւոր է նկատի ունենալ նաեւ, որ «Թադէոսի աշակերտ Եղիշէի» մասին առասպելը ծնուել է միայն 7-րդ դարում՝ որոշակի քաղաքական իրավիճակի թելադրանքով (տե՛ս (**Խառատեան**) **Առաքելեան Հ.**, *Եղիշէ առաքեալի պաշտամունքն ուղիների մէջ եւ Ուտի գաւառի տեղադրութեան հարցի շուրջ,*- Լրաբեր հասարակական գիտութիւնների (Երեւան), 1991, № 6, էջ 69-86); **Акопян А. А.**, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ер., 1987, с. 183-184; **Ցակոբեան Ա.**, *«Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ.-Զ. դարերի Աղուանքում,* – «Հանդէս ամսօրեայ», ՃԺԷ տարի, Վիեննա-Եր., 2003, սն. 71-74:

է Կովկասեան Ալբանիա (տե՛ս Դմ. Ռոստովսկու «Սրբերի վարքը»): Այստեղ նրա քարոզչութիւնը որոշ յաջողութիւն է ունեցել, շատերը, տեսնելով առաքեալի հրաշագործութիւնները, հաւատացել են Քրիստոսին, բայց միաժամանակ նրան լրջօրէն դիմադրել են բազմաթիւ մոգ քրմերը եւ նրանց օժանդակող Աստիագը՝ իշխանաւորի եղբայրը (ոչ մի խօսք՝ ի՞նչ իշխանաւոր, որտեղի՞ իշխող – Հ. Խ.): Չնայած առաքեալը բուժել է այն երկրի (ո՞ր երկրի – Հ. Խ.) իշխողներից մէկի դստերը եւ նրա ընտանիքը մկրտուել է, քրմերի կողմից ուղղորդուող Աստիագը յարմար պահ է գտել, բռնել է սուրբ Բարթուղիմէոսին եւ բերել Ալբանիայի հին կրօնական կենտրոն՝ Բարուկ (՞ – Հ. Խ.) Ալբանոպոլիս, այսինքն՝ Ալբանիայի Բաքու քաղաք, քրմերի քաղաք: Այնտեղ, զրադաշտական դախմայի ստորոտում Արտայի տաճարի աստիճաններին գլխիվայր կախել են: Խոշտանգողները խաչուածին մաշկահան են արել, որից յետոյ Առաքեալը լռել է: Անհաւատները վերջում գլխատել են սուրբ Բարթուղիմէոսին եւ որոշ ժամանակ մարմինը թողել խաչի վրայ կախուած»[25]: Այս անյայտ յօդուածի հեղինակի միակ յղումը Դմ. Ռոստովսկու ծանօթագրութեամբ արդէն կեղծած «Սրբերի վարք»-ի վրայ է, չնայած այդ գրքում ոչ մի խօսք չկայ որեւէ Ալբանիայի մասին: Այս յօդուածում առհասարակ «Մեծ Հայք» անունն անգամ չկայ: Փոխարէնը, ըստ այս յօդուածի՝ անյայտ «Կովկասեան Ալբանիայում» քարոզում էին ոչ միայն Բարթուղիմէոսը, այլ նաեւ առաքեալներ Թադէոսը եւ Եղիշէն. Հեղինակին Թադէոսը եւ Եղիշէն առայժմ չեն հետաքրքրել, եւ նա Բարթուղիմէոսին բարեյաջող նահատակել է հնարովի «Բարուկ Ալբանոպոլիս, այսինքն՝ Ալբանիայի Բաքու քաղաք»-ում:

Այս տեքստում օգտագործուած է տեղանունների օգտագործման եւ մեկնաբանութիւնների վերաբերեալ ադրբեջանական աճպարարութիւնների (մանուպուլացիա) շղթան, որը ներկայացնում է Ադրբեջանի պատմութեան ինստիտուտի նախկին տնօրէն Իգրար Ալիեւը 1989 թ.: Առիթը տարբեր է, բայց սկզբունքը նոյնն է: Ի. Ալիեւը գրում է Յու. Յուսիֆովի «Հնագոյն տեղանունների նշանակութիւնը Ադրբեջանի էթնիկական պատմութեան ուսումնասիրման գործում»[26] յօդուածի մասին, որում տեղանուններով թուրքական է դարձուում Ադրբեջանի հանրապետութեան էթնիկական անցեալը «նախաադրբեջանցիներին», իսկ լեզուն՝ «նախաթուրքական»: Ի. Ալիեւը 1989 թ. գրում է, որ տեղանունների ազատ, աճպարարական, առանց որեւէ գիտական սկզբունքի, օրինաչափութեան մեկնաբանութիւնը Ադրբեջանում հին արմատներ ունի, որ «Ադրբեջանի էթնիկական պատմութիւնը աւանդաբար ջանացել են լուծել տեղանունների միջոցով, ընդ որում դա սովորաբար անում են տարբեր լեզուներում միմեանց նման հնչող բառերի միջոցով[27],... [վերլուծաբանների] փնտրտուքը սահմանափակւում է տարբեր լեզուների բառերի նմանութեամբ»[28] եւն: Ի. Ալիեւը բերում է այս սկզբունքն օգտագործող տարբեր հեղինակների բազմաթիւ օրինակներ: Անկասկած այստեղ գործ ունենք տեղանունների մեկնաբանութեան ադրբեջանական այդ

25 *Апостол Варфоломей в Азербайджане*,- Седмица.RU, Церковно-Научных центр «Православная энциклопедия» (https://www.sedmitza.ru/texst/1263194.html)

26 **Юсифов Ю.Б.,** *К значению древних топонимов в изучении этнической истории Азербайджана*, «Известия» АН Азерб. ССР, Серия: История, философия и право (Баку), 1987, № 2, с. 101-109.

27 **Играр Алиев**, Несколько слов по поводу так называемых «протоазербайджанцев» и «протоазербайджанского языка» в древнем Азербайджане, «Известия» АН Азерб. ССР, Серия: История, философия и право (Баку), 1989, № 3, с. 9.

28 **Юсифов Ю.Б.,** К значению древних топонимов, с. 100.

աւանդոյթի հետ, բայց կրկնակի աճպարարութեամբ: Նախ՝ Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Աղբակ գաւառի անունը ներկայիս Ադրբեջան «տեղափոխելու» աղբիւրներին մեղադրելով «Մեծ Հայքում տեղադրելու մէջ», երկրորդ՝ Ալբան անունը Բաքու քաղաքի հետ նոյնականացնելու: Առանձին հարց է «Կովկասեան Ալբանիա» անունը: «Կովկասեան Ալբանիա» անունով պետութիւն եւ նոյնիսկ տարածք չկար, կար հարաւային Կովկասում Կասպից ծովից արեւմուտք գտնուող մի պետութիւն, որին յունա-հռոմէական հեղինակները Ալբանիա էին անուանում, եւ որի մասին գրելիս ժամանակակից հեղինակները աւելացնում են «կովկասեան» բառը ընթերցողներին Եւրոպայի Ալբանիայի հետ չշփոթեցնելու համար: Բաց հարց է մնում, թէ ինչո՞ւ է Ռուս Ուղղափառ եկեղեցու «ուղղափառ հանրագիտարանը» առաջին դարի համար օգտագործում «Կովկասեան Ալբանիա» անունը եւ տեղանունների օգտագործման ադրբեջանական աճպարարական սկզբունքը:

2013 թ. «Благовест» հրատարակչութեամբ (հիմնադրուել է 1990 թ. եւ տպագրում է կրօնական բնոյթի գրքեր) լոյս է տեսնում Ա. Ա. Մարկովայի կազմած «Սուրբ առաքեալները» անունով գիրքը[29]. Բարթուղիմէոս առաքեալն այստեղ ներկայացուած է մի քանի բաժիններով Բարթուղիմէոսը Երուսաղէմում, Փիլիպոս առաքեալի եւ նրա քոյր Մարիամնայի հետ քարոզչական գործունէութիւնը Փոքր Ասիայում, Փիլիպոսի նահատակութիւնից յետոյ Բարթուղիմէոսի քարոզչական գործունէութիւնը «Հնդկաստանից մինչեւ Մեծ Հայք», առաքեալի նահատակութիւնը, մասունքների ճակատագիրը եւ պաշտամունքը, պատկերագրութիւնը:

Անդրադառնանք «Հնդկաստանից մինչեւ Մեծ Հայք» բաժնին. «Բարթուղիմէոս առաքեալը միսիոներական ճամփորդութիւն է անում Սեւ ծովի ափով: Եւ վերջապէս ուղեւորւում է աւետարանելու Մեծ Հայք եւ Կովկասեան Ալբանիա... *Հին Կովկասեան Ալբանիան ներկայիս Ադրբեջանի տարածքն ընդգրկող պետութիւն էր»[30]: Այս հեղինակը նոյնպէս, հաւանաբար, չգիտի, որ առաջին դարում «Կովկասեան Ալբանիա» անունով պետութիւն չկար, չկար նաեւ «հին Կովկասեան Ալբանիա պետութիւն», ինչպէս չկայ «նոր Կովկասեան Ալբանիա» եւ, ինչպէս երեւում է, չգիտի նաեւ, որ «հին Կովկասեան Ալբանիան» ժամանակակից Ադրբեջանի տարածքն են համարում միայն* որոշ ժամանակակից հեղինակները, *որոնք յայտնի են, մեղմ ասած, պատմական աղբիւրների խիստ ընտրողական օգտագործմամբ եւ առանձնայատուկ մեկնաբանութեամբ, այլապէս առնուազն կը գրէր. «ըստ որոշ հեղինակների»: Այս հեղինակին պէտք է յիշեցնել, որ «Հին Կովկասեան Ալբանիա» արտայայտութիւնն օգտագործել է հետազօտող Ալ. Եանովսկին՝ 1846 թ. հրատարակուած մի աշխատանքում, ընդ որում հիմնաւորել է «հին» բառի իմաստը. նա փորձել է ներկայացնել Ալբանիա պետութեան միայն անտիկ շրջանի յունա-հռոմէական տեղեկութիւններով ծածկուող հնագոյն շրջանը[31]: Ա. Եանովսկին, ի հարկէ, ոչինչ չի գրում այդ Ալբանիայում քրիստոնէական առաքեալների գործունէութեան մասին, քանի որ այդ մասին ոչինչ չեն գրել այդ շրջանի հեղինակները: Ճիշտ այնպէս, ինչպէս նրանք չեն*

29 **Маркова А. А.** (сост.), *Святые апостолы*, М.: Благовест, 2013.

30 **Апостол Варфоломей,** Проповедь от Индии до Великой Армении,- Маркова А. А. (сост.), *Святые апостолы*, М.: Благовест, 2013.

31 **Яновский А.,** *О древней кавказской Албании*,- «Журнал Министерства народного просвещения», 1846, т. 52, ч. 2, с. 97-136, 161-203.

գրել Բաքու, Դերբենդ, Շամախի, Շաքի եւ այլ քաղաքների մասին այն պարզ պատճառով, որ դրանք անհասկանալի «հին Ալբանիայում» պարզապէս գոյութիւն չեն ունեցել: «Ալբանիան» ինքնին միայն հին անուն է, աւելի «հին Ալբանիա» պարզապէս չկայ: Եանովսկին յիշեցնում է, որ ըստ Ստրաբոնի՝ ալբանները ո՛չ ծովը, ո՛չ ծովափը չէին օգտագործում: Նա գտնում է, որ նոյնիսկ V դարում Դերբենդից եւ X դարի Բաքուից բացի Ալբանիայի տարածքում Կուր գետից մինչեւ Թերէք գետ ծովափնեայ որեւէ բնակավայր չի եղել ընդհուպ մինչեւ XIX դար, որտեղ գոնէ որեւէ նաւահանգիստ լինէր[32]:

Զնայած Ա. Ա. Մարկովայի աշխատանքում այս մասի ենթավերնագիրը Բարթուղիմէոսի քարոզչութիւնը «Հնդկաստանից Մեծ Հայք» է, հեղինակը Մեծ Հայքից յիշում է միայն Մ. Բուլգակովի պատմութիւնը Բարթուղիմէոսի կողմից Պոլիմիոս թագաւորի դստեր բժշկութեան մասին, մէկ տողով ասում է, որ Գողթնում նա Կումսի անունով մէկին եպիսկոպոս է ձեռնադրել, որից յետոյ «անցել է Կովկասեան Ալբանիայի խորքերը»: Ըստ հեղինակի՝ «Որոշ հետազօտողների կարծիքով՝ Բարթուղիմէոս առաքեալի նպատակը հէնց Կովկասեան Ալբանիան էր, քանի որ անցեալում Հնդկաստանի եւ Կովկասեան Ալբանիայի միջեւ հաստատուած էին կրօնական եւ առեւտրական մերձաւորագոյն կապեր, որոնք պայմանաւորուած էին այդ երկրներում զրադաշտական կրօնի տարածուածութեամբ» (փաստացի պատճէնում է աստուածաբանութեան թեկնածուի ատենախօսութիւնից – Հ. Խ.): Նա բացատրում է, որ զրադաշտականութեան գլխաւոր աստուածութեան՝ Ահուրա-Մազդայի պաշտամունքն արտայայտւում էր նախ եւ առաջ կրակի պաշտամունքով, այդ պատճառով զրադաշտականներին կրակապաշտներ էին անուանում: Կովկասեան Ալբանիայում զրադաշտական պաշտամունքի բազմաթիւ տաճարներ կային,- ստեղծագործում է Մարկովան: Քարաւանային ճանապարհները Հնդկաստանից, Իրանից եւ Հայաստանից հէնց այդ տաճարներն էին գնում» (!!! Սա էլ տարօրինակ է, քանի որ այդպիսի տաճարների մասին ոչ մի «հին հեղինակ» ոչինչ չի գրել – Հ. Խ.): Մարկովան հաւանաբար չգիտի, որ «Կովկասեան Ալբանիայում» առաջին դարում, ըստ Ստրաբոնի, պաշտում էին Հելիոսին, Զեւսին եւ Սելենային, այլ կերպ ասած՝ Արեւի, Երկնքի եւ Լուսնի աստուածներին կամ հէնց Արեւը, Երկինքը եւ Լուսինը, յատկապէս՝ Լուսինը, ինչպէս նաեւ, անշուշտ, ողջ տարածաշրջանի ժողովուրդների նման՝ հողի, բերքի, կենդանիների, մայրութեան հովանաւոր աստուածութիւններին, որոնց պաշտամունքը սպասարկում էին տեղական քրմերը[33]: Հեղինակն աղբիւր չի յղում նաեւ, թէ որտեղի՞ց է իրեն յայտնի, որ «Հնդկաստանից, Իրանից եւ Հայաստանից» գնում էին Ալբանիայի կրակապաշտական տաճարները, ովքե՞ր էին գնում՝ առեւտրականնե՞ր, մոգե՞ր, սովորական հաւատացեալներ, եւ ինչո՞ւ էին գնում: Ըստ անտիկ հեղինակների՝ Ալբանիայում ոչ առեւտուր կար, ոչ արտադրութիւն, նոյնիսկ թուաբանական պարզ հաշուարկ չգիտէին, ինչը յատուկ ընդգծել է Ստրաբոնը: Իսկ այդ ժամանակաշրջանի կրօնական արարողութիւնների միակ կենտրոնը, որի մասին յայտնի է, գտնւում էր Վրաստանի մօտերքը. դա մայրաքաղաք Կապաղակ/Կաբալայից էլ արեւմուտք էր, որը բնականաբար որեւէ առնչութիւն չունէր ծովափի հետ, եւ որը յետագայում դարձաւ քրիստոնեայ Ալբանիայի առաջին կրօնական կենտրոնը՝ շարունակելով «քրմերի շրջանի դերը»:

32 **Яновский А.**, *О древней кавказской Албании*, с. 132.

33 **Тревер К. В.**, *Очерки по истории и культуре Кавказской Албании, IV до н.э. – VII в. н.э.*, Москва-Ленинград, 1959, с. 150-156.

Ակնյայտորէն՝ որեւէ տեղեկութիւն չկայ այնտեղ գնացող «բազմաթիւ ուխտաւորների» մասին: Այնտեղ գնալը նոյնիսկ վտանգաւոր էր, քանի որ մարդկային զոհաբերութիւններ էին անում:

Անյայտ է, ի հարկէ, թէ որտեղի՞ց է Ա. Մարկովային յայտնի, օրինակ, որ «Բարթուղիմէոսի նպատակը հէնց Կովկասեան Ալբանիան էր»: Շրջանցելով Մեծ Հայքում Բարթուղիմեսի գործունէութեան մասին առատագոյն աղբիւրները, տեղեկութիւնները եւ վերլուծութիւնները, Մարկովան արագ ուրուագծում է Մեծ Հայքում Բարթուղիմէոսի «հրաշքներն» ու անմիջապէս անցնում տեղեկատուական եւ վերլուծական նիւթեր չունեցող «Կովկասեան Ալբանիային». «...Բարթուղիմէոս առաքեալի քարոզչութիւնը եւ դրա հետեւորդները աննկատ չմնացին: Կովկասեան Ալբանիայի տարածքում Բարթուղիմէոսի քարոզչութիւնն սկսելուն արագօրէն յաջորդեց նրան բռնելու Սանատրուկ թագաւորի հրամանը, ինչն արեց Պոլիմիայի ազգական Աստիագը»: Տարաբախտ Ա. Մարկովան, ըստ երեւոյթին, այնքան է դժուարացել Բարթուղիմէոսի գործունէութիւնը «Կովկասեան Ալբանիայում» եւ յատկապէս Բաքուում «տեղաւորելու» գործում, որ չի նկատել, թէ ո՞վ է Սանատրուկը, ո՞վ է Աստիագը, ո՞վ է Պոլիմիան, որտե՞ղ նրանք «նկատեցին Բարթուղիմեսի գործունեութիւնն Ալբանիայում» եւ առհասարակ ի՞նչ կապ ունէին նրանք Ալբանիայի հետ: Մի տեղ Սանատրուկը անյայտ երկրի թագաւոր է, Աստիագը՝ Պոլիմիայի ազգականը, Պոլիմիան ինքը՝ իշխան Մեծ Հայքում, որին, պարզւում է նաեւ կանացի անունով Ոգուհի են կոչում: Մէկ այլ նախադասութիւնում Աստիագն ինքն է անյայտ երկրի թագաւոր, եւ Բարթուղիմէոսի վարքը ներկայացնող աղբիւրում Սանատրուկ թագաւորն ինքը հէնց Աստիագն է: Այս բոլոր անունները Բարթուղիմէոսի գործունէութիւնը ներկայացնող հայկական աղբիւրներում առկայ են, բայց դրանք Մեծ Հայքում գործող կերպարներ են, եւ նրանց վերագրուող դերերը տարբեր են Մարկովայի պատկերացրածներից: Մարկովան ջանացել է նրանց «տեղաւորել» «Կովկասեան Ալբանիայում» եւ, ի հարկէ, խճճուել է: Ի վերջոյ նա մի կերպ հասնում է Բարթուղիմէոսի նահատակութեան իրեն ցանկալի կամ իրեն առաջարկուած հանգրուանին՝ «առաքեալը տարուեց Ալբան (Ալբանոպոլիս) քաղաք՝ ներկայիս Բաքու քաղաքի տարածքում: Այդ ժամանակաշրջանում Ալբանոպոլը Ալբանիայի կրօնական կենտրոնն էր, քրմերով-մոգերով բնակեցուած պաշտամունքային քաղաքը: Հրաշագործին եւ քարոզչին պատժելու համար քրմերը նրան բերեցին իրենց կրօնական կենտրոն, որտեղ հեթանոսական տաճարի սուրբ կրակի աստիճաններին գլխիվայր խաչեցին սուրբ տառապեալին, ողջ-ողջ մորթազերծեցին եւ գլխատեցին: Դա տեղի ունեցաւ Քրիստոսի Ծննդեան 71-րդ տարում: Հաւատացեալները նրա աճիւնը դրեցին թիթեղեայ տուփում եւ թաղեցին»:

Մարկովան այնուհետեւ անցնում է առաքեալի մասունքների ճակատագրին եւ Բարթուղիմէոսի պաշտամունքի յետագայ դրսեւորումներին: Պարզւում է, որ քրիստոնէութեան պաշտօնականացումից յետոյ Բարթուղիմէոսի պաշտամունքը տարածուել է գլխաւորապէս Բիւզանդիայում մի անհատի՝ Յովսէփ (Իոսիֆ) վարդապետի մօտ առաքեալի մասունքների մի մասի յայտնուելու պատճառով եւ Յովսէփի ջանքերով: Նա, յամենայն դէպս, աւելացնում է, որ «Բարթուղիմէոս առաքեալը պաշտւում է յատկապէս Հայ Առաքելական Եկեղեցու կողմից, որն իր առաքելական ժառանգորդումը հիմնել է Հայաստանի տարածքում 12 առաքեալներից ա յս առաքեալի գործունէութեան վրայ»: «Կովկասեան Ալբանիայում»՝ «ներկայիս Ադրբեջանում», նրա մասունքների պաշտամունքի հետքեր կարծէք թէ Մարկովային յայտնի չեն:

Մինչդեռ հէնց այս «ժամանակակից Ադրբեջանում» նա կարող էր դրանք գտնել, միայն թէ դրանք Բաքուում չէին, այլ Կուր գետի աջ ափում գտնուող հայաբնակ մասում էին՝ պատմական Մեծ Հայքի Ուտիք եւ Արցախ նահանգների տարածքում: Ուշագրաւ է, որ ոչ մի յօդուածագիր որեւէ տեղեկութիւն չի տալիս Բաքուում նահատակուած Բարթուղիմէոսի թաղման վայրի մասին, այդ թւում՝ Ալբանիայի պաշտօնական քրիստոնէացումից յետոյ:

Առայժմ չանդրադառնալով հայկական աղբիւրներին՝ այստեղ նշենք, որ Բարթուղիմէոսի նահատակութեան վայրի մասին քրիստոնէական աւանդոյթի տարբերակները բոլորովին վերջերս քննարկուել է D. P. Curtin, Agnes Smith Lewis, Alexander Walker, The Martyrdom of St. Bartholomew: Greek, Arabic, and Armenian versions. Dalcassian Press, 2014 (44 pp.), աշխատանքում: Աշխատանքի նիւթերի աղբիւրներում բնականաբար ոչ մի Կովկասեան Ալբանիա կամ Բաքու չեն յիշատակւում, բայց հեղինակները մատնանշում են, որ «այս առաքեալի կեանքի, գործունէութեան եւ նահատակութեան առասպելները բազմազան են: Բոլոր պատմութիւններում Հայաստանը յիշատակւում է որպէս նրա նահատակութեան տարածք եւ [Բարթուղիմէոսը] որպէս այդ երկրում եկեղեցու հիմնադիր: *Այնուամենայնիւ նրա գործունէութեան մէջ դեռ նշանակալի գաղտնիքներ կան: Այս տեքստը նրա կեանքի մասին ներառում է տարբեր ժամանակաշրջանների եւ մշակոյթների երեք տարբեր պատմութիւն: Յունական պատմութիւնը մանրամասներ քիչ ունի եւ հաւանաբար կազմուել է VI դարում Հիւսիսային Միջագետքում նեստորական հեղինակի կողմից: Արաբական պատմութիւնը հաւանաբար թուագրւում է VII կամ VIII դարերով, եւ նոյնպէս համառօտ է: Հայկական պատմութիւնը առաւել ամբողջականն ու մանրամասն է, եւ այստեղ անգլերէն լեզուով հրատարակւում է առաջին անգամ, առանց կրճատումների»: Չնայած աշխատանքը հրատարակուել է 2014 թ., երբ արդէն այս կամ այն չափով տարածուել էր Բարթուղիմէոսի նահատակութեան վայրի մասին մասին Ռուս Ուղղափառ Եկեղեցու նախաձեռնած «նոր պատմութիւնը», դրան անդրադարձ չկայ:*

Ինչպէս տեսնում ենք, Ռուս Ուղղափառ Եկեղեցին նոր աւանդապատումի/առասպելի յայտ է ներկայացրել Բարթուղիմէոս առաքեալի գործունէութեան եւ նահատակութեան վայրի մասին, ընդ որում խեղաթիւրելով նաեւ այս առաքեալի վերաբերեալ Ռուս Ուղղափառ Եկեղեցու 300 տարի առաջ ձեւաւորուած աւանդոյթը: Այս միանգամայն նորահնար առասպելը լայնօրէն տիրաժաւորուել է եւ շարունակում է տիրաժաւորուել Ռուս Ուղղափառ Եկեղեցու Հանրագիտարանների եւ թեմերի էլեկտրոնային կայքերում ու այսպէս կոչուած գիտաժողովներում եւ գլխաւորապէս յղւում է «գիտական» յաւակնութիւններով որոշ ադրբեջանական գրքերում:

Ռուսական այս նոր առասպելաշինութիւնը, ճիշտ է՝ խիստ ժամանակակից, այնուամենայնիւ արդէն փոքրիկ գործնական նախապատմութիւն ունի: 2001 թ. մի տեղեկութեան համաձայն՝ 2001 թ. Մայիսի 26-ին Մոսկուայի եւ համայն Ռուսիայի պատրիարք Ալեքսի II-ը գնացել է Բաքու եւ «հաղորդակցուել» Սուրբ Բարթուղիմէոսի՝ Բաքուի եկեղեցում «պահուող» մասունքների հետ: «Մոսկուայի եւ ողջ Ռուսիայի սուրբ Պատրիարք Ալեքսի II-ը ի պատիւ Սուրբ Աստուածածնի Ծննդեան, 2001 թ. Մայիսի 26-ին Բաքուում խոնարհուում է Բարթուղիմէոս առաքեալի մասունքներին»[33]:

Սա մի փոքր տարօրինակ է, քանի որ, ըստ այլ տեղեկութիւնների, Կոստանդնուպոլսի պատրիարք Բարթուղիմէոսը միայն 2003 թ. Ապրիլի 16-ին է Բաքուի «սուրբ Իւղաբեր կանանց» [Святых Жён-

Мироносиц][34] *տաճարին նուիրել Բարթուղիմէոս առաքեալի մասունքներով տուփը*[35]*: Այդ արարողութիւնը, ի հարկէ, կրկին հռչակագրել է, որ Բաքուն Բարթուղիմէոս առաքեալի նահատակութեան վայրն է: Բայց յայտարարուել է նաեւ, որ Բարթուղիմէոսը միաժամանակ Ադրբեջանի ուղղափառների հովանաւորն է. «Բաքու. Ինչպէս հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, Կոստանդնուպոլսի պատրիարք Վարֆոլոմեյը Ապրիլի 16-ին Բաքուի եւ Մերձկասպեան [տարածքի] եպիսկոպոս Ալեքսանդրին փոխանցել է Սուրբ առաքեալ Բարթուղիմէոսի մասունքների մի մաս: Դա Ադրբեջանի ուղղափառ եպիսկոպոսութեան համար յատուկ սրբութիւն է, [քանի որ] այդ եպիսկոպոսութիւնն իր հովանաւորն է համարում Սուրբ Բարթուղիմէոսին, ով երկու հազար տարի առաջ իր տառապալի վախճանն է գտել ժամանակակից Բաքու քաղաքի տարածքում» [Հաղորդման բնագիրը. БАКУ. Как передает ИТАР-ТАСС, Патриарх Константинопольский Варфоломей передал 16 апреля епископу Бакинскому и Прикаспийскому Александру часть мощей святого апостола Варфоломея. Это особая святыня для православной епархии Азербайджана, которая считает своим покровителем святого Варфоломея, принявшего две тысячи лет назад мученическую кончину на территории современного Баку]: Ուրեմն Բարթուղիմէոսի ի՞նչ մասունքների հետ է հաղորդակցուել Ալեքսի II-ը 2001 թուականին Բաքուում, եթէ այնտեղ դրանք յայտնուել են միայն 2003 թ.:*

Բարթուղիմէոսի մասունքները 2003 թ. Բաքու բերելու մասին տեղեկութիւնը ուղեկցուել է լրացուցիչ «բացատրութեամբ». «Բարթուղիմէոս առաքեալի վախճանի եւ թաղման վայրի Ալբանա, Ալբանոպոլիս, Ուրբանոպոլիս, հետ կապուած տարաձայնութիւններ կան: Աւանդաբար այդ քաղաքը նոյնականացւում է ներկայիս Բաքու քաղաքի տարածքում եղած քաղաքի հետ *[բնականաբար, այս բացակայող «աւանդաբար»-ին որեւէ յղում կամ յիշատակութիւն չկայ - Հ. Խ.]: Ադրբեջանցի հնագէտները Բաքուի «կոյսի աշտարակի» մօտ պեղելիս յայտնաբերել են հին տաճարի մնացորդներ, որը նոյնականացուել է առաքեալի նահատակութեան վայրում կառուցուած բազիլիկի հետ [!!! – Հ. Խ.]: 2003 թ. Կոստանդնապոլսի պատրիարք Վարֆոլոմեյը Բաքուում այցելել է առաքեալի թաղման ենթադրեալ վայր: Այլ վարկածով Բարթուղիմէոս առաքեալը թաղուել է Արեւմտեան Ադրբեջան նահանգում (այժմ Իրան), որտեղ 14-րդ դարում կառուցուած է եղել Սուրբ Բարթուղիմէոսի վանքը»*[36]*: Այս մի փոքրիկ պարբերութիւնում մի շարք կեղծիքներ կան: Նախ՝ ի՞նչ է նշանակում «Արեւմտեան Ադրբեջան (այժմ Իրան)»: Իրանը Արեւմտեան Ադրբեջա՞ն է: Երկրորդ պատմական Ատրպատականում ներկայիս Իրանի հիւսիսում գտնուող Բարթուղիմէոսին նուիրուած վանք չկայ: Կայ Թաւրիզ քաղաքում գտնուող Բարթուղիմէոսի անուան եկեղեցի: Հայերի կողմից Սուրբ Բարթուղիմէոսի վանքը կառուցուել է XIII դարում՝ Մեծ Հայքի Աղբակ գաւառում, որը հայկական աւանդոյթով, ինչի մասին կը խօսուի ստորեւ, առաքեալի նահատակութեան վայրն է, եւ որն այժմ Թուրքիայի տարածքում է: Եւ վերջապէս՝ ռուսական*

34 Քրիստոսի յարութեան յաջորդ օրուայ առաւօտեան մեռոնով Քրիստոսի մարմնի ծիսական օծման համար թաղման վայրը գնացած կանայք:

35 Константинопольский Патриарх передал православным Азербайджана часть мощей св. апостола Варфоломея,- Седмица.RU, Церковно-научный центр «Православная Энциклопедия» (https://www.sedmitza.ru/text/283547.html) (այցելութիւնը կայք՝ 01.08.2014)

36 Варфоломей, Апостол,- https://drevo-info.ru/articles/6107.html (վերջին այցելութիւնը կայք՝ 28.05.2025).

կայքը, տեղեկութեան «պաշտամունք» (Почитание) բաժնում անփութօրէն չնկատելով՝ այդ վանքի անունը գրել է այնպէս, ինչպէս իրականում կայ՝ հայերէն լեզուով՝ ռուսերէն տառերով՝ «Сурб Барфоломеос» (Սուրբ Բարթուղիմէոս), ոչ թէ ռուսերէն՝ «святой Варфоломей»: Կամ՝ անունը «պատճէնել է» հայկական կայքերից:

Այժմ Ռուս Ուղղափառ Եկեղեցու բոլոր թեմերի կայքերը մրցակցում են Բարթուղիմէոս առաքեալին «Բաքուում տեղաւորելու» ջանքերում: Մոսկուայի պատրիարքութեան պաշտօնական կայք «...հեթանոս քրմերի մեքենայութիւնների հետեւանքով թագաւորի եղբայր Աստիագը բռնեց Առաքեալին Ալբան քաղաքում (այժմ Բաքու քաղաքը) եւ կախեց գլխիվայր» [«...По проискам языческих жрецов, брат царя Астиаг схватил Апостола в городе Альбане (ныне город Баку) и распял вниз головой»[37]]: Այստեղ արդէն «Ալբան, ներկայիս Բաքու քաղաքը» առանց որեւէ տարակուսանքի, վարկածի, մեկնաբանութիւնների, ծանօթագրութիւնների, «աւելորդ» լրացուցիչ բացատրութիւնների «Բաքու» քաղաքն է եւ Բարթուղիմէոսի նահատակութեան վայրը: Մի քանի օրինակ եւս. «Հեթանոս քրմերի մեքենայութիւններով թագաւորի Աստիագ անունով եղբայրը Ալբան քաղաքում (այժմ Բաքու քաղաք) *բռնեց առաքեալին եւ գլխիվայր խաչեց: ... Աստիագի հրամանով Առաքեալին մորթազերծեցին եւ գլխատեցին. Հաւատացեալները նրա մնացորդները դրեցին տուփի մէջ եւ թաղեցին» [բնագրում. «По проискам языческих жрецов, брат царя Астиаг схватил Апостола в городе Альбане (ныне город Баку) и распял вниз головой. ... по приказу Астиага, содрали с Апостола кожу и отсекли главу. Верующие положили его останки в оловянную раку и погребли»[38]]:* «Ալբան քաղաքում (այժմ Բաքու) *սուրբ Բարթուղիմէոսին հեթանոս քրմերի մեքենայութիւնների հետեւանքով բռնել են եւ գլխիվայր խաչել. Բայց առաքեալը շարունակում էր քարոզել Աստծոյ Խօսքը, եւ նրա մաշկը քերթեցին ու գլուխը հատեցին» [բնագրում՝ «В городе Альбане (ныне – Баку) свя того Варфоломея схватили по проискам языческих жрецов и распяли вниз головой. Однако апостол продолжал проповедовать Слово Божие и тогда с него содрали кожу и отсекли голову»]*[39]*: Ռուս Ուղղափառ Եկեղեցու Մինսկի թեմի կայքը տեղեկացնում է. «առաքեալին բռնել են* Ալբան (այժմ՝ Բաքու, Ադրբեջանի մայրաքաղաքը) *քաղաքում եւ գլխիվայր խաչել» [բնագրում. «Апостол был схвачен в городе Альбане (ныне Баку, столица Азербайджана) и распят вниз головой»]*[40]*; 2024 թ. Յունիսի 24-ին «ուղղափառութիւնը Թաթարստանում» [«Православие в Татарстане»] կայքի խմբագրութիւնը տեղեկացնում է, որ Քրիստոսի 12 առաքեալներից Բարթուղիմէոսը Փիլիպոս առաքեալի հետ գնացին քարոզելու Սիրիայում եւ Փոքր Ասիայում: Հիերոպոլիսում [հրաշքներ] գործեցին, [բայց] տեղի դատարանի որոշմամբ Փիլիպոս եւ Բարթուղիմէոս առաքեալներին խաչ հանեցին: Սարսափելի երկրաշարժ սկսուեց, եւ գետինը կլանեց քաղաքի կառավարչին, քրմերին*

37 Святой апостол Варфоломей,- http://www.patriarchia.ru/db/text/910795.html (վերջին այցելութիւնը կայք՝ 28.05.2025).

38 Святые апостолы Нафанаил, Лука и Климент // https://www.crkvenikalendar.com/zitije_ru.php?pok=0&id=VABAVG (վերջին այցելութիւնը կայք՝ 28.05.2025).

39 Сегодня, 24 июня, *Церковь вспоминает святого апостола Варфоломея*. 1 мин., 24.06.2024 // https://foma.ru/cerkov-vspominaet-svjatogo-apostola-varfolomeja.html (վերջին այցելութիւնը կայք՝ 28.05.2025):

40 Апостол из 12-и Варфоломей (Нафанаил),- https://obitel-minsk.ru/svyatye/06/24/apostol-varfolomej (վերջին այցելութիւնը կայք՝ 28.05.2025):

ու բազմաթիւ մարդկանց: Փիլիպոսը մահացաւ, իսկ Բարթուղիմէոսը կենդանի մնաց. Աստծոյ կողմից բժշկուեց եւ գնաց Հնդկաստան: Բռնել են Ալբանում (այժմ Բաքու) եւ գլխիվայր խաչել, յետոյ մորթազերծ արել ու գլուխը հատել»: Դժուար է, ի հարկէ, պատկերացնել, թէ ինչպէս է «Ալբանայժմ Բաքուն» յայտնուել Հնդկաստանում:

Իսկ ահա Ֆլորիդա նահանգի Ֆորստ Մայերսի Ռուս Ուղղափառ Եկեղեցու Սուրբ Նիկոլայի վանքում մի քայլ առաջ են անցել. այստեղ «Մեծ Հայքը»-ը «Մեծ Ալբանիա» է դարձել. «... ըստ աւանդութեան առաքեալը գնացել է քարոզելու Հարաւային Կովկասի Մեծ Ալբանիայում: *Այդ հողերում ապրում էին հեթանոս կրակապաշտներ, որոնց մէջ սուրբը յաջողութեամբ քարոզում էր, ինչին նպաստում էին աւետմանը ուղեկցող հրաշքները: Մասնաւորապէս առաքեալը բուժել է տեղական թագաւորի հիւանդ դստերը:* Ըստ աւանդութեան՝ 71 թ. Ալբան քաղաքում, որը որոշ հետազօտողներ նոյնականացնում են ժամանակակից Բաքուի հետ, հեթանոս քրմերը յաջողացրել են Բարթուղիմէոս առաքեալի ձերբակալութիւնը եւ դատապարտումը... *Ադրբեջանի մայրաքաղաքի հէնց կենտրոնում պեղումների ժամանակ գտնուել են առաքեալի մահուան վայրում կառուցուած հին բազիլիկի աւերակները»*[41]: *Հասկանալի է ոչ մի խօսք այն մասին, թէ ինչպէ՞ս են նոյնականացրել առաքեալի մահուան վայրը:*

Բնականաբար, այս կեղծիքի տարածման գործում շատ ակտիւ է Ռուս Ուղղափառ Եկեղեցու Բաքուի եւ Ադրբեջանի թեմի «Ուղղափառութիւնը Ադրբեջանում» (Православие в Азербайджане) կայքը: Այն մասնաւորապէս բացատրում է, որ «Ադրբեջանը ոչ միայն Արեւելքի, այլեւ ողջ երկրագնդի հնագոյն ռեգիոններից մէկն է [տպաւորութիւն է, որ երկրագնդի վրայ կան հին ու նոր ռեգիոններ, «երկրագնդի ռեգիոնները» ժամանակի ընթացքում «յայտնուել եւ/կամ անհետացել են», – Հ. խ.]: Նրա պատմութիւնն իր արմատներով հասնում է հնագոյն անցեալ: Ըստ Աստուածաշնչի հաղորդման հէնց այս տարածքն է այն վայրը, որտեղ ջրհեղեղից յետոյ հանգրուանել է հին կտակարանի նախահայր Նոյի փրկուած ընտանիքը: Ադրբեջանի եւ Հարաւային Կովկասի յարակից երկրների պատմութիւնը Առաջաւոր Ասիայի պատմագրութեան հետաքրքրագոյն էջերից է... Ժամանակակից Ադրբեջանի եւ Հարաւային Դաղստանի հողերը պատմականօրէն մտել են Կովկասեան Ալբանիա պետութեան կազմի մէջ: Կովկասեան Ալբանիայում եղել է ինքնուրոյն, առաքելական սկիզբ ունեցող Ալբանական Եկեղեցի: Տարբեր պատճառներով այնպէս է ստացուել, որ ալբանական ժողովուրդը չի կարողացել պահպանել իր պետական եւ եկեղեցական ինքնուրոյնութիւնը: Այն պահին, երբ Կովկասեան Ալբանիայի Եկեղեցին գործնականում դադարեց գործել, ոչ առանց Աստծոյ կամքի փոխուեց Կովկասի աշխարհաքաղաքական քարտէզը: Ադրբեջանը եւ Դաղստանը մտան Ռուսական կայսրութեան ազդեցութեան գօտի, եւ այստեղ իր փրկչական առաքելութիւնն սկսեց Ռուս Ուղղափառ Եկեղեցին: Հէնց նրա շնորհիւ այս հողում քրիստոնէութիւնը չվերացաւ: Բաքուի թեմը դարձաւ պատմական Ալբանիայի-ներկայիս Ադրբեջանի եւ Դաղստանի առաքելական մշակութեան շարունակողը: Նրա առաքելութիւնը նաեւ երբեմնի Կովկասեան Ալբանիայի Եկեղեցու հիմնադրած փոքր հօտին հոգեւոր կերակուր տալն է: Կովկասեան Ալբանիայում քրիստոնէութեան տարածման սկզբնական փուլը կապուած է սուրբ առաքեալ Բարթուղիմէոսի եւ Թադէոսի, ինչպէս նաեւ

41 Святой апостол Варфоломей (I в.),- http://floridamonastery.org/svyatoj-apostol-varfolomej-i-v/ (վերջին այցելութիւնը կայք՝ 28.05.2025):

Թադէոսի աշակերտ սուրբ Եղիշէի գործունէութեան հետ»[42]: Յօդուածն այնուհետեւ շարունակում է Ռուս Ուղղափառ եկեղեցու հոգեւորական Նիկոնորովի վերը ներկայացուած տեքստը:

Այս կայքում «Կովկասեան Ալբանիան» յաճախ մոռացւում է, առաջին դարի դէպքերը ծաւալւում են ուղղակի Ադրբեջանում. «Ադրբեջանի հողում քրիստոնէութիւնը յայտնուել է դեռեւս առաքելական ժամանակներում: Ըստ աւանդապատման՝ առաջին քարոզիչը եղել է Բարթուղիմէոս առաքեալը [հէնց այստեղ էլ տառապագին մահ է գտել]» եւն: Յօդուածագիրն այնուհետեւ տեղեկացնում է, որ «աղուանական ցեղային հին միաւորումից մնացել է քրիստոնէութեանը հաւատարիմ մի ժողովուրդ, ուդիները... որը ջանում է իր կրօնական ինքնորոշումը եւ կանոնական յարաբերութիւնները վերականգնել... նրանցից շատերն ուղղափառ են ... եւ աւելի քան հազարամեակով նախաքաղկեդոնիկ եկեղեցում մնալուց յետոյ վերադառնում են ուղղափառութեանը»[43]: Անշուշտ «մոռացւում է», թէ ինչպէս են հարիւրամեակներ շարունակ ուդիները ջանացել պահպանել իրենց կրօնական ինքնորոշումը՝ Հայ Առաքելական Եկեղեցին[44]: Նորահնար այս առասպելը զարդարւում է նոյնքան նորահնար մանրամասներով՝ Բարթուղիմէոսին աւելանում է Թադէոսը. «Ադրբեջանի քրիստոնէական ժառանգութիւնը երկրի հնագոյն պատմութեան մէջ խոր արմատներ ունի եւ նշանակալի դեր է խաղացել նրա զարգացման գործում: Մ.թ. առաջին դարից քրիստոնէութիւնն այս տարածաշրջան է բերուել Բարթուղիմէոս եւ Թադէոս առաքեալների կողմից»[45]:

Միշտ չէ, որ կայքի յօդուածագիրները հասկանում են, թէ ինչպէս հիմնաւորեն իրենց ցանկալի, բայց անցեալի աղբիւրներ չունեցող աւանդազրոյցները, եւ երբեմն նրանց տեքստերում յայտնւում են Բարթուղիմէոսի գործունէութեան մասին հայերէն տեքստերի տեղանուններ: Օրինակ՝ հայերէնից պատճէնում են «Աղբակ» տեղանունը՝ գրելով «Агбак», բայց անուան կողքը փակագծերում «Բաքու» գրելը չեն մոռանում. «Սուրբ Բարթուղիմէոս առաքեալը Աւետարանի իր խօսքը բերեց Փոքր Ասիա, անցաւ Հնդկաստանով եւ Խալինեան (Կասպից) ծովի ափին Ալբանոպոլիս-Աղբակ (այսինքն՝ Բաքու) *քաղաքում խաչեցին խաչի վրայ» [ընագրում՝ «на берегу моря Хвалынского (Каспийского) в городе Альбанополе – Агбаке (т.е. в Баку)»][46]:*

Այս ողջ հնարովի քարոզչական նիւթը դարձել է Ալբանիայի առաքելական եկեղեցու հիմնաւորումների ռեսուրս: 2013 թ. տեղի ունեցած մի գիտաժողովի ժամանակ, որը անուանուել է «Քրիստոնէութեան ընդունման 1700-ամեակը Դերբենդում որպէս

---

42 История христианства в Азербайджане,- https://pravoslavie.az/history/christianity_in_azerbaijan_history/ (21.04.2025)

43 Православие в Азербайджане,- https://www.pravoslavie.ru/put/070126150112.htm#

44 **(Խառատեան) Առաքելեան Հ.,** *Եղիշէ առաքեալի պաշտամունքն ուդիների մէջ եւ Ուտի գաւառի տեղադրութեան հարցի շուրջ,-* «Լրաբեր հասարակական գիտութիւնների» (Երեւան), 1991, № 6, էջ 69-86; **Харатян Г.,** *Удины: крах всех усилий самосохранения // Официальные этно-демографические показатели в Азербайджане в контексте поиска и кризиса идентичности азербайджанцев.-* Удины: крах всех усилий самосохранения, Под ред. В. А. Захарова, Москва, «Центриздат», 2015; **Харатян Г.,** *Идентификационные и самоидентификационные термины удин-христиан по материалам армянских и удинских письменных источников и удинских эпитафий*, «Восток» (Oriens), 2021, № 5, с. 116-128.

45 Христианское наследие Азербайджана, 29.05. 2023 // https://ati.az/ru/blog/christian-heritage-of-azerbaijan

46 *История Православных храмов Азербайджана. Часовня святого апостола Варфоломея возле Девичьей башни в Баку*, 23.12.2021,- https://pravoslavie.az/history/orthodox_churches_azerbaijan_history/?id=13668

Կովկասեան Ալբանիայի պետական կրօն», բազմաթիւ գիտական յաւակնութիւններով ելոյթներ եղան: Այս հաւաքին Դերբենդի քաղաքապետը բացման խօսքում «ամփոփել է» Ռուս Ուղղափառ Եկեղեցու վերջին յայտարարութիւնները Բարթուղիմէոսի առաքելութեան մասին, որում կան առաջին դարի պատմութեան բոլոր դերակատարները, բայց դրանք բոլորը յայտնուել են... Ալբանիայում. «Քրիստոնէութեան պատմութիւնը Կովկասեան Ալբանիայում իր ծնունդով պարտական է Բարթուղիմէոս եւ Թադէոս առաքեալներին... Սուրբ Բարթուղիմէոսը Փոքր Ասիայից եւ Հնդկաստանից ուղղուել է Կովկասեան Ալբանիա ... չնայած առաքեալը բուժել էր այդ երկրի (ո՞ր երկրի, Ալբանիայի՞ – Հ. Խ.) կառավարչներից մէկի հիւանդ դստերը եւ մկրտել նրա ընտանիքը, այստեղ կառավարչի եղբայր՝ քրմերի կողմից ներշնչուած Աստիգին յաջողւում է բռնել սուրբ Բարթուղիմէոսին եւ բերել Ալբանիայի հին կրօնական կենտրոն՝ քրմերի Բարուկ (Ալբանոպոլիս, Ալբանա, Բաքու) քաղաք, որտեղ զրադաշտական դախմայի (Կոյսի աշտարակ) ստորոտում, Արտայի տաճարի աստիճաններին գլխիվայր խաչում են: ...Սա տեղի է ունեցել մ. թ. 68-71 թթ.»[47]:

Նոյն գիտաժողովում մէկ այլ զեկուցող, որպէս աղբիւր յղելով Մակարի Բուլգակովին, տեղեկացնում է լսարանին, որ «Բարթուղիմէոս առաքեալը, եկեղեցական աւանդոյթի համաձայն, նոյնպէս քարոզել է Քրիստոսի հաւատը Կովկասեան Ալբանիայում[48]*. Մ. Բուլգակովը, ինչպէս վերը տեսանք, գրել է Մեծ Հայքում Բարթուղիմէոսի գործունէութեան մասին: Այստեղ, փաստօրէն, շարունակւում է «Մեծ Հայքը» «Կովկասեան Ալբանիայով» փոխարինելու նորամուտ ճգպարարութիւնը:*

Յիշեալ գիտաժողովում այս ճգպարարութիւնը աւելի է սրում մէկ այլ հեղինակ՝ Գ. Ալիեւ անունով: Վերջինս Ալբանիայում, որը, ըստ նրա, «հարաւային Դաղստանն է, Բարթուղիմէոսի առաքելական գործունեութեան մասին տեղեկութիւնների գլխաւոր աղբիւր համարում է «հայ պատմաբաններին» «գլխաւորապէս հայ պատմաբանների հաղորդած աւանդութիւններով Բարթուղիմէոս առաքեալը քարոզել է Ալբանիայում, այսինքն՝ հարաւային Դաղստանում»[49]*: Պէտք է ենթադրել, որ Գ. Ալիեւը ինչ-որ ձեւով տեղեակ է, որ վաղ միջնադարի Ալբանիայի մասին տեղեկութիւններ հաղորդողները «գլխաւորապէս հայ պատմաբանները» պատմագիրներն են եղել, եւ հարկ չի համարել ստուգել իր ասելիքը, կամ գոնէ որեւէ «պատմաբանի» անուն յիշել: Իրականում որեւէ հայ պատմագիր Ալբանիայում Բարթուղիմէոսի որեւէ գործունէութեան մասին ոչինչ չի գրել:*

Այս զաւեշտալի գիտաժողովում նման «մարգարիտները» շատ են: Նրա զեկուցողներից երրորդը գրում է. «IV դ. սկզբներին Գրիգորիսը քրիստոնէութիւն էր տարածում Հայաստանի հարեւան երկու երկրներում

47 Вступительное слово и доклад главы администрации городского округа «Город Дербент» И. М. Яралиева,- «*1700-летие принятия христианства в Дербенте как государственной религии Кавказской Албании*»: Материалы Всероссийской научно-практической конференции (г. Дербент, 14-15 ноября 2013 г.) / Отв. ред. Сеидова Г. Н. Махачкала: АЛЕФ, 2013, с. 6.

48 **Абдурагимов Г. А.,** *Кавказская Албания – первая христианская страна на Кавказе и отражение в Библии элементов шумеро-гутийской духовной культуры,*- «1700-летие принятия христианства в Дербенте как государственной религии Кавказской Албании»..., с. 50.

49 **Алиев Г. А.,** *К вопросу о принятии христианства в Дербенте, как государственной религии Кавказской Албании,*- «1700-летие принятия христианства в Дербенте как государственной религии Кавказской Албании»..., с. 63.

Վրաստանում եւ Կովկասեան Ալբանիայում: Աստծուն ծառայելը յանգեցրեց նրա տառապալի զոհուելուն, ինչպէս Թադէոս եւ Բարթուղիմէոս առաքեալների [դէպքում]»[50]: *Հարցը՝ Թադէոսն ու Բարթուղիմէոսն է՞լ են զոհուել «Վրաստանում եւ Կովկասեան Ալբանիայում» քարոզելիս՝ բաց է մնում:*

Այս կեղծիքները եւ թերասացութիւնները լրացնում է եւս մէկ զեկուցող՝ Ռոբերտ Մոբիլին: Նրա զեկուցումը ուդիների մասին է, այսինքն՝ Ալբանիայի բազմաթիւ էթնիկական միաւորներից քրիստոնեայ մնացած միակ ժողովրդի: 1988-1989 թթ. այս արդէն իսկ անհետանալու եզրին հասած ժողովրդի հիմնական մասը իր հայրենիքից՝ Խորհրդային Ադրբեջանի Շաքիի, Կուտկաշէնի եւ Վարդաշենի շրջաններից փախաւ ֆիզիկական բնաջնջման վտանգից, ուդիները մնացին միայն մէկ գիւղում՝ Նիժում, շուրջ 2 հազար մարդ: Այս ժողովրդի մասին Ռ. Մոբիլին գիտաժողովում յայտարարում է, որ «ուդիների քրիստոնէութիւնն ու նրանց եկեղեցին անհնար է պատկերացնել առանց դրա կրոնների եւ հօտի, այսինքն՝ առանց նրանց, ովքեր դաւանում են իսլամ, յուդայականութիւն, քրիստոնէութիւն եւ զրադաշտականութիւն»: Այդպէս էլ չբացելով «ուդիական քրիստոնէութեան կրոնների եւ հօտի» գաղտնիքը, այսինքն՝ «իսլամ, յուդայականութիւն, քրիստոնէութիւն եւ զրադաշտականութիւն» դաւանողների կապը ուդիների քրիստոնէական եկեղեցու հետ, Ռ. Մոբիլին անցնում է Ալբանիայի պատմական անցեալին՝ գրելով. «Համարեա երկու հազար տարի առաջ [Ալբանիայում] սկսեցին ձեւաւորուել քրիստոնէական համայնքներ Բարթուղիմէոս առաքեալի քարոզչութեան սկզբից եւ տանջալի մահից յետոյ, ինչը հնարաւոր է դարձնում ենթադրել, որ Ալբանիայում աւետարանական սերմերն առաջինը ցանել է առաքեալն անձամբ կամ իր մերձաւոր օգնականների հետ: Ալբանապոլիսում (ժամանակակից Բաքու) նրա ներկայութիւնն անժխտելի է, ինչպէս նրա մերձաւոր գործընկեր Եղիշէի առաքելական գործունէութիւնը»[51]: Այս զեկուցողը նոյնպէս որեւէ վկայութիւն կամ աւանդազրոյց Ալբանիայի տարածքում քրիստոնէութեան երկուհազարամեայ գոյութեան մասին չի յիշատակում, ինչպէս չի յիշատակում Ալբանոպոլիս/Բաքու քաղաքի գոյութեանը եւ այդ քաղաքում Բարթուղիմէոսի քարոզչութեան մասին որեւէ աղբիւր, բայց «գիտի», որ դա «անժխտելի է»: Սակայն նա աւելացնում է, որ Բարթուղիմէոսի քարոզչութիւնից յետոյ Ալբանիայի տարածքում ձեւաւորուել են քրիստոնէական համայնքներ՝ կրկին չյիշելով այդ համայնքներից գոնէ մէկի մասին որեւէ աղբիւր, տեղեկութիւն: Նա միաժամանակ Բարթուղիմէոսի մերձաւոր գործընկեր է յայտարարում Եղիշէին, կրկին աղբիւր չյիշելով: Անշուշտ որեւէ ակնարկ չի անում այն մասին, որ Եղիշէի անունն առհասարակ հրապարակ է բերուել 7-րդ դարում միայն մէկ հեղինակի՝ Մովսէս Դասխուրանցու (Կաղանկատուացու) կողմից, ունեցել է քաղաքական նպատակ[52], եւ մինչեւ 7-րդ դար այդ անունը քրիստոնէական աշխարհի որեւէ հեղինակի ծանօթ չէր: Ինչ վերաբերում է ուդիների կրօնին եւ «ուդիական հօտի» կապին այլ կրօնների հետ, ապա դրան բաւական մանրամասն

50 **Егиазарян Т. Х.**, *Христианство в Дагестане*,- «1700-летие принятия христианства в Дербенте как государственной религии Кавказской Албании»..., с. 88.

51 **Мобили Р.**, *Удины и Албанская церковь*,- «1700-летие принятия христианства в Дербенте как государственной религии Кавказской Албании»..., с. 96.

52 **(Խառատեան) Առաքելեան Հ.**, *Եղիշէ առաքեալի պաշտամունքն ուդիների մէջ*, էջ 69-86; **Акопян А. А.**, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, с. 183-184; **Յակոբեան Ա.**, *«Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ.-Զ. դարերի Աղուանքում*, սն. 71-74:

կարելի է ծանօթանալ ծագումով ուղի Ղազար քահանայ Յովսէփեանի՝ XX դարասկզբի մանրամասն աշխատանքից եւ այդ նիւթի որոշ վերլուծութիւններից[53], ինչը, կարծէք թէ, Ռ. Մոբիլիին ծանօթ չէ:

«Եկեղեցական աւանդապատումի համաձայն՝ Հարաւային Կովկասում եղել են հինգ սուրբ առաքեալներ: Նրանցից չորսը՝ 12-ից՝ Անդրէասը, Մատթէոսը, Բարթուղիմէոսը, Յուդա Թադէոսը եւ մէկը եօթանասունից՝ Թադէոսը, իսկ Կովկասեան Ալբանիայում Քրիստոսի հաւատը քարոզել է Բարթուղիմէոս առաքեալը»,- գրում է մէկ այլ հեղինակ՝ Ս. Դ. Նադիրովան[54]: Այս հեղինակի տեղեկութեան աղբիւրը Ռուս Ուղղափառ Եկեղեցու հոգեւորական Ալեքսի/Անդրեյ Նիկոնորովն է, ով իր հերթին յղում է Դմ. Ռոստովսկու Յայսմաւուրքի անհասկանալի, 1992 թ. աւելացած կեղծ ծանօթագրութեանը[55]: Սա փակ շղթայ է. խնդրով շահագրգիռ բոլորը «գիտեն», որ Բարթուղիմէոսը «Ալբանիայի քարոզիչն է», «դա անժխտելի է», բայց 1992 թուականին աւելացրած ծանօթագրութիւնից աւելի վաղ ոչ մի տեղեկութիւն չկայ:

Ուշագրաւ է, որ 1998 թ. մի տարօրինակ, չնկատուած երեւոյթ է տեղի ունեցել նաեւ մէկ այլ յայտնի աշխատանքում: Խօսքը XVIII դ. հռոմա-կաթողիկէ եկեղեցու անգլիացի հոգեւորական Ալբան Բատլերի կազմած 12 հատորանոց «Սրբերի վարքը» աշխատանքի մասին է: Բարթուղիմէոսի մասին տեքստը 8-րդ հատորում է՝ Օգոստոս ամսին յիշուող սրբերի շարքում: Բազմաթիւ հրատարակութիւններ ունեցած այս աշխատանքի 1998 թ. ԱՄՆ Մինեսոտա նահանգում Burns&Oates հրատարակչութեան հրատարակած 8-րդ հատորը, John Cumming-ի նոր խմբագրութեամբ, Բարթուղիմէոսի վարքի նահատակութեան հատուածում Ալբանոպոլիս քաղաքի մասին լրացուցիչ ծանօթագրութիւն ունի, փակագծերում գրուած է. «Ժողովրդական աւանդազրոյցները եւ առասպելները ասում են, որ Բարթուղիմէոսը քարոզել է Հնդկաստանում, յետոյ գնացել է Մեծ Հայք: Շատ մարդկանց քրիստոնէական դարձի բերելուց յետոյ բարբարոսները նրան ողջ-ողջ մաշկահան են արել, որից յետոյ Աստիագ թագաւորը հրամայել է նրան գլխատել Ալբանոպոլիսում (Դերբենդ, Կասպից ծովի արեւմտեան ափին)» [բնագրում՝ «Popular traditions and legends say that Bartolomew prached the gospel in India, then went to Greater Armenia. After converting a number of people there he was flayed alive by the barbarians, where upon King Astiages ordered him to be beheaded of Albanopolis (Derbend, on the west coast of the Caspian Sea)»[56]]:

Այս աշխատանքի առաջին 1756 եւ 1773 թուականների[57], ինչպէս նաեւ յետագայ բազմաթիւ հրատարակութիւններում

53 **Յովսէփեան Ղ. քահ.**, *Ակնարկներ ուտիացի եւ մահմեդական հայերի մասին*, Թիֆլիզ, 1904; **Խաչատեան Հ.**, *Ուդիների ոդիսականը 18-19 դդ. (Պատմութիւն, էթնիկ գոյատեւում, ինքնահաստատում)*,- Հայոց Մեծ Եղեռն-90; Սիմոնեան Ա. (խմբ.), Երեւան, 2005, էջ 118-171; Նոյնի *Եղիշէ առաքեալի, Գրիգորիսի եւ Կովկասեան Աղուանքի քրիստոնէացման հարցի շուրջ (Կովկասեան Աղուանքի հին կրկնագիր-ձեռագրի վերծանութեան հրատարակութեան առիթով)*,- «Բազմավէպ» (Վենետիկ), № 1-2, էջ 19-75; Նոյնի՝ *Ուդիների կրօնը եւ հաւատալիքները ԺԹ.-Ի. դարերում*, «Հանդէս Ամսօրեայ» (Վիեննա), 2010, № 1-12, էջ 435-495:

54 **Сеидова Г. Н.**, *Христианство в Кавказской Албании*,- «Вопросы культурологии», № 3, 2020.

55 **Иеромонах Алексий (Никоноров)**. *История христианства в Кавказской Албании*. 2-е изд. Махачкала: Издательский дом «Эпоха», 2012.

56 St. Bartholomew,- Butler's Lives of the Saints: August. Vew full Edition, Revised by John Cumming, Burns&Oates, The Liturgical Press, Collegeville, Minnesota, 1998, p. 232 (https://books.google.am/books?id=O8O1_vnTS3QC&pg=PA232&redir_esc=y#v=onepage&q&f=false)

57 *The lives of the primitive fathers, martyrs, and other principal saints* [electronic resource]: compiled from original monuments, and other authentic records: illustrated with the remarks of judicious modern critics

*Albanopolis քաղաքի անունը միշտ կայ, այն Մեծ Հայքում է, եւ փակագծերում չկան «Derbend, on the west coast of the Caspian Sea» բառերը կամ որեւէ այլ ծանօթագրութիւն: Նոյնն է պարագան նաեւ 1998 թ. յաջորդած 2015 թ. գրքի ամբողջական հրատարակութեան մէջ: Այստեղ Օգոստոսի 24-ին տօնուող սրբերի շարքում ասւում է, որ Սուրբ Բարթուղիմէոսը քարոզել է Ասիայում, Հնդկաստանում, «բայց Հնդկաստան ասելով պէտք է հասկանալ արաբներին եւ պարսիկներին», ապա Սուրբ Փիլիպոսի հետ գործել է Փռիւգիայում Հիերոպոլիս քաղաքում, ապա Լուկոնիայում: «Վերջում Սուրբ Բարթուղիմէոսը տեղափոխուել է Մեծ Հայք, որտեղ կուռքերի պաշտամունքին նուիրուած վայրում յամառօրէն քարոզելու ընթացքում տանջալի նահատակութեան է ենթարկուել, ինչպէս յիշատակում է Գրիգոր Տուրեցին: Ժամանակակից յոյն պատմաբաններն ասում են, որ նրան խաչելութեան է դատապարտել Ալբանոպոլիսի իշխանը» [«St. Bartholomew's last removal was into Great Armenia, where praching in a Place obstantely addicted to the worship of idols, he was crowned with a glorious martyrdom, as St. Gregory of Tours mentions. The modern Greek historians say, he was condemned by the governor of Albanopolis to be cracified»][58]: Այստեղ, ինչպէս տեսնում ենք, Ալբանոպոլիսը մնում է Մեծ Հայքի տարածքում: Ի՞նչ է կատարուել 1998 թ. հրատարակութեան ժամանակ, ինչո՞ւ է առաջացել լրացուցիչ կասկածելի ծանօթագրութեան «անհրաժեշտութիւնը»: Կարելի է, ի հարկէ, ենթադրութիւններ անել ադրբեջանական «նաւթային դիւանագիտութեան» մասին: Միայն թէ հրատարակիչը կամ խմբագիրը, համաձայնելով Ալբանոպոլիսը «տեղափոխել» Կովկաս, չի համաձայնել այն նոյնականացնել Բաքու քաղաքի հետ եւ կանգ է առել Դաղստանի Դերբենդ քաղաքի վրայ: Հարց է մնում նաեւ, թէ ինչո՞ւ են յետագայում հանել այս ծանօթագրութիւնը: Ոչ Ռուս Ուղղափառ եկեղեցու, ոչ ադրբեջանական հեղինակներից որեւէ մէկը, կարծէք թէ, այս հրատարակութեանը յղում չունեն:

Բոլոր դէպքերում Ռուս Ուղղափառ Եկեղեցին շտապել է Բարթուղիմէոս Առաքեալի անունով շքանշան ստեղծել եւ նոյնիսկ որոշ անձանց այդ շքանշանով պարգեւատրել: Ինչպէս հաղորդում է Ռուս Ուղղափառ Եկեղեցու Բաքուի թեմը, Սուրբ Բարթուղիմէոս Առաքեալի շքանշանով պարգեւատրւում են Ռուս Ուղղափառ Եկեղեցու Բաքուի թեմին յատուկ ծառայութիւններ մատուցած, հասարակութեան բարոյական վերածննդին ներդրում ունեցած այլակրօն եկեղեցական եւ պետական գործիչները, հասարակական կազմակերպութիւնները[59]: Բարթուղիմէոս առաքեալի I աստիճանի շքանշանով պարգեւատրուել է Կրասնի Սլոբոդայի հրէական համայնքի ղեկավարը, «սուրբ Բարթուղիմէոս առաքեալի ոսկէ շքանշանով» պարգեւատրուել է Բաքուի թատրոնի ռեժիսեորը, իսկ «սուրբ Բարթուղիմէոս առաքեալի» շքանշանով Կովկասի մահմեդականների ղեկավար Շէյխ ուլ իսլամ Հաջի Ալլահշիւքիւր Փաշայ զադէն:

and historians / By the Rev. Alban Butler. The 3rd edition. In 12 Volumes. Butler, Alban, 1711-1773, Vols 8-12 bear the imprint: Edinburgh: Printed by J. Moir, for J. P. Coghlan, P. Keating; and E. Booker, London: and F. Coates, Newcastle. Presumed date of death of creator (latest date): 1773, Publication date: 1800; The Lives of The Fathers, *Martyrs*, on Other Principal Saints, *London*, Vol. VIII, The Lives of The Fathers, Marturs, on Other Principal Saints, London.

58 *The Lives of the Sains.* Complete Edition (from the Original Vols. I-XII). Catholic Way Publishing, 2015- https://www.google.am/books/edition/The_Lives_of_the_Saints_Complete_Edition/gBl2BwAAQBAJ?hl=en&gbpv=1&pg=PT3668&printsec=frontcover

59 Новости Бакинско-Азербайджанской Епархии // https://baku.eparhia.ru/news/?ID=637 (այցելութիւնը կայք՝ 10.07.2024):

Իր էթնիկական, մշակութային, պատմական ինքնութեան որոնումներում կամ ծրագրային ցանկութիւններում Ադրբեջանում նոր առասպելներ են փնտրում, ձեւակերպում եւ ակտիւօրէն տարածում, եւ դրանցից առնուազն մէկին ուղղակիօրէն օժանդակում է Ռուս Ուղղափառ Եկեղեցին՝ օգտագործելով նաեւ Բարթուղիմէոսի մասին իրենց իսկ ստեղծած կոպիտ կեղծիքը: Հասկանալի է, որ Ադրբեջանում փնտրում են իրենց էթնիկական եւ մշակութային կապը այդ երկրի մի մասում վաղ անցեալում գոյութիւն ունեցած Ալբանիայի ժողովուրդների եւ ալբանական քրիստոնէութեան հետ: Բայց Ադրբեջանի բնակչութեան ո՛չ պատմական, ո՛չ սոցիալական, ո՛չ կրօնական, ո՛չ մշակութային յիշողութիւնը Բարթուղիմէոսի մասին որեւէ ակնարկ չունի: Էթնակառուցողութեան հետազօտողներին, ի հարկէ, այս ծրագիրը հետաքրքիր է հետազօտութեան իմաստով, բայց սրա քաղաքական հեռանկարները անկանխատեսելի են: Առայժմ ամենաարտայայտուածը Ադրբեջանը աշխարհի առաջին քրիստոնեայ երկիրը լինելու մասին բարձրագոչ յայտարարութիւններն են, որը «հիմնաւորուում է» Ալբանիայում Բարթուղիմէոսի մտացածին առաքելութեամբ: Բայց սա տարօրինակ ձեւով զուգադրուում է նոյն առաքելին պատմագրութեան կողմից վերագրուող յուշարձանների քանդմամբ, օրինակ՝ Նախիջեւանի տարածքում:

XX դարի Ադրբեջանում սփռուած հազարաւոր քրիստոնէական յուշարձաններ են մնացել: Որքան էլ այդ յուշարձանները քանդուում են, դրանք իսպառ չեն վերանում: Նրանց բացարձակ մեծամասնութիւնը հայկական է, բայց որեւէ կերպ դա պիտի ներկայացուի որպէս ալբանական քրիստոնէական մշակոյթի ադրբեջանական ժառանգութիւն: Միւս կողմից՝ Ադրբեջանի տարածքի յատկապէս հարաւի նիւթական մշակոյթի մահմեդական անցեալը հիմնականում սկսւում է X դարից յետոյ, իսկ Արցախ-Ղարաբաղի տարածքում ամենավաղ մահմեդական յուշարձաններն առհասարակ XIV դարի որոշ նմուշներ են, ընդ որում հիմնական յուշարձանային անցեալը սկսւում է Ղարաբաղի խանութեան ստեղծումով XVIII դարից: Սա մի կողմից վկայում է այդ տարածքի հիւսիսում մ. թ. I հազարամեակում կենսունակ քրիստոնէութեան գոյութեան մասին[60], միւս կողմից հաստատում Տէրի աշխարհում եւ արեւմուտքում Շաքիում նոյն քրիստոնէութեան կենսունակութեան մասին նաեւ երկրորդ հազարամեակում: Ադրբեջանի իշխանութիւնները փորձում են այդ ժառանգութեան տէր կարգել Ալբանիայի ժամանակներից քրիստոնեայ մնացած միակ կենդանի ժողովրդին՝ անհետացման եզրին գտնուող ուդիներին, բայց նրանք Հայ Առաքելական Եկեղեցու դաւանանքի հետեւորդներ են, ինչը խանգարում է այդ ժառանգութիւնը հայերից հեռացնելու ցանկութեանը: Փորձեր են արւում ուդիական քրիստոնէութիւնը այլ հակահայկական շղարշով ներկայացնելու, եւ այդ խնդրում «օգնութեան են կանչել» Ռուս Ուղղափառ Եկեղեցուն: Վերջինս փորձում է օգնել նրանց ալբանական քրիստոնէութիւնը նախաքաղկեդոնիկ շրջանից ինքնուրոյն առաքելական դարձնելով: Բայց այդ «օգնութիւնը» առայժմ շատ կոպիտ է՝ ոչ աւանդութիւն կայ, ոչ

60 **Խառատեան Հ.**, *Եղիշէ առաքելի, Գրիգորիսի եւ Կովկասեան Աղուանքի քրիստոնէացման հարցի շուրջ (Կովկասեան Աղուանքի հին կրկնագիրցի ձեռագրի վերծանութեան հրատարակութեան առիթով)*,- «Բազմավէպ» (Վենետիկ), 2010, № 1-2, էջ 19-75; **Խառատեան Հ.**, *Քրիստոնէութիւնը Բուն Աղուանքում զարգացած միջնադարում*,- «Հայաստանը եւ Քրիստոնեայ Կովկասը». Կովկասեան Աղուանքում եւ Վրաստանում քրիստոնէութեան ընդունման 1700-ամեակին նուիրուած միջազգային գիտաժողովի զեկուցումների դրոյթներ (խմբ.՝ Յակոբեան Ա., Բոզոյեան Ա. Սաֆրաստեան Ռ.), Երեւան, «Գիտութիւն», 2015, էջ 106-120:

աղբիւր, ոչ բոլոնեգակութիւն, ոչ հետեւորդ: Նորաստեղծ առասպելներն անմիջապէս իրենց հերթին ծնում են նոր երեւակայական պատումներ, այդ թւում՝ զառանցանքի հասնող երեւակայական թռիչքներ, ինչպէս, օրինակ, 2021 թ. Մարտի 3-ին դոկտոր Ջասուր Ալիեւի անունով ադրբեջանական լեզուով տարածուած՝ «Յիսուս Քրիստոսի առաքեալ Բարթուղիմէոսի գերեզմանը գտնուել է Բաքուում» վերնագրով յայտարարութիւնն է: Մարդը յայտարարում է, որ 1964 թ. Բաքւում յայտնաբերուել է աշխարհի հինգ մեծագոյն գաղտնիքներից մէկը, որը փոխել է աշխարհի ողջ լանդշաֆտը. «Հնագէտները [Բաքուի] հին քաղաքում՝ Աղջկայ բերդի մօտ յայտնաբերել են հին սրբապատկերներով, դրամներով եւ ձեռագրերով մի դամբարան, որի վրայ հին ադուաներէն լեզուով գրուած է եղել «Յիսուս Քրիստոսի առաքեալ, Աստծուն հաւատարիմ առաքեալ Վարտալոմէոս»: Լուրը հասնում է Մոսկուա, այնտեղից գալիս են սովետական անվտանգութեան ծառայութեան աշխատակիցները, հնագէտների հետ զրուցում են, եւ գերեզմանը տուփի մէջ դնելով տանում: Որոշումը հիմնաւորուել էր նրանով, թէ «որպէսզի կրօնական քարոզչութիւն չլինի, գերեզմանը հարկաւոր է թաքցնել, պեղումները դադարեցնել եւ եկեղեցին քանդել»: Իլիւմինատորները՝ համաշխարհային գաղտնի կազմակերպութիւնները [անյայտ է մնում՝ որեւէ կոնկրէտ, թէ՞ ընդհանրական ինչ-որ «գաղտնի կազմակերպութիւն» – Հ. Խ.] այս տեղին յատուկ նշանակութիւն էին տալիս: Նրանք Ֆրանսիայից, Իրանից, Թուրքիայից, Մեծ Բրիտանիայից գաղտնի եկել էին այստեղ...»[61]: Այստեղ նոյնիսկ երկրների ընտրութիւնն է տարօրինակ:

Յայտնի է, որ Աւետարաններում որեւէ ուղղակի վկայութիւն չկայ Բարթուղիմէոսի առաքելական գործունէութեան մասին: Մի փոքր ակնարկով անդրադառնանք Բարթուղիմէոսի մասին հայկական տեղեկութիւններին: Առաքեալների գործունէութեան մասին քրիստոնէական աւանդոյթն առհասարակ զգալիօրէն ձեւաւորուել է, ինչպէս վերն ասուեց, III դարից յետոյ հաւաքուած պատմութիւնների, բանաւոր յիշողութիւնների հիման վրայ: Բարթուղիմէոսի կեանքի եւ գործունէութեան մասին տարբեր դարերում գրուել է հայկական Յայսմաւուրքներում, միջնադարեան գրաւոր ժառանգութիւնում կան նրան նուիրուած բազմաթիւ ճառեր, տաղեր, աղօթքներ, այդ թւում ժողովրդական աղօթքներ: Ղեւոնդ Ալիշանի կազմած եւ 1853-1861 թթ. ընթացքում Վենետիկում հրատարակուած «Սոփերք Հայկականք» մատենաշարի 8-րդ եւ 19-րդ հատորները հաւաքաբար ներկայացնում են առաջին դարում 12 առաքեալներից քրիստոնէութիւնը Հայաստան բերած երկուսի՝ Թադէոս եւ Բարթուղիմէոս առաքեալների վկայաբանութիւնները, որոնք ընկած են Հայաստանում նրանց առաքելական գործունէութեան մասին գիտելիքի հիմքում եւ կազմում են վաղ քրիստոնէական շրջանի Հայաստանեան քրիստոնէական աւանդոյթի առանցքը: 1904 թ. Վենետիկում հրատարակուած «Անկանոն գիրք առաքելականաց»-ում միայն Բարթուղիմէոսի մասին երեք «կենսագրական» վարք է հրատարակուած՝ «Վկայաբանութիւն Սրբոյ Առաքելոյն Բարդողոմէոսի», «այլ օրինակ. Համառօտ վկայաբանութիւն սրբոյն Բարթուղիմէոս եւ Յուդայի առաքելոցն Քրիստոսի», «Գիւտ նշխարաց Սրբոյ Առաքելոյ Բարթողոմէոսի»՝ միշտ հաւատարիմ մնալով աղ-

61 Յիսուս Քրիստոսի առաքեալ Բարթուղիմէոսի գերեզմանը գտնուել է Բաքւում,- https://qaynarinfo.az/az/bakida-mezare-tapilan-isa-peyemberin-apostolu-varfolomey/

բիւրին եւ նոյնիսկ առաքեալի անունը պահելով աղբիւրում նշուած տարբերակներով՝ Բարթողիմէոս, Բարթողոմէոս, Բարթողովմէոս, Բարդողոմէոս[62]:

Դրանց վերաբերեալ XIX դարից սկսած հայ հեղինակների կողմից կատարուել են մեծ ծաւալի վերլուծութիւններ՝ անդրադառնալով նաեւ առաքեալների, այդ թւում նաեւ Բարթուղիմէոսի գործունէութեան մասին տեղեկութիւններին այլ ժողովուրդների միջավայրում: Հրատարակուել են նոր տեղեկութիւնների աղբիւրներ: Օրինակ՝ Բարթուղիմէոսի կողմից պարթեւներին դարձի բերելու մասին յունարէն թարգմանութեամբ պատումը 700-ական թուականների Narratio de rebus Armeniae հայ քաղկեդոնական գրուածքում. «lin. 21-28. Արշակի ժամանակ Հայաստանը բաժանուեց, կառուցուեց Թէոդոսուպոլիսը, որը նախկինում գիւղ էր եւ կոչւում էր Կալէ Արխէ այն պատճառով, որ մեծ առաքեալ Բարթուղիմէոսը Պարթեւստան գնալիս Եփրատ գետում մկրտեց Պարսից արքայի եղբօրորդուն եւ նրա հետ միասին երեք հազար մարդ, այնտեղ նա կառուցեց ամենասրբուհի Աստուածածնի անուան տաճար, եւ այդ վայրում գտնուող գիւղն անուանեց Կալէ Արխէ (Բարի սկիզբ)»[63]:

Միշել Վան Էսբրուկը գրում է, որ Բարթուղիմէոսի պարթեւական լեգենդի մի տարբերակ էլ կայ՝ լատիներէն, յունարէն՝ չհրատարակուած, եւ հայերէն՝ նոյնպէս չհրատարակուած, ՄՄ (=Մաշտոցի անուան Մատենադարան) թիւ 7853 ձեռագրում (1366 թ., 374բ-380ա): Ըստ այդ պատմութեան՝ նահատակուելուց յետոյ Բարթուղիմէոսի նշխարները բարեպաշտ մարդիկ տարան «յերկիրն Հայոց» եւ թաղեցին: Պ. գ. դ. Գոհար Մուրադեանը 2017 թ. հրատարակել է ՄՄ թիւ 7853 ձեռագրում պահպանուած՝ յունարէնից թարգմանուած հայերէն բնագիրը, որը ներկայացնում է Բարթուղիմէոսի գործած հրաշքները եւ աւարտւում Բարթուղիմէոսի նահատակութեան նկարագրութեամբ (որն աւարտւում է «եւ բարեպաշտ ոմանք գաղտ հանին զնշխարս առաքելոյն եւ տարան յերկիրն Հայոց եւ անդ թաղեցին ի բարեխաւսութիւն անձանց մերոց» տողերով)[64]:

Թադէոս եւ Բարթուղիմէոս առաքեալների հայաստանեան գործունէութեան մասին հայկական միջնադարեան վաղուց յայտնի պարականոն (ապոկրիֆիկ) տեղեկութիւնների հաւաքածոն վերջերս կազմել, թարգմանել եւ հրատարակել է Վալենտինա Կալցոլարին[65]:

Այստեղ մի փոքր կը խօսուի այն մասին, որ այս կամ այն անձի առաքելականութիւնը, կամ՝ այդ առաքելականութեան մասին պատկերացումները, քննարկումները, աւանդազրոյցները, նրանց վարքերի տեղական պատկերացումները, դրանց վերաբերեալ գրաւոր եւ բանաւոր տեքստերը, ծէսերը (տօնակատարութիւններ, աղօթքներ, ուխտագնացութիւններ) ուղղակի կամ անուղղակի երկխօսութիւն է քրիստոնէական աշխարհի ներսի դերակատարների

62 *Անկանոն գիրք Առաքելականք* / [Հրատ. Քերովբէ Զրաքեան], Վենետիկ, տպ. Ս. Ղազար, 1904, էջ 333-357; էջ 357-364; էջ 365-368:

63 **Բարթիկեան Հ.**, «*Narratio de rebus Armeniae» յունարէն թարգմանութեամբ մեզ հասած մի հայ քաղկեդոնական սկզբնաղբիւր*, «Բանբեր Մատենադարանի», 6, 1962, էջ 457-470:

64 **Մուրադեան Գ.**, *Թադէոս եւ Բարդուղիմէոս առաքեալների մասին լեգենդի տարբերակները միջնադարեան բնագրերում*,- «Արշալոյս քրիստոնէութեան հայոց», Միջազգային գիտաժողովի նիւթերի ժողովածու, Երեւան, «Գիտութիւն», 2017, էջ 140,- https://arar.sci.am/dlibra/publication/402743/edition/372785/content?ref=L3B1YmxpY2F0aW9uLzQwNzI0My9lZGl0aW9uLzM3NjM4NA

65 *Les Apotres Thaddee et Barthelemy Aux origines du christianisme armenien. Martyre et Decouverte des reliques de Thaddee*. Martyre et Decouverte des reliques de Barthelemy par Maroutha Introduction, traduction et notes par Valentina Calzolari. Brepols Publishers. January 2011.

հետ սեփական ինքնութեան, մշակութային վարքի շարունակականութեան ձեւի ու բովանդակութեան պահպանութեան կամ զարգացումների շուրջ: Վայրերը, որտեղ եղել են առաքեալները, այս կամ այն գործը, խօսքը, որ ասել կամ արել են նրանք, կամ առնուազն այդ մասին խօսուել է ժողովրդի մէջ, դրանց մասին պատմութիւններն ազդել են վայրի եւ դրա բնակիչների յետագայ կեանքի վրայ, տարբեր կերպ ձեւաւորել են տարածքի հասարակական ու մշակութային կեանքը: Դրանցում նշուած տեղանունները կողմնորոշիչներ են նաեւ այս կամ այն կոնկրէտ վայրերի բնակչութեան յիշողութեան մասին: Հասկանալի է, որ ստորեւ բերուող տեղեկութիւնները Բարթուղիմէոսի կամ առհասարակ առաքեալներից որեւէ մէկի գործունէութեան վերաբերեալ «ապացուցողական» նպատակ չեն հետապնդում: Խօսքը տարբեր դարաշրջաններում նրանց մասին ակտիւացող կամ նուազող յիշողութիւնների, կամ այդ յիշողութիւնների վրայ ազդող քաղաքական, կրօնական եւ ժողովրդական մշակոյթի մասին է:

Դեռեւս V դարի հայրապետ Սահակ Պարթեւը (348-439), 431 թ. Եփեսոսի տիեզերական ժողովից յետոյ, նեստորականների մասին գրելիս, անդրադառնում է առաջին դարին՝ առաքեալների գործունէութեանը, այդ թւում Հայաստանում. «...բարերարն Աստուած... առաքեաց զմի յաշակերտաց իւրոց զԹադէոս առաքեալ... Որոյ եկեալ սերմանեաց զբանն ճշմարիտ հաւատոցն ի սմին աշխարհի կատարեալ՝ փոխեցաւ առ այն, որ առաքեցաւ զնա... եւ զկնի նորա Բարթուղիմէոս ընկեր նորին զխորհուրդ առաքելութեանն ի սմին աշխարհի աւարտեալ, զի ի ձեռն երկուց աստուածային արանց հաստատեսցի ի մեզ վկայութիւն ճշմարիտ հաւատոցն բանի, անխախտելի մնալ մինչեւ իսպառ, որ եւ եղեւ իսկ...»[66]:

Հայաստանում առաքեալների գործունէութեան մասին խօսելիս Մովսէս Խորենացին մանրամասն նկարագրում է Թովմաս եւ Թադէոս առաքեալների գործերը[67] յաճախ յիշեցնելով, որ ինքը միայն համառօտ յիշատակում է նրանց (Թադէոս, Ադդէ, Սիմոն), քանի որ. «ինչպէս ասացինք, մեզանից առաջ պատմուած է ուրիշներից, ուստի կարեւոր չհամարեցինք մանրամասն կրկնել», եւ շատ համառօտ Բարթուղիմէոսի մասին գրում է «վիճակեցաւ Հայոց եւ Բարդուղիմէոս Առաքեալ, որ եւ կատարեցաւ առ մեզ յԱրեբանոս[68] քաղաքի»[69]: Այլ կերպ ասած՝ V դարում առաքեալների, այդ թւում կոնկրէտ Բարթուղիմէոսի գործունէութիւնն այնքան յայտնի էր ու տարածուած, որ դրա մասին մանրամասն գրելն անիմաստ էր: Խորենացու՝ Սահակ Արծրունուն յղած թղթում պատմւում է, որ Բարթուղիմէոսը Աստուածամօր պատկերը բերեց Հայաստան[70]:

66 *Բացայայտութիւն..., ասացեալ սրբոյ վարդապետին Սահակայ Հայոց կաթողիկոսի եւ մեծի թարգմանչի ընդդեմ երկաբնակաց Նեստորականացն,*- Գիրք թղթոց, էջ 414:

67 *Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց*, Տփղիս, 1913, Տպ. Աղանեանի, էջ 146-153:

68 «Այլք *Արէաբոնոս*, կամ *Արէոբոնոս*, կամ *Արէբոնոս*» – *Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք*, Վենետիկ, 1843, էջ 112-ի երկրորդ ծանօթագրութիւն:

69 Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, էջ 154: Հմմ. **Մովսէս Խորենացի**, *Հայոց պատմութիւն*, Թարգմանութիւնը, ներածութիւնը եւ ծանօթագրութիւնները Ստ. Մալխասեանի, Եր., Հայաստան, 1990, էջ 101 («Հայերին վիճակուեց Բարդուղիմէոս առաքեալը եւս, որը նաեւ նահատակուեց *մեզ մօտ Արեբանոս* քաղաքում»): Ըստ Ստեփան Մալխասեանցի ծանօթագրութեան՝ Խորենացին մէկ այլ տեղ (Աստուածամօր պատկերի պատմութիւնը, Թուղթ առ Սահակ Արծրունի, Մատեն. Խոր. էջ 295) Բարթուղիմէոսի նահատակութեան վայրի անունը գրում է *Ուրբանոս* (**Մովսէս Խորենացի**, *Հայոց պատմութիւն*: Թարգմանութիւնը, ներածութիւնը ... Ստ. Մալխասեանի, էջ 266, ծնթ. 137):

70 «Պատասխանի թղթոյն Սահակայ», Սրբոյ հօրն մերոյ Մովսիսի Խորենացւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1843, էջ 294: Այդ թուղթը համարուել է

Բարթուղիմէոսն աւելի մանրամասն է ներկայացուած «Սրբոյ Հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք» ժողովածոյում: Այստեղ պատմւում է, թէ ինչպէս Բարթուղիմէոսը, վշտացած լինելով, որ Մարիամ Աստուածածնի մահուան պահին ինքը Երուսաղէմում չի եղել, փայտի վրայ կերտել է տալիս նրա պատկերը, ապա Սուրբ Հոգուց պատուէր է ստանում գնալ Հայաստան աւետարանելու: Գնում է Պարսկաստան, Խորասանում քարոզում, այնուհետեւ անցնում է Հայաստան «Անձաւացեաց յաշխարհն» մի համբաւաւոր քարի մօտ, որում Անահիտին [հեթանոսական Աստուածուհուն] սպասարկող բազմաթիւ դեւեր էին ապրում, եւ այդ վայրը կոչւում էր Դարբնաց քար...[71]: Աստծոյ սուրբը հալածում է դեւերին եւ այդտեղ մի խաչ կանգնեցնում: Դա Տիգրիս գետի մօտ «Կանգուար բերդի»[72] եւ Ագռաւաց քարի միջեւ այն վայրն է, որտեղ յետոյ, 4-րդ դարում Գրիգորիս Հայրապետն էր քարոզում, իսկ յետոյ այստեղ եղաւ Տրդատ թագաւորի գերեզմանը: Սուրբ առաքեալ Բարթուղիմէոսն այստեղ շինում է մի փոքրիկ եկեղեցի, որտեղ թողնում է Մարիամ Աստուածածնի պատկերի փայտէ փորագրութիւնը եւ որն անուանում է Սուրբ Աստուածածին, ապա կից կառուցում է կուսանոց եւ վայրը «յանուն Տիրամօր է անուանում «Հոգեաց վանք»: Իսկ ինքը՝ սուրբ Առաքեալը աւետարանելը Հայաստանում շարունակում է, եւ «կատարեցաւ [նահատակուեց] յՈւրբանոս քաղաքի»՝ մի վայրում, որ Բարմա[73] կոչուեց առաքեալի պատուին[74]:

«Հոգեաց վանքը» XIX դ. կէսերին, չնայած հայ բնակչութեան նուազմանը, դեռ գործում էր որպէս կարեւոր ուխտատեղի: Ղ. Ալիշանի տեղեկութեամբ «Անձեւացեաց գաւառում... կայ անուանի եւ հին ուխտատեղի Հոգուաց վանք՝ շինեալ ի Բարթուղիմեայ առաքելոյ ի պատիւ Վերափոխման Տիրամօրն, զորոյ եւ զպատկեր փայտեայ զձեռագործ Յովհաննու Աւետարանի եդ ի նմա, եւ ցարդ թուի լինել անդ»[75]: XIX դ. 60-ական թթ. Գարեգին Սրուանձտեանցն այցելել է գործող վանքը եւ գրել է. «... Վասպուրական նահանգի ութերորդ գաւառն է Անձեւացիք, որուն մէջն է Հոգուց

աւելի ուշ ժամանակի գրուածք, քանի որ V դարում դեռեւս չկար նրանում յիշատակուող Վասպուրական նահանգը: Սակայն Ա. Մուշեղեանը (*Մովսէս Խորենացու դարը*, Երեւան, 2007, էջ 296) ապացուցել է, որ դա տեղանուն չէ, այլ տիտղոս, հետեւաբար այլեւս հիմքեր չկան թուղթը Խորենացունը չհամարելու համար:

71 Ղ. Ալիշանը պատմում է, որ Վանայ երկրի հարաւ արեւմտեան կողմերում քրիստոնէական սկզբի դարից Ս. Բարթուղիմէոսի առաքելութեան հետ կապուած յիշւում է, որ Անձեւացեան գաւառում Կանգուար եւ Ագռաւի քար կոչուած լեռների միջեւ մի յատուկ քար կամ քարայր կար, որտեղ ըստ աւանդութեան դարբինների մուրճերի հարուածների ձայների տակ անհաւոր հրաշքներ գործող բազմաթիւ դեւեր էին բնակւում, իսկ մարդիկ դեգերում էին քարայրի մօտերքում: Այդ վայրը կոչվում էր Դարբնաց-քար: Առաքեալը հալածեց դարբիններին, մուրճերը ջարդեց: Այստեղ վախեցնողը հէնց խարդախ դարբինների մուրճերի ձայներն էին քարայրից... (**Ալիշան Հ. Ղ.**, *Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց*, Վենետիկ, Ս. Ղազար, 1910, էջ 42):

72 **Կանգուար**, *Ագռավաց քար, Ագռավաքար, Դարբնացքար, Դարբնաքար, Կանգվառ, Կանգուառ, Կանգուար, Կանգումար, Կանգուր, Կինիկվար, Քինիվար*, ամրոց Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Անձեւացիք գաւառում: XII դ. արաբ աշխարհագիր Յակուտը Կանգուարը յիշում է «Քինքիվար» ձեւով, որպէս «ամրակառոյց բերդ» Զաւազանում (Անձեւացիք): Կանգաւարի տեղում այժմ Կենգեվեր (Կանքվառ) գիւղն է, որը XX դարասկզբին ուներ 50 տուն հայ բնակիչ (**Յակոբեան Թ. Խ., Մելիք-Բախշեան Ստ. Տ., Բարսեղեան Յ. Խ.**, *Հայաստանի եւ յարակից երկրների տեղանունների բառարան* (խմբ՝ Մանուկեան Լ. Գ.), հտ. 1, Երեւան, 1986, էջ 1975-1976):

73 Բարմ, Բարմա, – Բնակավայր Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Աղբակ գաւառում: Մարկուարտը եւ այլոք նոյնացնում են Արեւաբանոս քաղաքի հետ (*Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան*, հտ. 1, էջ 665):

74 *Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք*, Վենետիկ, 1843, էջ 294-295:

75 **Ալիշան Հ. Ղ.** *Տեղագիր Հայոց Մեծաց*, Վենետիկ, 1855, էջ 53:

վանքը... Քիչ մը յառաջ գալով կը տեսնենք այն բազմաքար ըսուած տեղը, ուր մեծամեծ քարեր դիզուած են. ասոր վրայի լեռն է Գրգուռը, յոր ապաստանեցան դեւքն եւ ապա հալածուեցան շնորհիւ Ս. Խաչին՝ ի ձեռն Բարդուղիմէոսի առաքելոյն... *վանից Արեւելեան լեռ իւր ստորոտին մերձը ապառաժ մը ունի, զոր* Դարբնաքար կը կոչեն կամ Դիւաց քար...*»: Ըստ Սրուանձտեանցի՝ վանքի սրբազան մասունքներից էին Քրիստոսի Գեղարդը, Սուրբ Նշան Կենաց փայտը, Սուրբ Գէորգ զօրավարի մատը: Վանքն ինքը շատ համբաւաւոր էր, ուր գալիս էին մեծաթիւ ուխտաւորներ*[76]:

Ըստ Խորենացու պատմութեան՝ III դարում Արտազում[77] *է գիշերել Գրիգոր Լուսաւորչի հայրը՝ Անակ պարթեւը, «մի դաշտավայր տեղ, որտեղ յայտնուեցին մեր մեծ եւ սուրբ Թադէոս առաքեալի նշխարները... նրա գիշերելու տեղը խորանի ներսի դին, պատահեց սուրբ առաքեալի գերեզմանի մօտ անկողինը, եւ ասում են, այստեղ է յղութիւն առել մեր սուրբ եւ մեծ Լուսաւորիչը»*[78]: *Յետագայում Անտիոքի եպիսկոպոսին ուղղուած նամակում Ստեփանոս Օրբէլեանն է գրում. «բնակէաց Հայաստան աշխարհիս ...վերայ եղաւ հեղումն արեան առաքելոյն Բարթողոմէոսի եւ Թադէոսի... Որպէս ի գալն Անակայ ի Հայք, աւթեւան եղեւ ի վկայարանի սրբոյ առաքելոյն Թադէոսի, եւ ննջելն ի կնոջն իւրում եղեւ ընձայումն յղութեան մերոյ Լուսաւորչին, եւ* [illegible] *առաքելոյն Թադէոսի, եւ փոխանորդաց զնորին առաքելական աթոռ երիցս երանելին Գրիգորիոս...»*[79].

X դարից շատ տեղեկութիւններ կան Նախիջեւանի Աստապատ գիւղի մօտ գտնուող «Մաղարթայ վանքի» մասին, որը, ըստ Ստեփանոս Օրբէլեանի, կառուցել է Բարթուղիմէոս առաքեալը եւ եկեղեցու հիմքում պահել Իսրայէլից բերուած երեք մանանա[80]: *Մաղարթայի վանքը ծանօթ է նաեւ «Մաղարթայ Ս. Ստեփաննոս նախավկայի վանք» անունով*[81], *չնայած յայտնի են նաեւ Կարմիր վանք, Քարատակի վանք, Աստապատի վանք անունները: Ղ. Ալիշանը XIX դարի համար գրում է, որ Մաղարթայ լեռան ստորոտում գտնուող վանքի մասին ասում են, որ այն հիմնադրել են Թադէոս եւ Բարթուղիմէոս առաքեալները «եւ ի հիման եկեղեցւոյ ասի եղեալ Ս. Բարդուղիմեայ երիս հատս մանանայի», ... «եւ չէն եւ պայծառ է տեղիս, ուր ցուցանեն յիշատակս զառաքելոյն Բարթողիմեայ, աղբիւր եւ խաչ երկաթի եւ դրոշմածս խաչաձեւս ի վիմի, եւ պարգեւս արքայադուստրս ի Բագրատունեաց*[82].

76 **Սրվանձտեան Գ.**, *Երկեր*, հտ. 2, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1982, էջ 13:

77 Վասպուրական նահանգի Արտազ գաւառը, ըստ Խորենացու՝ նախապէս Ծաւարշական էր կոչւում: Այն մ. թ. ա. II դարում Արտազ է անուանուել Ալանաց երկրի Արտազ (Արդոզ, Արդոզական) գաւառի անունով, երբ Արտաշէս Ա-ն այնտեղ բնակեցրել է ալան գերիների. «մինչեւ այսօր էլ Արտազ է կոչւում այն աշխարհը, որտեղից նրանք գերուեցին» (**Մովսէս Խորենացի**, *Հայոց պատմութիւն*, Թարգմանութիւնը, ներածութիւնը ... Ստ. Մալխասեանի, էջ 101, 118):

78 Անդ, էջ 138-139:

79 *Սիւնեաց եպիսկոպոս Ստեփանոսի պատասխանը Անտիոքի եպիսկոպոսին*,- Գիրք թղթոց, էջ 323:

80 **Ստեփաննոս Օրբելեան**, *Պատմութիւն նահանգին Սիսական*, Թիֆլիս, Տպ. Ն. Աղանեանի, 1910, էջ 341: Աստապատ (այժմ՝ Աստաբադ) գիւղի քրիստոնէական բոլոր յուշարձանները՝ Սբ. Վարդան, Սբ. Աստուածածին, Սբ. Գէորգ, Սբ. Պօղոս-Պետրոս, Սբ. Յովհաննես, Սբ. Ստեփանոս (Կարմիր վանք) եկեղեցիները, հայկական գերեզմանոցները խաչքարերով այժմ ամբողջովին ոչնչացուել են Ադրբեջանի կառավարութեան կողմից:

81 **Քիւրտեան Ց.**, *Ս. Ստեփանոս նախավկայի վանքը*,- «Հասկ», Պաշտօնական ամսագիր կաթողիկոսութեան Հայոց Մեծի տանն Կիլիկիոյ, Կ. Տարի, 1991, Օգոստոս-Սեպտեմբեր, թիւ 8-9, էջ 403:

82 **Ալիշան Հ. Ղ.**, *Տեղագիր Հայոց Մեծաց*, էջ 82:

XII դարի Միքայէլ Ասորու «Ցաղագս քահանայութեան» երկի հայերէն թարգմանութեան մէջ այդ մասին կարդում ենք. «եւ քանզի երեք Առաքեալք մտին ի Հայք, Թադէոս եւ Բարթողոմէոս եւ Յուդայ Յակոբայն. եւ թէպէտ զառաջինն Թադէոս եկն եւ ապա Բարթողոմէոս եւ Յուդայ, այլ զի ոմանք ասեն թէ Թադէոս ի յեւթանասնիցն է, վասն այնորիկ դիցուք գլուխ քահանայութէան նոցայ զԲարթողոմէոս եւ ապա զԹադէոս եւ ապա զՅուդայ եւ զայլ առաջնորդս ըստ կարգի»[83]: Առաքեալների թուարկման նոյն հերթականութիւնն առկայ է նաեւ Միքայէլ Ասորու «Ժամանակագրութիւն» երկի հայերէն թարգմանութեան մէջ. «Զ (6) Բարթողիմէոս յազգէն Իսաքարայ յԱդաւիր գեղջէ, քարոզեաց ի Հայաստանեայս, եւ անդ կատարեցաւ սքանչելի նահատակութեամբ ի յՈւրբանիոս քաղաքի, որ այժմ կոչի Հաղբակ, ի Սանատրկոյ յամբարիշտ եւ յանօրէն թագաւորէն»..., «Ժ (10) Յուդայ որ կոչեցաւ Թադէ. որ վասն իմաստութէան իւրոյ ասէին Ղեբէոս, որ է սիրտ եւ հոգի, քարոզեաց ի Հայս եւ յԱսորիս, եւ կատարեցաւ ի Սանատրկոյ ի Հայս...»[84]:

Յովհաննէս Դրասխանակերտցի կաթողիկոսը հայոց կաթողիկոսական գաւազանագրքում գրում էր. «Իրաւունս եւ զայս ես Յովանէս կաթողիկոս Հայոց համարիմ գրով դրոշմել զանուանս հայրապետացն Հայոց զարանց Աստուծոյ, որք արժանի գտան աթոռոյ սրբոց առաքելոցն Բարդուղիմէոսի եւ Թադէոսի եւ նոցունց հետեւողի սրբոյն Գրիգորի...»[85].

Հասկանալի է, որ տարբեր քաղաքական իրավիճակներում նաեւ «առաքեալները» կամ նրանց մասին աւանդապատումներն են դարձել քաղաքական ազդեցութիւնների առարկայ: Ինչպէս դիպուկ նկատում է Վ. Թորոսեանը, X-XIII դարերում, օրինակ, Բարթուղիմէոսը հայ-լատինական կրօնա-դիւանագիտական իւրայատուկ յարաբերութիւնների հետեւանքով դարձել է «աւելի կարեւոր առաքեալ»[86] (չակերտներն իմն են – Հ. Խ.): Բնական է, որ այդպիսի շրջաններում նրանք դառնում են ժամանակի մտաւորականների սեւեռուն ուշադրութեան առարկան:

XIII դ. կէսերին, երբ Կիլիկիայում ստեղծուած հայկական թագաւորութիւնը սերտ կապերի մէջ էր Եւրոպայի երկրների եւ Մերձաւոր Արեւելքում ստեղծուած խաչակիրների, ինչպէս նաեւ մոնղոլական իշխանութիւնների հետ, իսկ հայկական կաթողիկոսութիւնը հաստատուել էր Հռոմկլայում, Հռոմի պապը 1246 կամ 1228 թ. յատուկ գրութեամբ Կիլիկիայի Հեթում առաջին թագաւորին առաջարկում է դաւանանքով միանալ կաթոլիկ աշխարհին. քանի որ Կաթոլիկ եկեղեցին հիմնադրել է Քրիստոսի սիրեցեալ Պետրոս առաքեալը, ուստի, ըստ պապի, բոլորը պարտաւոր են ճանաչել նրա յաջորդը համարուելու պապի գերիշխանութիւնը: Այդ կապակցութեամբ Հեթում թագաւորը հարցում է անում կաթողիկոս Կոնստանդին Բարձրբերդցուն, որի պատասխանը[87] շարադրել է Վարդան Արեւելցին այսպէս. Քրիստոսի 12 առաքեալները համահաւասար պատիւ եւ իշխանու-

83 *Ժամանակագրութիւն Տեառն Միխայիլի Ասորւոց պատրիարքի*, Ցերուսաղէմ, 1871, էջ 82:

84 Անդ, էջ 147:

85 [Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ] *Ծարիգ հայրապետացն Հայոց յայտարարութիւնք*, Գիտա-քննական բնագիրը՝ Գ. Տէր-Վարդանեանի, «Մատենագիրք Հայոց», հտ. ԺԱ, Ժ դար, Անթիլիաս, 2010, էջ 602:

86 Թորոսեան Վ., *Սուրբ Բարդուղիմէոս առաքեալի աւանդույթը հայ-լատին եւ հայ-բիզանդական եկեղեցական յարաբերութիւնների համատեքստում (X դ. – XIII դ. կէսեր)*, «Հայոց պատմութեան հարցեր», 2(27), 2023, էջ 24-47:

87 *Թուղթ Կոստանդնեայ կաթողիկոսի հայոց, զոր գրեաց առ Հեթում թագաւորն*..., Գիրք թղթոց, էջ 503-509; *Ժամանակագրութիւն Տեառն Միխայիլի Ասորւոց պատրիարքի*, էջ 32:

թիւն են ունեցել, եւ Հայաստանում էլ առաքեալներ եղել են թէ՛ 12-ից, թէ՛ 70-ից, ըստ այդմ ճիշտ կը լինի, որ Հայաստանի դէպքում նրանց յիշեն[88]: Ակադեմիկոս Լեւոն Խաչիկեանը գրում է, որ Կոնստանդին Բարձրբերդցի կաթողիկոսը շատ էր կարեւորում այն հանգամանքը, որ Հայաստանեայց եկեղեցու հիմքերը դրել են Բարթուղիմէոս ու Թադեւոս առաքեալները, որոնք իրենց վախճանը գտել են Հայաստանի Արտազ գաւառում: Կաթողիկոսական պաշտօնական թղթերում նա իր տիտղոսից «Տառայ Քրիստոսի եւ շնորհօք նորին կաթողիկոս Հայոց»-ից յետոյ աւելացնում էր «ընդ իշխանութեամբ գաւազանի սրբոցն առաքելոցն Թաթէոսի եւ Բարթուղիմէոսի» լինելու պարագան[89]: Ըստ Լ. Խաչիկեանի ուշագրաւ քննութեան՝ հէնց այդ շրջանում է կաթողիկոսը յղանում Արտազում դեռեւս մահմեդականութիւն չընդունած մոնղոլների իշխանութեան կենտրոն Ատրպատականում Հայ Առաքելական եկեղեցու նոր թեմ ստեղծել եւ վերաշինել Թադէոս առաքեալի վանքը՝ անշուշտ կանխատեսելով նաեւ դրան հարեւան հնագոյն Սիւնիքի եւ Վասպուրականի թեմերի հոգեւոր առաջնորդների հետ հնարաւոր բարդ յարաբերութիւնները[90]: «Արտազի կարեւորութիւնն» ընդգծելը, թերեւս, «ստիպում է», որ այդ նոյն XIII դարավերջին Սիւնիքի մետրոպոլիտ Ստեփանոս Օրբէլեանը (1287-1303) գրի, որ առաքեալները Սիւնիքում յայտնուել են աւելի շուտ, քան Հայաստանի միւս գաւառներում, եւ մանրամասնի նաեւ Բարթուղիմէոսի գործունէութիւնը Սիւնիքում. «Զրոյցք հին ժամանակաց, որ վասն գալոյ սուրբ Առաքելոյն Բարդուղիմէի յաշխարհս Սիւնեաց, եւ վասն շինելոյ եկեղեցի ի գաւառին Գողթն, եւ դարձուցանելոյ ի հաւատս զոմանս, եւ հաստատելոյ սեղան եւ ձեռնադրելոյ Եպիսկոպոս». նաեւ թէ ինչպէս «...ի դառնալն Բարդուղիմէոսի ի Պարսից անցեալ ընդ գետն Երասխ՝ մտանէ ի սահմանս Սիսականու, եւ սկիզբն արարեալ քարոզչութեան յՈրդուատ [այժմ՝ Օրդուբադ՝ պատմականօրէն Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Գողթն գաւառում – Հ. Խ.] գէօղ եւ Արեւիս գաւառ [Սիւնիքի ամենահարաւային գաւառը, ներկայիս՝ Մեղրու շրջան – Հ. Խ.] ի տունն Բաղաց [ներկայիս Կապանի շրջանը – Հ. Խ.] եւ ի Գողթն [գաւառ Վասպուրական նահանգի հիւսիս-արեւելքում, ներկայիս՝ Օրդուբադի շրջան, երբեմն ընդգրկուել է Սիւնիքի կազմում]...»: Առաքեալը Գողթնում եկեղեցի է շինում՝ Տեառնընդառաջ անունով, եւ այստեղ եպիսկոպոս է նշանակում Կումս անունով աշակերտին: Վանանդ գիւղում (այժմ նոյնպէս Վանանդ, Օրդուբադի շրջանում), որտեղ վախճանւում է նրա Լուսիկ անունով աշակերտը, նրա գերեզմանին մատուռ է շինում: Այնուհետեւ մի բագին՝ հեթանոսական տաճար է կործանում եւ նրա տեղը կառուցում է սուրբ Թովմայ անունով եկեղեցի[91]: Կումս եպիսկոպոսի մահից յետոյ նրա մարմինը թաղել են այդ եկեղեցու մերձակայքում եւ վրան մատուռ են կառուցել՝ Կումսի կամ Ամենափրկիչ անունով: Այս ամենը, ի հարկէ, ուղեկցւում է հրաշքներով՝ հիւանդների առողջացմամբ եւն: Մէկ այլ հատուածում Ստեփանոս Օրբէլեանը գրում է. «Սուրբ, անբիծ, անարատ եկեղեցիս Հայոց՝ անբասիր եւ անշաղախ հարսնս երկնաւոր Փեսային, տնկեալս եւ հիմնադրեալս է սրբոց առաքելոցն Թադէոսէ եւ Բարդուղիմէոսէ...»[92]:

Ստեփանոս Օրբէլեանի համար պէտք է որ ծանր լինէր Արտազի Թադէոսի վանքը Առաքելոց վանք անուանելու արմատացող սովորոյթը, յատկապէս Արտազի թեմում

88 *Թուղթ Կոստանդնեայ կաթողիկոսի հայոց*, էջ 504:

89 **Խաչիկեան Լ.**, *Արտազի հայկական իշխանութիւնը եւ Ծործորի դպրոցը*,- «Բանբեր Մատենադարանի», թիւ 11, Երեւան, 1973, էջ 133:

90 Անդ, էջ 134:

91 *Պատմութիւն նահանգին Սիսական*, էջ 21:

92 Անդ, էջ 480:

Զաքարիա եպիսկոպոսի կառավարման շրջանում, ով մեծ քաղաքական կշիռ եւ հեղինակութիւն ունէր, ի թիւս այլոց, նաեւ Առաքելոց աթոռի հեղինակութեամբ[93]: Ինչպէս գրում է Լ. Խաչիկեանը, «Զաքարիան իրեն համարում էր հիմնականում Թադէոս առաքեալի յաջորդը, բայց ըստ հարկի պճնւում էր նաեւ Բարթուղիմէոսի եւ Սիմոնի հեղինակութեամբ, կոչուելով նաեւ առաքելոց եպիսկոպոս»: Սիւնեաց թեմի առաջնորդ Ստեփանոս Օրբէլեանը պէտք է որ ինքն իրեն Առաքելական աթոռի շարունակող համարէր Բարթուղիմէոս առաքեալի գործունէութեան հետեւանքով եւ իրեն կողոպտուած զգար «Բարթուղիմէոսի աթոռին» նոյնպէս յաւակնող Զաքարիայի կողմից: Բայց ամեն ինչից զատ Զաքարիան միացել էր «կաթոլիկական կուսակցութեանը», այսինքն՝ Կիլիկեան Հայաստանում ամրացած «լատինասէր» քաղաքականութեան կողմնակից կաթողիկոսների, բարձրաստիճան հոգեւորականների ու աշխարհիկ իշխանութեան ներկայացուցիչների խմբին, եւ նոյնիսկ ընդունել էր կաթոլիկութիւնը, իսկ Օրբէլեանն ինքը եւ առհասարակ Սիւնեաց եպիսկոպոսներն արմատական դիրքորոշում ունէին ազգային եկեղեցու աւանդոյթները պահպանելու հարցում:

Իսպանացի դոմինիկեան հոգեւորականն, միսիոներ Ժուրդեն դէ Սեւերակը 1320 թ. Հնդկաստան գնալու ճանապարհին անցել է Հայաստանով, եղել է նաեւ Արտազում եւ գրել հետեւեալը. «Մեծ Հայքը շատ է տառապել: Այստեղ տառապալի վախճանով նահատակուել են երեք առաքեալներ Բարթուղիմէոսը, Սիմոնը եւ Յուդան[94]: Տեսել եմ այն գնդանը, որտեղ տանջուել են Սիմոնը եւ Յուդան, եւ աղբիւրները, որոնք առաքելական գաւազանով ժայթքել են կենդանի քարից: 8, 10, 17 անգամ գաւազանը կպել է քարին, եւ հիմա այստեղ այդքան էլ աղբիւրներ կան, եւ դրանց մօտ կառուցուած է մեծ եւ գեղեցիկ եկեղեցի»[95]: (Խօսքը Արտազի Ս. Թադէոս եկեղեցու մասին է – Հ. Խ.): Ակնյայտ է, որ տարածքում ակտիւօրէն պատմւում եւ տարածւում էին առաքեալների մասին աւանդազրոյցները, դրանք դառնում էին քաղաքական ծրագրերի հիմնաւորումներ, առաքեալների անցած վայրերը՝ ուխտավայրեր, տարածքի վերաբերեալ ժողովրդական գիտելիք, նոյնիսկ պոէզիայի նիւթ:

Բարթուղիմէոսի հայաստանեան առաքելութիւնը, մասնաւորապէս նաեւ այդ առաքելութեան դրուագները Աղբակ գաւառի «Հոգեաց վանքում» եւ Բարմայ-Ուրբանիս քաղաքում «որ այժմ Աղբակ կոչի», ներկայացնում ու գովերգում է XVI-XVII դդ. վանեցի բանաստեղծ Ներսէս Մոկացին «Ներբողէան Վիպասայ[նա]կան ի փոխումն Աստուածածին Կուսին եւ յաղագս պատկերին սրբոյ, որ բերեալ յանգուցաւ [տ]եսչութեամբ Հոգոյն ի սահմանս Անձեւացեաց, ի տեղին կոչեցեալ Հոգոց Վանք»[96]: Մոկացին ներբողեանում ներկայացնում է Բարթուղիմէոսի Հնդկաստանից յետոյ Հայաստանի ընտրութեան կարեւորութիւնը, որպէս «Հոգու տնօրինութիւն», թուարկում է Հայաստանի այն վայրերը, որտեղ նա գործել է, ում վրայ ազդել է:

Այն ինչ Հոգտյն տնօրինեալ
Բարդուղիմէոս յետոյ հասեալ՝
Այն որ ի Հայս շրջագայեալ
Եւ ընդ Թովմայի Հնդիկն գնացեալ:

93 **Խաչիկեան Լ.**, *Արտազի հայկական իշխանութիւնը եւ Մորմորի դպրոցը*, էջ 146:

94 Յուդան Թադէոս առաքեալի մինչառաքելական շրջանի անունն էր:

95 **Журден де Северак.** *Описание чудес,*- После Марко Поло. Путешествие в страны трех Индий, Москва, «Наука», 1968, с. 137.

96 **Ներսես Մոկացի**, *Բանաստեղծութիւններ*, Աշխատասիրութեամբ՝ Ա. Դոլուխանեանի, Եր.: «Սովետական գրող», 1985, էջ 77-143:

Առեալ ի սում մեծի նստէր
Եւ եղկելով գանձն կոծէր,
Յողջոյն սուրբ մօրըն փափաքէր,
Ընդ օրհնութիւնս տոչորէր։

Կրկին ի սում նա մտանէր,
Որ եւ մարմնոյն ոչ ժամանէր,
Խղճիւ մտացն աւաղէր
Եւ անձամբ գանձն ըստգտանէր։

Վասն այս էր սում **Բարդուղէմին**,
Զի լուաւ զօրհներգութիւն,
Զոր հնչէին դասք սրովբէին
Եւ ոչ զդին ի տապանին։

Մինչ ի Հոգոյն բան ազդեցաւ՝
Գնդին սրբոյ յայնժամ ցուցաւ,
Նշխար փայտին, որ շնորհեցաւ՝
Բարդուղիմայ վիճակեցաւ։

Ետուն նմա մխիթարիչ,
Առ ընկալաւ իբր սփոփիչ,
Երկրպագեաց սուրբ համբուրիւ
Զտրտմութեանցն ապաքինիչ։

Անդրէն յօքունց ախտաժետաց
Հրէաստանէն եւ որք յեկաց,
Անդորրութիւն գտան վշտաց
Սուրբ պատկերէն եւ յօծանաց։

Ապայ զեղբարըն ողջունեալ,
Ընդ արեւելս կրկին դիմեալ,
Ի վիճակն պարտ էր գնալ,
Յոր Սանատրուկ զԹադէ սպանեալ։

Զանդրժելի գանձն բարձեալ
Ընդ միջերկրայս տարակացեալ,
Զվիճակաւն այնու զանցեալ
Ընդ մոգաստանս գնայր դարձեալ։

Մինչ ի քաղաքըն Խորասան
Աթոռ նոցայ արքայութեան,
Ուր եւ շիջոյց զկրակարանն
Եւ լոյս կանգնեաց հրոյն փոխան։

Եւ զլուսատուն մարդկան հոգւոց
Արեգականն ընդդէմ կացոյց՝
Զակն լուսոյ այս փոքրուածոյս
Երէք ժամաւ խաւարեցոյց։

Բայց ապառաժն անպտղական
Ոչ աճեցոյց ըստ սուրբ սերման,
Միայն իւթից որք ընտրեցան
Եւ ի նմանէ մկրտեցան։

Նոքօք դառնայ ի նոցանէ,
Կրկին ի Հայս դարձեալ դիմէ,
Ի Գողթ գաւառն մտանէ,
Զբազումս ի Տէր դարձուցանէ։

Զանբիծ հաւատն անդ հաստատեաց,
Զարսն նոցայ գլուխ կարգեաց,
Առեալ զոմանս, որք ի կանանց,
Եկեալ յերկիրն Անձեւացեաց։

Առ ի համբաւ քարի միոջ,
Յոր էր աղուէսն ամրացեալ յօրջ,
Ընդ Անահտայ բնակէր տիկնոջ՝
Մարդախոշոշ կռանագոչ։

Քանզի փայլակն ի վայր անկեալ,
Ի Դարբնաց քարս արկեալ,
Զդեղն, որ կազմէր ախտիւ խառնեալ,
Յուտութ ուլունս մակարդացեալ։

Որպէս եւ նաւն պատմական
Ուսուցանէ մեզ միաբան
Եւ զվիշապին հին մեքենայն
Կիպրիանոս այր սրբազան։

Զի հին վիշապն անդ բունէր
Եւ կռանին համաձայնէր.
Բախմամբ թնդմանն ահ արկանէր,
Զնոսայ յուշոյ միշտ խափանէր։

Իսկ արք տեղւոյն զերդ խելագար
Անդ խոնէին դեգերաբար,
Թարախածոր առեալ ծրար
Եւ կոչէին Դարբընաքար։

Յայս վայր հասեալ առաքելոյն
Փութով խափան առնէր գործոյն,
Դարբնական բախման թընդոյն,
Որ գործօնեայք էին նիւթոյն։

Եւ զդիցամայրն խորտակեաց,
Զբոնութիւն քակեալ դիւաց,
Քարանձաւէն յայն հալածեաց
Եւ սրբութեան տեղիք գործեաց։

Իսկ շար զինուորն գունդ առնէին
Ընդ հիւսիսի բարձրու լերինն,
Վիրգս ի վիմացն յայն հոսէին,
Ընդ այն եւ ճիշս արձակէին:

Բարդուղիմէայ զայն տեսանէ,
Բարձրաւանդակ լեառն ելանէ,
Խաչ փոքրիկ անդ օծանէ,
Քարիւ մի զքաջքն արտահանէ:

Զոր եւ յետոյ սուրբն Գրիգոր
Զարձանն առեալ պահէր ընդ իւր,
Մինչ Տրդատայ մահուանն յաւուր
Երեսին եդ պսակաւոր:

Կանգնէ եւ անդ կրկին նշան
Յստորոտով լերինն յայն,
Կարկառակոյտ մի սուզական
Զեռնադրեալ ի մեծ արձան:

Եւ է տեղին յոյժ լեռնափակ,
Պատեալ վիմօք երկնադիտակ,
Իսկ մէջ ծոցոյն հարթայատակ,
Հոսանահերձ վհատակ:

Զի Տիգրիսին մեծի կայլակ,
Որ յԱդենայ քառորդ վտակ,
Յասմամբ խաղայ միշտ համարձակ
Ընդ գոգ հովտին արագ-արագ:

Մերձ Կանգուար մեծ ամրոցին,
Որ Ագռաւուց քար կոչէին,
Ուստի լերանցն ջուրք հոսէին
Եւ գետանան ընդ գարնան մասին:

Գայ զառիվայր առապարին,
Անցեալ ընդ հիմն տաճարին,
Ընդ արքային շիրմով պարին,
Ապա ի մի խառնեալ յարին:

Հիմն արկանէ անդ հաւատոյ
Ընդ խորանին կառուցելոյ,
Շինեալ յանուն Կուսին հոգայ
Եւ պատկերին, որ անդ սրբոյ:

Արդ առաքեալ Բարդուղիմին
Կառուցանէ իւրով ձեռին,
Փոքր ձեւով զեկեղեցին
Եւ անուանէ Աստուածածին:

Զտեղին Հոգաց վանք անուանէ
Եւ ի քրեբս կանայս յանձնէ,
Խրճիթ փոքրիկ նոցայ շինէ
Եւ ի դերբուկս բաժանէ:

Կացուցանէ զքոյրն Յուսիատայ՝
Մայրապետ կրօնից՝ գլուխ նոցայ,
Զքոյրն Օրմզդայ եւ Մարիվտրայ
Եւ զայլ կանայսն յետ նոցայ:

Եւ ինքն ի Հայս դարձեալ երթայ
Ի յՈւրբանիս քաղաք Բարմայ,
Որ այժմ Աղբակ կոչի նորա
Յովբիանոս անուանի նա:

Վասն սրբոյ առաքելոյն,
Որ շարշարեալ եղեւ ի նոյն,
Քրով հարեալ յերկարագոյն,
Ըստ այսմ կոչի անուն տեղւոյն:

...

Իսկ Մարիամ առանձնացեալ
Քոյր Յուսիատայ՝ Յուսկանն կոչեցեալ,
Յայն կոյս գետինն մեծի անցեալ,
Առ ոտս փոքու վիմի կացեալ:

... Ինքն հետեւեալ սրբոց յետոց,
Շինեալ խրճիթ աղօթանոց,
Գագաթ վիմին ամրակառոց,
Որ եւ կոչի քար Դարբնոց:

. . . . . .

Այնուհետեւ բանաստեղծը պատմում է, որ Հոգեաց վանքը Սուրբ Աստուածածնի շնորհիւ շարունակում է բուժել հիւանդներին, եւ փառաբանում է նրան:

Վասպուրականի Աղբակ գաւառը եւ Աղբակի վանքը, որտեղ, ըստ աւանդութեան, նահատակուել ու թաղուել է Բարթուղիմէոս առաքեալը, XVI-XVII դդ. շարունակում էր լինել ժողովրդական սիրուած ուխտավայր: 1647 թուականին Սուրբ Բարթուղիմէոսի վանքը եւ Վարագավանքը ընդհանուր միաբանութիւն են կազմել: XIX դարում վանքում բացուել է վարժարան, վանքի թեմն են կազմել Աղբակ, Գաւառ, Ջուլամերիկ, Սալմաստ եւ

Ուրմիա գաւառները՝ 100-ի հասնող հայաբնակ գիւղերով: «Հոգեաց վանքը» XIX դ. կէսերին, չնայած հայ բնակչութեան նուազմանը, դեռ գործում էր որպէս կարեւոր ուխտատեղի: Ղ. Ալիշանի տեղեկութեամբ՝ «Անձեւացեաց գաւառում... կայ անուանի եւ հին ուխտատեղի Հոգուաց վանք շինեալ ի Բարթուղիմեայ առաքելոյ *ի պատիւ Վերափոխման Տիրամօրն, զորոյ եւ զպատկեր փայտեայ զձեռագործ Յովհաննու Աւետարանի՝ եդ ի նմա, եւ ցարդ թուի լինել անդ»[97]: XIX դ. 60-ական թթ. Գարեգին Սրուանձտեանցն այցելել է գործող վանքը եւ գրել. «...Վասպուրական նահանգի ութերորդ գաւառն է Անձեւցիք, որուն մէջն է* Հոգուոց վանքը... *Քիչ մը յառաջ գալով կը տեսնենք այն բազմաքար ըսուած տեղը, ուր մեծամեծ քարեր դիզուած են. ասոր վրայի լեռն է Գրգուռը, յոր ապաստանեցան դեւքն եւ ապա* հալածուեցան շնորհիւ Ս. Խաչին՝ ի ձեռն Բարդուղիմէոսի առաքելոյն... *Վանից Արեւելեան լեռ իւր ստորոտին մերձը ապառաժ մը ունի, զոր* Դարբնաքար կը կոչեն կամ Դիւաց քար...*»: Ըստ Սրուանձտեանցի՝ վանքի սրբազան մասունքներից էին Քրիստոսի Գեղարդը, Սուրբ Նշան Կենաց փայտը, Սուրբ Գէորգ զօրավարի մատը, վանքն ինքը շատ համբաւաւոր էր, ուր գալիս էին մեծաթիւ ուխտաւորներ[98]: 1915 թ. հայերի Ցեղասպանութիւնից յետոյ շրջատարածքը լիովին հայաթափուել է. Վանքից այժմ մնացել են աւերակներ:*

1734 թ. Կ. Պոլսում հրատարակւում է Թովմայ Ագուլեցու Պատմութիւնը, որում՝ «Վասն գնալոյ սրբոյ առաքելոյն Բարդուղիմէոսի ի յԱգուլիս եւ վասն գնոսայ լուսաւորելոյն եւ զամենագով վանքն նոցայ շինելոյն յանուն սրբոյ առաքելոյն Թումայի» բաժինը մասամբ կրկնում է երկու առաքեալների գործունէութիւնը Մեծ Հայքում, այդ թւում՝ Բարթուղիմէոսի քարոզչութիւնը մասնաւորապէս Ագուլիսում: Այստեղ հեղինակը գրում է, որ Թովմաս սուրբ առաքեալը Հնդկաստանում քարոզչութեան ընթացքում իմանում է, որ Մեծ Հայքի յատկապէս երկու գաւառ ծածկուած են կռապաշտութեան քօղով: Տխրում է, որ Հայկից սերուած զարմը չի ճանաչում Աստծուն: Նամակ է գրում այդ ժամանակ Պարսկաստանի Խորասանում քարոզչութեամբ զբաղուած Բարթուղիմէոսին եւ խնդրում, որ նա շտապի մեկնել Գողթան գաւառ եւ համայն կուռ Հայաստան: *Բարթուղիմէոսն իսկոյն անցնում է Երասխ գետը եւ Յորտըվար քաղաքում (ներկայիս* Օրդուբադ – *Հ. Խ.) սկսում լուսաւորել մարդկանց: Եկեղեցի է կառուցում, որն այժմ պարսից ազգի մօտ է եւ նրանք որպէս մզկիթ են օգտագործում,- գրում է Թովմայ Ագուլեցին: Ապա փառաւոր տաճար է կառուցում, եւ որովհետեւ տեղեկութիւն է ստանում, որ Թովմայ առաքեալը հնդիկների մօտ նահատակուել է, վանքը կոչում է Թովմայի անունով: Կոմս անունով առաքեալին տեսուչ է կարգում, իսկ նրա մահից յետոյ մարմինը թաղում է տաճարի մօտ, եւ Ամենափրկիչ է անուանում: Այստեղ շատերին բժշկելուց յետոյ Բարթուղիմէոսը գնում է Վանանդ, եկեղեցի կառուցում, ողջ քաղաքը լուսաւորում: Բարթուղիմէոսը Արարատեան Մեծ Հայքում, այդ թւում Նախիջեւանի Գողթան երկրում շատ եկեղեցիներ է կառուցում, Արտաշատում խաչ է կանգնեցնում[99]: Այնուհետեւ հեղինակը սկսում է Թովմայ առաքեալի փառաբանութիւնը:*

1784 թ. Վենետիկում հրատարակւում է Միքայէլ Չամչեանի «Պատմութիւն Հայոց» գրքի առաջին հատորը, որում վարդապետն անդրադառնում է նաեւ Բարթուղիմէոս առաքեալին: Ըստ այս շարադրանքի՝

97 **Ալիշան Հ. Ղ.**, *Տեղագիր Հայոց Մեծաց*, էջ 53:

98 **Սրվանձտեան Գ.**, *Երկեր*, հտ. 2, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1982, էջ 13:

99 **Թովմա Ագուլեցի**, *Պատմութիւն Թովմայի Առաքելոյն*, Կ.Պոլիս, Տպ. Մարտիրոս Սարգսեանի, 1734, էջ 54-63:

[Թադէոսից յետոյ] Հայաստան եկաւ Բարթուղիմէոս առաքեալը՝ իր հետ բերելով արդէն մահացած Տիրամօր փայտաքանդակ պատկերը, որի զօրութեամբ հալածում էր դեւերին: Այդ գործը շատ նկատելի էր յատկապէս Դարբնաց քար կոչուող վայրում, որտեղ կար Անահիտ չաստուածուհու կուռքը: Այստեղ առաքեալը կանգնեցրեց մի խաչ եւ գետի ափին կառուցեց Սբ. Աստուածածին անունով եկեղեցի: Այնուհետեւ այդտեղ թողնելով իր աշակերտներին՝ ինքն աւետարանում էր Ստորին Հայքում, որտեղ շատերին հաւատի բերեց, այդ թւում թագաւոր Սանատրուկի թագուհի անունով քրոջը եւ հազարապետին: Այս լսելով՝ Սանատրուկը Արեւաբանոս քաղաքում սպանեց ու մաշկահան արեց Բարթուղիմէոսին, մի վայրում, որը յետոյ կոչուեց Բարթուղիմ, իսկ աւելի ուշ՝ Աղբակ[100], եւ նրա մարմինն այնտեղ թաղեց: Ժամանակ անց մարմինը տեղափոխուեց մարտիրոսների քաղաք՝ Նիրկերտ[101] (ներկայիս Թուրքիայի Հանրապետութեան Դիարբեքիր վիլայեթի Սիլուանի գաւառ – Հ. Խ.):

1874 թ. Վենետիկում հրատարակուած «Վարք եւ վկայաբանութիւնք սրբոց: Հատընտիր քաղեալք ի ճառընտրաց» ժողովածոյի Ա հատորի 200-211 էջերում ներկայացուած է «Վկայաբանութիւն սրբոյն առաքելոյն Բարդողոմէոսի» բնագիրը: Այն վաղուց դասականացուած պատմութիւնն է. Քրիստոսի 12 առաքեալների հետ միասին Երուսաղէմում Սուրբ Հոգու կողմից Բարթուղիմէոսը ստանում է ցաւերից, հիւանդութիւններից բուժման եւ սատանայի հալածանքներից մարդկանց ազատելու շնորհ, եւ գնում է իրեն վիճակ ընկած երկրներն ու ժողովուրդներին լուսաւորելու, դարձի բերելու եւ մկրտելու: Թովմայ առաքեալի հետ գնում է նախ՝ հնդիկների սահմանի մօտի Եղեմ քաղաքը, որտեղ յաջողութեամբ ապացուցում է քրիստոնէութեան ճշմարտացիութիւնը, շատերին դարձի է բերում: Այստեղից գնում է «ի կողմս Մարաց եւ Ելիմացւոց», բայց այնտեղ անյաջողութեան է մատնւում. «ոչ կարացաւ անդ կատարել զօրութիւնս»: Սակայն տեղում ոմանք միանում են Բարթուղիմէոսին եւ նրա հետ միասին գնում «ի Բուստր քաղաք Խորին Ասորւոց»: Այստեղ առաքեալը կենդանացնում է մի մահացած պատանու, ինչի հետեւանքով մեծ յաջողութիւն է ունենում, ամբողջ ազգը դառնում է Քրիստոսի հաւատացեալ եւ մկրտւում է: Բուստրից առաքեալը գնում է «յաշխարհն Գերմանիկեցւոց»[102], շատերին դարձի բերում, բայց հալածւում է թագաւորի կողմից: Այստեղից

100 «Աղբակ, Ալբաղ, Ալբան, Ալբանոս, Հաղբակ...-ը» գաւառ էր Մեծ Հայքի Վասպուրական նահանգում՝ Զաւ (Մեծ Զաբ) գետի վերին աւազանում: Այստեղ էին գտնւում Արծրունի հայ նախարարների իշխանանիստ Հադամակերտ գիւղաքաղաքը եւ Ս. Բարդուղիմէոս յայտնի վանքը (տե՛ս **Յակոբեան Թ. Խ., Մելիք-Բախշեան Ստ. Տ., Բարսեղեան Յ. Խ.**, *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան*, հտ. 1, Երեւան, 1986, էջ 161): Աղբանոս անունով գիւղ կար Դերսիմում, Մնձուր լեռան լանջին, Օվաճիկի դաշտում (Անդ, էջ 162):

101 **Զամչեանց Հ. Միքայէլ**, *Պատմութիւն Հայոց*: Ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցամ Տեառն 1784, հտ. Ա, Վենետիկ, 1784, էջ 297-298:

102 Գերմանիկը Մարաշ քաղաքի երկրորդ անունն է՝ Գերմանիկ(է): Մ. թ. I դարում՝ առաքեալների գործունէութեան շրջանում Մարաշը Կոմագենէի թագաւորութեան կազմում էր: Հռոմէական Տիբերիոս կայսեր Գերմանիկոս անունով զօրապետը 17 թուականին Հռոմէական կայսրութեանն է միացրել Կապադովկիայի, Կոմագենէի եւ Կիլիկիայի թագաւորութիւնները: 18 թուականին նա Հայաստանի թագաւոր է կարգել Պոնտոսի Պոլեմոն թագաւորի որդի Զենոնին (որին հայերը վերանուանել էին Արտաշէս): Մարաշ-Գերմանիկէն, հայերից զատ, զգալի քանակութեամբ ասորի եւ հրեայ բնակչութիւն ունէր: Բիւզանդական կայսր Յուստինիանոսի կողմից հակաքաղկեդոնական լինելու պատճառով աքսորուող եպիսկոպոսներից մէկն էր՝ «Թումա Գերմանիկիոյ, որ է Մարաշ» (տե՛ս *Ժամանակագրութիւն Տեառն Միխայիլի Ասորւոց պատրիարքի*, էջ 220): Մարաշի շուրջը ընդհուպ XX դարի սկզբները մեծ քանակութեամբ ճգնարաններ կային, որոնք վկայում են քրիստոնեաների դէմ հալածանքների

գնում է «յերկիրն Պարթեւաց եւ Մարաց եւ Էլիմացւոց», կարողանում է մարդկանց լուսաւորել: Ապա «եւ անցեալ գնաց ի Գողթն գաւառ Հայոց», որտեղ շատերին է մկրտում: Այստեղից գնում է Հայոց Հէր եւ Զարեւանդ գաւառները, լուսաւորում է ու մկրտում: Այնուհետեւ «ինքն գնացեալ եկն Յուրբիանոս քաղաք Հայոց», շատերին բժշկում է եւ մկրտում, այդ թւում թագաւոր Սանատրուկի քոյր Ոգուհուն... Զայրացած թագաւորը Տերետիոս անունով հազարապետին ուղարկում է առաքեալին իր մօտ բերելու, բայց հազարապետը դառնում է Բարթուղիմէոսի հետեւորդը: Թագաւորը հրամայում է առաքեալին ու նրա հետեւորդներին ձերբակալել, եւ երբ նրանց բերում են, Բարթուղիմէոսին դաժանաբար խոշտանգում են եւ նա վախճանւում է, իսկ Ոգուհուն, հազարապետին ու դարձի եկած այլ հետեւորդների սպանում են սրով[103]:

Սարգիս Զալալեանցը 1850-ական թթ. իր շրջագայութեան ժամանակ երկու առիթ է ունեցել «հանդիպելու» Բարթուղիմէոս առաքեալի յիշատակներին, որոնցից մէկը Արցախում, Աւետարանոց գիւղում, միւսը Սիւնիքում. «եկայ Աւետարանոց գիւղաքաղաք, որը գտնւում է Արցախ աշխարհի Վարանդայ նահանգում, մի բլրի գառիվայր ստորոտին... Այստեղ կայ նաեւ Թադէոս եւ Բարդուղիմէոս առաքեալների նշխարների մասունքներ[ով] [տուփ], որոնց վրայ գրուած է. «այս սուրբ նշխարատուփը Թադէոս եւ Բարդուղիմէոս առաքեալների յիշատակն է. ՌՃՄ (1150) թուին»[104]: *Աւետարանոցի Սուրբ Աստուածածնի եկեղեցում XIX դարավերջին «առաջին լուսաւորիչներ Թադէոսի եւ Բարդուղիմէոսի» մասունքները տեսել է նաեւ Մակար Բարխուդարեանցը*[105]: *Բարթուղիմէոսի մասունքները նա տեսել է նաեւ Շուշիի Ագուլեցւոց Սուրբ Աստուածածին եկեղեցում Կենաց փայտի, Ղուկաս եւ Փիլիպոս առաքեալների, Ս. Պանդալիոնի, Գրիգոր Լուսաւորչի, Յովհաննէս Մկրտչի եւ այլ մասունքների հետ: Նոյն եկեղեցում, յիշուածներից զատ, կային «մի արծաթայ միջակ մեծութեամբ խաչի մէջ զետեղուած Թադէոս, Բարդուղիմէոս, Թաւմաս առաքեալների եւ ուրիշ սրբոց մասունքներ»*[106]: *Հասկանալի է, որ Հայ առաքելական եկեղեցու կառոյցները մրցակցում էին առաքեալների առհասարակ, ըստ աւանդազրոյցների Հայաստանում քարոզած առաքեալների մասնաւորապէս, մասունքներն ունենալու հարցում:*

Սիւնիքում «Աստապատում մեծահրաշ կիրակիին ես կատարեցի սոսկալի խորհուրդը, [ապա] ձեռնադրեցի երեք եպիսկոպոս, առաջինը Սպահանցի Գէորգ վարդապետին՝ իրենց առաջնորդ Աստուածատուր վարդապետի եւ իշխանների խնդրանքով, միւսին՝ Սուրբ Բարդուղիմէոս առաքեալի վանքի համար, որ Հորմում է՝ ըստ այն երկրի եւ վիճակի խնդրանքի»,- *գրում է Ս. Զալալեանցը*[107]: *Այնպէս որ ներկայիս Ադրբեջանի տարածքում Բարթուղիմէոսի մասունքները վաղուց կային, միայն թէ դրանք, ի հարկէ, Բաքու քաղաքում չէին. հայկական Արցախում եւ Նախիջեւանում էին:*

XIX դարի հեղինակները տարբեր ձեւերով շարունակում են անդրադառնալ Բարթուղիմէոսին: Երուանդ Լալայեանը

շրջանում քրիստոնեաների մեկուսանալու երեւոյթի մասին (տե՛ս *Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն*, Երկասիրեց **Գր. Հ. Գալուստեան (Կիլիկեցի)**, Լոնկ Այլընտ սիթի, 1988, էջ 197-199):

103 *Վարք եւ վկայաբանութիւնք սրբոց*: Հատընտիր քաղեալք ի ճառընտրաց, Վենետիկ, հտ. Ա, 1874, էջ 200-211:

104 **Զալալեանց Ս. եպս.**, *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան*, Եր., ԴԱԼԷ, 2016, էջ 433-434:

105 **Բարխուդարեանց Մ. եպս.**, *Աղուանից երկիր եւ դրացիք. Արցախ*, Երեւան, «Գանձասար», 1999, էջ 209:

106 Անդ, էջ 235:

107 **Զալալեանց Ս. եպս.**, *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան*, էջ 497:

գրում է. «Գողթան գաւառը իրաւամբ նախահաւատ է կոչւում, որովհետեւ սա եւ Սիւնիքը ամենից առաջ են ընդունել քրիստոնէութիւնը: Այստեղ քարոզել է Սուրբ Բարդուղիմէոս առաքեալը, գուցէ նաեւ Ս. Թովման: Ատրպատականից գալով՝ Ս. Բարդուղիմէոսը մտել է Գողթն, այստեղ շինել է մի եկեղեցի, որ կոչուել է Տեառն ընդ առաջ, *եւ բոլորովին կտրել է Որդուատի վնասակար ջրերը, մկրտել է Շաբ իշխանին ամբողջ տնով եւ կարգել է իր աշակերտներից մինին Կումսին, որից եւ սկիզբ է առել Գողթնի եպիսկոպոսութիւնը: Մինչեւ Սուրբ Լուսաւորչի քարոզչութիւնը Գողթնում յիշւում են Բաբելաս եւ Մուշէ...»*[108]: Տեառն ընդ առաջ *եկեղեցու հիմքերի վրայ, ինչպէս գրում է Ե. Լալայեանը, «այժմ բարձրանում է պարսից գլխաւոր մզկիթը»*[109]: *Նոյնն է հաստատում նաեւ ռուս հեղինակը գրելով, որ Օրդուբադում «համարեայ բոլոր փողոցներում մզկիթներ կան, բայց մեծ [մզկիթները] միայն երկուսն են: Դրանցից մէկը, ինչպէս ասում են, վերափոխուած է Հայկական եկեղեցուց»*[110]:

Տեղին նշենք, որ ըստ Ղ. Ալիշանի, Բարթուղիմէոսի կառուցած Տեառն ընդ առաջ *եկեղեցին հազիւ թէ Որդուատում (Օրդուբադ) գտնուէր, քանի որ նրա կարծիքով, այդ աւանը Գողթնի ծաղկուն շրջանում կամ չկար, կամ աննշան բան էր, իսկ առաքեալի գործունէութիւնը պիտի սկսուէր Գողթնի կենտրոնական բնակավայրում, որը գուցէ հէնց Գողթն էլ կոչուել է*[111]:

Ուշագրաւ են Բարթուղիմէոսի անունը յիշատակող հայ ժողովրդական աղօթքները: Դրանցից մէկում, օրինակ, որը գրանցուել է Այնթապում, նրա անունը յիշւում է Ստեփանոս նախավկայի, Աստուածածնի, Պօղոս եւ Պետրոս առաքեալների կողքին, բայց Պօղոսը եւ Պետրոսը նոյնականացւում են որպէս կաթոլիկների առաքեալներ, իսկ Բարթուղիմէոսը որպէս Աղբակի. «Հազարական Ստեփանոս, Հազարումէկ Աստուածածին, Մըջ ֆռանկաց՝ Պօղոս Պետրոս, Հաղբակայ Բարդուղիմոս, Դիարբեքիրայ Սուրբ Կիրակոս, *էն գերեզման, ինչ էլաւ լուս Մարմնաւոր արժան անես մեղաւորս»*[112]: *Այս աղօթքն ասւում էր քնելուց առաջ: Ըստ աղօթքը մեկնաբանած Ս. Յարութիւնեանի «Աղօթքում դիմում է արւում սրբերին խնդրելով, ըստ եկեղեցական աւանդութեան, նրանց գերեզմաններին իջած երկնային լոյսի աստուածային զօրութեանն արժանացնեն նաեւ քնողի մարմինը, որպէսզի այն գիշերային խաւարից ապահով մնայ եւ կրկին վերակենդանանայ»*[113], *քանի որ «քունը ժամանակաւոր մահ է գիտակցուել, իսկ անկողինը գերեզման: Ուստի, ըստ աղօթքի, քնողը իր հոգին ու մարմինը երեկոյեան ի պահ է յանձնում Աստծոն ու հրեշտակներին, մինչեւ առաւօտեան բարի լոյսի ծագումը»*[114]: *Այնթապում աղօթքն ասողին աշխարհագրօրէն առաւել մօտ էին «Հաղբակայ» Բարթուղիմէոսն ու Դիարբեքիրի Կիրակոսը:*

Մէկ այլ աղօթքում, որն ասւում էր ջերմ հիւանդութեան դէմ, յիշւում է Բարթուղիմէոսի դեւերին քշելու զօրութիւնը, եւ յիշատակւում է «Դատունա» անունով լեռ. «Սուրբ առաքեալն Բարդողիմէոս էլ ի լեառն Դատունայ, ետես անդ զդեւն ջերմոց

108 **Լալայեան Ե.**, *Նախիջեւանի գաւառ*, մասն Ա. Գողթն կամ Օրդուբադի ոստիկանական շրջան, Թիֆլիս, 1904 (Կրօնական զարգացումն,- Ազգագրական Հանդէս, գիրք XI), էջ 269:

109 Անդ, էջ 296:

110 **Г[ригорьев] В. Н.**, *Статистическое описание Нахичеванской провинции*, Санкт-Петербург, 1833, с. 194.

111 **Ալիշան Հ. Ղ.**, *Սիսական: Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի*, Վենետիկ, 1893, էջ 316, 318:

112 **Յարութիւնեան Ս.**, *Հայ հմայական եւ ժողովրդական աղօթքներ*, Երեւան, 2006, էջ 178:

113 Անդ, էջ 402-403:

114 Անդ, էջ 296:

եւ կամէր հալածել զնա անդի: Եւ նա ըստորոտ ձայնիւ ասաց ցսուրբն.- Զի արդ հալածես զիս աստէն. յորոց վերայ անուն սրբոյ հրեշտակապետին Միքայէլի յիշեսցի՝ հալածեցայց յայնմանէ: Հալածեսցի անուամբ Հօր եւ սրբոյս պիղծս ծառայիս Աստուծոյ [տե՛ս ՄՄ, ձեռ. թիւ 6677, թ. 8ա (26)]»[115]: «Դատունա» անունով որեւէ բարձունք, լեռ ինձ յայտնի չէ, բայց «Դատեան» անունով լեռնագագաթ կար Հայկական պար լեռնահամակարգում, Եփրատի ձախ ափին, Մարիամ լեռնագագաթի հարեւանութեամբ[116], «Դատեմ», «Դատեմի վանք», «Դատմա» անուններով յայտնի էր Մարիամ լեռան ստորոտում գտնուող գիւղը եւ գիւղի Սուրբ Աստուածածին անունով վանքը, որը, ըստ աւանդութեան, կառուցել էր Թադեւոս առաքեալը[117], այսինքն՝ աւանդոյթով այն առաքելաշէն էր: Ղ. Ալիշանը գրում է, որ Խարբերդի դաշտում կար «Դատեմայ վանք առ համանուն գիւղիս, յանուն Տիրամօր»[118]: XIX դարում Բաղէշի գաւառում, որը Մեծ Հայքի Աղձնեաց նահանգի մի գաւառն էր, գլխաւոր բնակավայրը Վանայ լճի ափին գտնուող Դատուան բնակավայր-նաւահանգիստն էր[119]: Բոլոր դէպքերում աղօթքի տեքստում ժողովրդական յիշողութիւնը Բարթուղիմէոսին յստակ նոյնականացնում է առաքեալի մասին գրաւոր աւանդոյթի տեղանքի հետ:

Շարունակելը, թերեւս, իմաստ չունի՝ Մեր աշխատանքի այս մասում ընդամենը փոքր փորձ է արուել ցոյց տալու, որ Բարթուղիմէոս առաքեալը 2000 տարիների ընթացքում այս կամ այն ձեւով «մասնակցել է» Հայաստանի եւ հայ ժողովրդի քաղաքական, հասարակական, մշակութային կեանքին, նրա անունով բազմաթիւ վանքեր են կառուցուել, դրանք դարձել են թեմերի կենտրոններ, գործել են եպիսկոպոսներ, որոնք մրցակցել են այլ «առաքելաշէն աթոռների» հեղինակութեամբ, դրանց կից գործել են ծխական դպրոցներ, դրանցում տօներ են կատարուել, Բարթուղիմէոսին նուիրուած բազմաթիւ տեքստեր՝ վարքեր, պատմութիւններ, աւանդազրոյցներ են գրուել, նրա հեղինակութեամբ հպարտացել են, մարդիկ նրան աղօթել են, նրա «անցած ճանապարհին ուխտավայրեր են առաջացել, դրանց այցելուները ակնկալիքներ են ունեցել եւ նուիրատուութիւններ են արել եւն: Այլ կերպ ասած՝ Բարթուղիմէոսը Հայաստանի եւ նրա բնակչութեան կեանքի մաս է եղել եւ է առնուազն քրիստոնէութեան ողջ պատմութեան ընթացքում:

Թւում է, որ Բարթուղիմէոս առաքեալի մասին ընդհուպ մինչեւ XX դ. 90-ական թուականները քրիստոնէական մեծ եկեղեցիները՝ կաթոլիկները, յոյն եւ սլաւոն ուղղափառները, բողոքականները հիմնականում կրկնում են նոյն պատմութիւնը կամ այդ պատմութեան տարբեր դրուագներ: Նրանք յատուկ հակադրութիւնների նպատակ չունեն, եւ ընտրում են հին աղբիւրների կոնկրէտ հատուածներ կամ առաքելական գործունէութեան դրուագներ: Հարցը, թէ ինչո՞ւ է Ռուս Ուղղափառ Եկեղեցին ջանում Բարթուղիմէոսի վերաբերեալ նոր՝ «ալբանական առասպել» յօրինել/ստեղծել, մնում է անպատասխան: Հասկանալի է, որ առասպելները ծնւում են որոշակի իրավիճակներում եւ որոշակի խնդիրներ լուծելու համար: Բոլոր դէպքերում՝ առասպելներն առանց որեւէ վաւերական հիմքի որեւէ իրական հարց չեն լուծում: Յատուկ ջանքերի դէպքում դրանք, սակայն, կարող են ազդել եւ, ինչպէս տեսնում ենք, ազդում են տարածաշրջանի մշակութային անցեալի

115 Անդ, էջ 283:

116 *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան*, հտ. 2, Երեւան, 1988, էջ 48:

117 Անդ, էջ 47:

118 Ալիշան Ղ. Հ. *Տեղագիր Հայոց Մեծաց*, էջ 43:

119 *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան*, հտ. 2, էջ 48:

զարգացումների մասին մշուշոտ պատկերացումներ ստեղծելու վրայ, ինչպէս նաեւ դրանք որպէս բարոյական հիմք օգտագործելով մշակութային ողջ լանդշաֆտի վերաբերեալ պատկերացումների, բնակչութեան ինքնութեան վերակառուցումների եւ առկայ յարաբերութիւնների վրայ: Բայց եթէ Բարթուղիմէոսի նորածնունդ «ալբանական առասպելի» հիմնական նպատակը Ադրբեջանի տարածքի հայկական մշակութային ողջ ժառանգութիւնը ալբանացնել-ադրբեջանացնելն է, կամ աւելի վատ՝ ոչնչացնելը, ինչն արդէն իսկ տեղի է ունենում, ապա դա կարող է եւ պէտք է միջազգային իրաւական քննութեան ենթարկուի:

Առայժմ խնդիրը երբեմն նոյնիսկ արտառոց դրսեւորումներ է գտնում: Այսպէս. Հայ Առաքելական եկեղեցու 2024 թ. միւռոնօրհնէքի արարողութեան ժամանակ Ամենայն Հայոց կաթողիկոսը շրջանցեց Բարթուղիմէոսի անունը յիշատակելով միայն «Տիրոջ կողմից օրհնուած սուրբ իւղ»-ը Հայաստան բերած Սուրբ Թադէոս առաքեալի անունը (հմմ. «Սիրելիներ, Սրբալոյս Միւռոնի օրհնութիւնը մեզ յիշեցնում է նուիրական օրերը Հայոց դարձի: Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի ձեռամբ, բիբլիական Արարատի վեհապանծ հայեացքի ներքոյ, մեր ժողովուրդը մկրտուեց եւ օծուեց մեր Տիրոջ կողմից օրհնուած եւ Սուրբ Թադէոս առաքեալի միջոցով Հայաստան բերուած սուրբ իւղով եւ մէկ դարձաւ Քրիստոսով ու իր Սուրբ Եկեղեցիով»)[120]: Մինչդեռ Բարթուղիմէոսի մասին միջնադարեան ողջ հայկական (եւ ոչ միայն հայկական) տեղեկանին գրում է Բարթուղիմէոսի կողմից Հայաստանում արուած մկրտութիւնների մասին: Այլ կերպ ասած, քրիստոնէական աւանդոյթով Բարթուղիմէոսը նոյնպէս Հայաստան էր բերել «մեր Տիրոջ կողմից օրհնուած իւղը»: Խորհրդանշական է, որ «ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնուած 21-րդ դարի չորրորդ Միւռոնը» կոչուեց «դրոշմ ինքնութեան»[121]: Արդ՝ Հայոց քրիստոնէական ինքնութիւնից դո՞ւրս թողնուեց Ս. Բարթուղիմէոս առաքեալը[122]:

120 Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը միւռոնօրհնութեան արարողութեան առիթով,- https://www.armenianchurch.org/hy/news/28-09-2024/11682 (վերջին այցելութիւնը կայք՝ 24.06.2025):

121 Ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնուեց 21-րդ դարի չորրորդ Միւռոնը եւ կոչուեց «Դրոշմ ինքնութեան»,- https://ter-hambardzum.net/orhnvec-21-rd-dari-chorrord-myuroneh/ (վերջին այցելութիւնը կայք՝ 24.06.2025):

122 Խմբ. կողմից.- 1994 թուականին Հռոմի եկեղեցին, արտայայտելով իր «սէրն ու յարգանքը, որ հիմնուած է Ս. Պօղոս եւ Ս. Պետրոս Առաքեալների քարոզչութեամբ հանդէպ Հայ Առաքելական Եկեղեցին, որ հիմնուած է Ս. Բարդուղիմէոս եւ Ս. Թադէոս Առաքեալների քարոզչութեամբ», Հռոմի Ճշխարների գանձարանից Հայ առաքելական Եկեղեցուն յանձնեց Ս. Բարդուղիմէոս եւ Ս. Թադէոս Առաքեալների մասունքները, քանի որ նրանք «հիմնեցին Հայ Եկեղեցին» (տե՛ս «Էջմիածին», 1994, Դ-Ե, էջ 23-26: Նոյն տեղում տե՛ս նաեւ մասունքների վաւերականութիւնը հաստատող վկայագրերը):